ՀՈՎՍԵՓ ԱՎԱԳ
ՔԱՀԱՆԱ ՀԱԿՈԲՅԱՆ

ՃՇՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԲԱՆԱԼԻՆ

2014

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍԲ. ԷՋՄԻԱԾԻՆ

ԻՄ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ ՎԱԶԳԵՆ ՎԵՀԱՓԱՌԻ ՀԵՏ,
ՆՈՐ ՎԵՀԱՐԱՆԻ ԱՌԱՋ, 1991թ.

«ՃՇՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԲԱՆԱԼԻՆ»

ՀՈՎՍԵՓ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ՀԱԿՈԲՅԱՆ

Գրքի կողքի ձևավորումը՝ Մաշտոց Ջոբանյանի

Copyright @ 2013
By Archpriest Fr. Hovsep Hagopian

All right are reserved.
First edition – 2013
Printed in Armenia-Holy Etchmidzin
For information and address
Archpriest Fr. Hovsep Hagopian
1620 N. San Fernando Blvd. # 15
Burbank, CA 91504, USA
e-mail: frhovsepfaith@hotmail.com
www.frhovsep.com

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ Ն.Ս.Օ.Տ.Տ.

ԳԱՐԵԳԻՆ Բ.

ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



Հրամանաւ Տեառն Յովնանու Արքեպիսկոպոսի

Առաջնորդին Հայց. Եկեղեցւոյ Հիւսիսային

Ամերիկայի Արեւմտեան Թեմի

ՍՈՒՅՆ ՔԱՐՈԶԱԳԻՐՔԸ ՆՎԻՐՎՈՒՄ Է ՆՈՐՈԳ
ՀԱՆԳՈՒՅՅԱԼ ՎԵՌԱ ՄՈՄՋՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ
ԹՈՂ ԼՈՒՅՍ ԻՋՆԻ ՆՐԱ ՀՈԳՈՒՆ



ՅԻՇԱՏԱԿՆ ԱՐԴԱՐՈՅՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՄԲ ԵՂԻՑԻ:
ԱՄԷՆ:

ՔԱՐՈԶԱԳՐՔԻ ՀՈՎԱՆԱՎՈՐՆ Է՝ ՀԱՆԳՈՒՅՅԱԼ
ՎԵՌԱ ՄՈՄՃՅԱՆԻ ԹՈՌԸ՝ ՎԱՀԱՆ ՄՈՄՋՅԱՆԸ

ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍ, ԿԱԼԻՖՈՐՆԻԱ
ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Իմ հայրենի ժողովրդի ընթերցանությանն եմ հանձնում իմ նոր Քարոզգիրքս, որն անվանել եմ «ՃՇՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԲԱՆԱԼԻՆ», որ է Հիսուս Քրիստոս:

Աղոթող եմ Ազգիս Վեհափառ Հայրապետի՝ Ն·Ս·Տ·Տ· Գարեգին Բ· Ամենայն Հայոց Կաթողիկոսի քաջառողջության և իր եկեղեցանվեր ու հայրենաշեն գործոց հաջողության համար:

Արևելահայերենի ուղղագրության և մտքի դասավորման, ինչպես նաև գրքի կազմը պատրաստելու աշխատանքի մեջ, իրենց կարևոր լուման ունեն Առաջնորդարանի աշխատակիցներ՝ ինձ շատ սիրելի Հայկ Մաղոյանն ու Մաշտոց Ջոբանյանը, որոնց նույնպես հայտնում եմ իմ սերն ու շնորհակալությունը:

Քարոզգրքիս լույս ընծայման նպատակն է ինչ որ չափով հագեցնել մեր ժողովրդի հոգու ծարավը: Եթե մի կաթիլ իսկ հաջողվեմ իմ այս առաքելության մեջ, դա կլինի իմ վարձը: Աղոթեցեք ինձ համար:

Սիրով՝

Հովսեփ Ավագ Քահանա Հակոբյան

Օգոստոս, 2014
Բրբենկ, Կալիֆորնիա, ԱՄՆ

ՀՈԳԵԼՈՒՅՍ ՎԱԶԳԵՆ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ ԽՈՍՔԸ 1991 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 20-ԻՆ ՆՈՐ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ ԻՐ ԾՆՆԴՅԱՆ 83-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ ԱՌԹԻՎ, ՈՒՂՂՎԱԾ ԻՆՁ ԵՎ ԻՄ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻՆ

Շատ լավ, բրավո: Սքանչելի երգեցիք: Լավ սովորել եք: Երևի Հայր Հովսեփն էլ լավ աշխատել է և ձեզ սովորեցրել: Սիրո՞ւմ եք այս երգերը: (երեխաները պատասխանում են՝ այո): Շատ բարի: Իսկ ինչ որ երգում եք, մի քիչ գոնե հասկանո՞ւմ եք խոսքերի իմաստը, (երեխաները՝ այո): ··· Արդեն ահագին բանակ եք կազմել և ես շատ ուրախ եմ, որ Տեր Հովսեփը ձեզ բերեց այստեղ և ես ձեզ մոտիկից տեսա· տեսա ձեր դեմքերը, ձեր աչքերը, ձեր հայկական աչքերը և լսեցի մանավանդ ձեր երգը և ձեր արտասանությունները: Բոլորն էլ շատ լավ էին, շատ հաջող: Շնորհավորում եմ ձեզ, որ այսպես կարճ ժամանակի ընթացքում այսքան երգեր անգիր գրեթե սովորել եք: Ես մտածում եմ հիմա, որ դուք տակավին պիտի մեծանաք և ապագային, երբ արդեն հարմար հասուն տարիք ունենաք, գուցե պիտի կամենաք հոգևորական դառնալ, եկեղեցուն ծառայել և գալ այստեղ մեր Մայր Աթոռի Հոգևոր Ճեմարանում բարձրագույն կրոնական ուսում ստանալու, որպեսզի դուք էլ ձեր հերթին ապագային ծառայեք մեր եկեղեցիին՝ իբրև քահանաներ կամ վարդապետներ: Այնպես, ինչպես ինքը՝ Տեր Հովսեփը փոքր եղած ատենը, ձեր տարիքին եկեղեցի կհաճախեր և երգեցողության կհետևեր, կսովորեր, ապա երբ մի քիչ մեծացավ, եկավ Հոգևոր Ճեմարան, ավարտեց, արդեն հիմա հոգևորական աստիճան ունի իբրև Քահանա և մեր Սբ· Աստվածածին եկեղեցու ավագերեցն է: Ահավասիկ ձեզի համար Տեր Հովսեփը օրինակ կծառայի: Մաղթում եմ ձեզ, որ Աստված ձեզ միշտ պահի պահպանի քաջառողջ մարմնով և հոգվով: Աստված ձեր մտքերը պայծառ

պահի, որպեսզի դուք լավ սովորեք դպրոցներում, ուր դուք հաճախում եք, այն էլ կարևոր է, դպրոցի ուսումն էլ կարևոր է, որպեսզի զարգացած երեխաներ, պատանիներ դառնաք և միաժամանակ եկեղեցի էլ հաճախեք և սովորեք նաև այն ինչ ոչ եկեղեցին ձեզ սովորեցնում է: Մեր աղոթքները, այն ինչ որ դուք երգեցիք կամ արտասանեցիք, շատ գեղեցիկ բովանդակություն ունեն: Դուք գուցե փոքր եք տակավին, գոնե փոքրերը, այդ աղոթքների իմաստը լավ չեք հասկանում, առայժմ, բայց հետզհետե պիտի հասկանաք և պիտի տեսնեք, որ մի ամբողջ աշխարհ է մտքերի, զգացմունքների, պատկերավորումների, որոնցով Աստուծո խոսքը գալիս է ձեզ: Մենք հավատում ենք Աստուծո գոյության և հավատում ենք, որ Աստված Իր շնորհները կբաշխի բոլոր նրանց, ովքեր հավատով մոտենում են Սուրբ Սեղաններին եկեղեցու: Դուք արդեն բավական սովորել եք, տեսնում եմ: Մաղթում եմ, որ Աստված ձեզ ուժ, կարողություն տա, հետզհետե ավելի և ավելի, որպեսզի դուք դառնաք ապագային կատարյալ երիտասարդ տղաներ, մտքով, հոգով լավ հայեր, իբրև հարազատ զավակները մեր ժողովրդի և մեր Մայր Հայրենիքի:

Ես իմ օրհնությունը ուզում եմ ձեզ բաշխել այսօր բոլորիդ, ձեզ և ձեր միջոցավ նաև ձեր ծնողներին և ձեր բոլոր հարազատներին: Եվ ցանկանում եմ նաև, որ հետագային, հառաջիկա տարի, Տեր Հովսեփը էլի ձեզ բերի այստեղ, ես ձեզ կրկին լսեմ և կրկին իմ օրհնությունը բաշխեմ ամենքիդ:

«ԵԿԵՂԵՑԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՆԱՌԻԿ ԲԵՐԴՆ Է ՀԱՅ ՀՈԳԻԻՆ»

ՎԱՀԱՆ ԹԵՔԵՅԱՆ

«Եկեք կառուցենք լույսի սուրբ խորանը, Որովհետև այնտեղից մեզ համար լույսը ծագեց Հայաստան աշխարհում» (Շարական)

Երջանկահիշատակ Գարեգին Ա· Ամենայն Հայոց Կաթողիկոսն ասում է· *«Ի՞նչ է նշանակում՝ «Եկեք կառուցենք լույսի սուրբ խորանը»: Կառուցել նշանակում է քարը քարի վրա դնել, աղյուս աղյուսի վրա շարել: Սակայն բուն Եկեղեցին, ճշմարիտ Եկեղեցին մեր հոգիներում կառուցվեց 4–րդ դարում Սուրբ Գրիգոր Լուսավորչի ձեռքերով, հավատքի Եկեղեցին, որը ծնունդ է տալիս նյութեղեն Եկեղեցուն: Այն Եկեղեցին, որը գաղտնի մի ճանապարհ ունի դեպի երկինք:··· Բոլոր տեսակի թշնամիները քարը, աղյուսը, փայտը կարողացան քանդել և գտնել եկեղեցու նյութեղեն ճանապարհը և ինչպես մեր մեծ բանաստեղծ Վահան Թեքեյանն է ասել· «Եկեղեցին հայկական գաղտնի ճամբա մը ունի, որ կանցնի հոգիներեն և կերթա առ Աստված»: Ահա մեր անմահության գաղտնիքը, այդ գաղտնի ճանապարհը մեր թշնամիները չկարողացան գտնել: Այդ Եկեղեցին ձեր հոգիների և սրտերի մեջն է, որը Աստծու կողմից է կառուցված»:*

Ցավում եմ ասելու, որ այսօր դժբախտաբար թե' Հայրենիքում և թե' Սփյուռքում, մեր ժողովրդի զավակներից շատերը շեղվել են ճշմարիտ ճանապարհից ու հետևում են տարբեր տեսակի մոլորեցուցիչ հոգևոր *«ուսմունք»*-ների, որոնք խորթ են մեր պապերի սրբազան հավատին: Նրանք, որոնք շեղվել են ճշմարիտ ճանապարհից և կամ փորձում են շեղվել, թող սթափվեն: Մոլորյալնե՛ր, վերադարձեք ձեր մոր՝ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու գիրկը: Նա ներող է ու սպա-

սում է ձեզ, լայն բացած իր գիրկը՝ մեղավոր զավակների առաջ:

Մարդիկ երբեմն մտածում են, թե սուրբ լինել, նշանակում է՝ կատարյալ և մաքուր լինել: Մեր խոսքի ու կեցվածքի մեջ չպետք է թերություն լինի: Իրոք, այսպե՞ս պետք է հասկանալ սրբությունը: Բայց կատարյալ ի՞նչ կա աշխարհում: Կատարյալ մարդ կարելի՞ է գտնել: Ուրեմն սրբություն չկա՞:

Կարող ենք նաև այս հարցը տալ, թե ինչո՞վ և ինչո՞ւ է Սուրբ՝ Էջմիածինը, որովհետև քարե՞րն են որոշ ձևով դասավորվել, թե պարզապես որովհետև մենք Սուրբ ենք ասում: Սուրբ Էջմիածինը անկրկնելի մեկ հատիկ Սրբություն Սրբոց է: Ինչո՞ւ: Պատասխանը պարզ է, որովհետև Աստված իջել է հայրենի հողի վրա, Ինքն է հայտնվել: Այնտեղ ենք մենք հանդիպել նրան: Աստված այդ տեղը ընտրել է հայ ժողովրդի հետ Իր ուխտի համար: Կարող ենք ուրիշ Եկեղեցի կառուցել, ուր բնականաբար ևս Աստված կլինի, մեր հավատով կհայտնվի, բայց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը միակ այն տեղն է, ուր Աստված Ինքն է ընտրել Ինքնիրեն մեզ հայտնելու, մեր կյանքը և մեզ սրբացնելու համար:

Մենք ունենք Սուրբ Էջմիածին, որի գլխավերևում շողում է Լուսավորչի կանթեղը, իսկ նրա ետևում փայլ-փլում են հայ հերոսների սրերը: Դարեր կգան ու դարեր կանցնեն, բայց Սուրբ Էջմիածինը հավերժ կմնա, իր քա-րեղեն գոյությամբ ու մանավանդ՝ իր ոգեղեն զորությամբ:

Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին հայ ազգի ինքնության խարիսխը ու հենարանն է: Հայ Եկեղեցին խորհրդանշող գերագույն խորհրդանիշը Արարատա-նման Սուրբ Էջմիածինն է, որը հայրենի հողի ծնունդն է: Նոր Վարդանանք՝ Սարդարապատի հերոսները իրենց համբույրը դրոշմեցին Սուրբ Էջմիածնի քարերին ու այն-

տեղից իրենց հետ տարան հաղթանակը դեպի Սարդարապատ: Այսօր մեզ համար ամեն մեկ օր մահու կենաց պայքար է: Ուզում ենք իբրև հայ ապրել, ամուր պահած մեր հավատը և տեր կանգնած մեր ազգային ավանդություններին: Եթե այս է մեր պահանջը, ապա չբաժանվենք մեր ինքնությունը խորհրդանշող հավերժական լույսի ու հավատի, հայոց քաջերի ներշնչումի անսպառ օրրան՝ Սուրբ Էջմիածնից, որտեղից լսում ենք մեր սուրբ ու քաջ հերոսների ձայնը ներդաշնակված Աստծու ձայնի հետ:

Երկրներ ավերող, ժողովուրդներ կոտորող և ոչընչացնող, աշխարհը հրի ու սրի, սարսափների մեջ դողացնող լենկթեմուրները, Չինգիզ-խաները, Շահ-Աբասները հարգեցին և նույնիսկ խնայեցին Սուրբ Էջմիածինը՝ գլուխ խոնարհելով նրա Սրբության առջև:

Պատմական դեպքեր շատ կան, դրանցից մեկն է այս.

«17-րդ դարում, երբ պարսիկները օսմանցիներից գրավում են Արարատյան գավառը, շատ ավերածությունների շարքին, քանդում են նաև բոլոր Եկեղեցիների զանգակատները:

Երբ քանդող բանակը մոտենում է Վաղարշապատին (Էջմիածին քաղաքի պատմական անունը), հրամանատարը լուր է ուղարկում զորքերի սպարապետին. «Աշխարհի բոլոր հայերի ամենամեծ Սրբարանի՝ Էջմիածնի Մայր Տաճարի առջև ենք, արդյոք պե՞տք է քանդենք նրա զանգակատներն էլ»:

«Ոչ,- լինում է սպարապետի պատասխանը,- թողեք, որ մայրը խոսի իր զավակների հետ, մի՛ կտրեք նրա լեզուն»:

Պատասխանն ավելի քան անսպասելի ու զարմանալի է այդպիսի դաժան և սարսափ ազդող դահիճների կողմից, բայց իրողություն է:

Սխալվում են նրանք, որոնք կարծում են, թե հայ ժողովուրդը պաշտում է Սուրբ Էջմիածնի քարերը: Այդ շփոթությունն էլ ունեցավ Պարսից Շահ Աբբասը: Մայր Տաճարից քարեր տարավ Սպահան, զարգացնելու, շենացնելու և ճոխացնելու իր երկիրը, սակայն, ինչպես ասում է հայրենի գրող Ավետիք Իսահակյանը *«Էջմիածինը կառուցված է ոչ թե հաստաբեստ սյուների վրա, այլ հայ ժողովրդի հոգու և սրտի մեջ և դրա համար էլ խորտակելի չէ և անսասանելի է»:* Ուրիշ մի բանաստեղծ՝ Վահան Թեքեյանն ասել է, թե՝ *«Եկեղեցին հայկական անառիկ բերդն է հայ հոգիին»:* Եվ Էջմիածնեցի մի բանաստեղծ էլ՝ Հովհաննես Հովհաննիսյանը ավելացրել է·

«Դարեր եկան, դարեր անցան Էջմիածին,
Քո հիմն անշարժ ու անսասան Էջմիածին»:

Իսկ երջանկահիշատակ Վազգեն Վեհափառը հուզումով վկայում է.

«Աստված փնտրելու ճամբին ես գտա Սբ. Էջմիածինը և իմ Հայրենիքը, ու խոնարհվեցի ճակատագրի առջև» և պոռթկումով շարունակում է.

«Սուրբ Էջմիածինը այն մայր հնոցը եղավ, ուր դարբնվեցին հայոց հանճարի անճառ ձևերը և այն գանձարանը, ուր մեկտեղվեցին այդ հանճարի լույս գոհարները:

Սբ. Էջմիածինը մեր Սինա լե՛ռն է, մեր Ակրոպո՛լը, մեր Սուրբ Պետրո՛սը:

Սուրբ Էջմիածինը սակայն անցյալ չէ միայն, Նա նաև ներկա է և մեր ապագան: Նա կենդանի է ու մշտանորոգ: Սուրբ Էջմիածինը միշտ բաշխվում է ու չի նվազում, ինչքան բաշխվում, այնքան շատանում է, ինչքան լույս է սփռում, այնքան շողում է: Դարերը կգան, դարերը

կանցնեն, Նա միշտ կբարձրանա, կլուսավորի ու կներշնչի, կյանք տալով՝ կապրի:

Ծովերը, օվկիանոսները կամ օտար ձեռքերը մեզ կարող են բաժանել, բայց Էջմիածինը միշտ մոտ է մեզ: Եվ ինչքան հեռու, այնքան մե՛րն է Նա, այնքան դառնում է խորհուրդ ու հրաշք, երազ և իսկություն, հույս ու ստուգություն» (Մտորումներ, Մոնրեալ, Կանադա, 2004 էջ, 30, արտասանված 23 հունիս 1957թ. Սուրբ Էջմիածնի Կաթողիկեի տոնին):

Սուրբ Էջմիածինը եղել է մեր Մայրը, իր թևերի տակ առել իր վիրավոր զավակներին, իր վերջին շուրջառն ու վեղարը պատռել՝ սպեղանի և բալասան դարձնելու համար իր վիրավոր ձագերին: Նա մեր փառքն է, խիղճն է, որովհետև ինչ որ ունենք աշխարհին ներկայացնելու մենք այդ բոլորն ստացել ենք Սուրբ Էջմիածնի միջոցով: Թուլացնել Սուրբ Էջմիածինը, նշանակում է սառեցնել Հայ Ժողովրդի ոգին: Սուրբ Էջմիածինը կա և պիտի մնա մեր հավատի Սրբություն Սրբոցը: Հայ Եկեղեցին այն միակ վայրն է, ուր մեր հոգիները թարմանում են: Օտարները կարիք չունեն Եկեղեցու շաղախին իրենց դիմագիծը պահելու համար, բայց վայ այն հայ քրիստոնյային, որը կհեռանա և կմոռանա Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու և Սուրբ Էջմիածնի ճանապարհը:

Փառք Սուրբ Էջմիածնին, թող անսասան մնա մեր հավատի Տունը Արարատի անմիջական շուքի ներքև, որպեսզի Լուսավորչի անմար կանթեղից ճառագայթող անմահության լույսը պայծառ շողա մեր ամբողջ ժողորդի վրա, ի Հայաստան և ի Սփյուռս աշխարհի: Ամեն:

ԱՍՏԾՈՒ ՄԵԾՈՒԹՅՈՒՆԸ

«ԱՅՍՏԵՂ ՏԱՃԱՐԻՑ ՄԵԾ ՄԵԿԸ ԿԱ» (ՄԱՏԹ. 12:6):

Այս խոսքերով Հիսուս Ինքնիրեն ներկայացնում է մեզ: Այդքան էլ սովորական մի բան չէր ներկայացնել Ինքնիրեն և կամ հիշեցնել Իր մասին: Նա հաճախ ներկայանում էր իբրև խոնարհ ու համեստ մեկը, սակայն, երբ առիթը լինում էր, չէր վախենում, այլ Ինքն իր մասին վկայություն էր տալիս:

Այս անգամ էլ նույնն է պատահում: Երբ շաբաթ օրով Հիսուս անցնում էր ցորենի արտերի միջով, առաքյալները սոված լինելով՝ քաղում և ուտում են ցորենի հասկերը: Ահա այս երևույթն էր, որ բարկացրել էր օրենքի պահապաններին՝ փարիսեցիներին, քանի որ Հիսուսի աշակերտները անում էին մի բան, որը ըստ հրեական օրենքի արգելված էր անել շաբաթ օրով:

Որպեսզի հնարավոր լինի ավելի լավ հասկանալ, թե Հիսուս ի՞նչ պայմաններում այս խոսքը արտասանեց, մեջ եմ բերում Մատթոսի Ավետարանի 12-րդ գլխի 1-6 համարներն ամբողջությամբ.

«Հիսուս, շաբաթ օրով, անցավ արտերի միջով. նրա աշակերտները քաղցած էին և սկսեցին հասկ պոկել և ուտել: Փարիսեցիները երբ այս տեսան, Հիսուսին ասացին. «Ահա քո աշակերտները անում են մի բան, որ շաբաթ օրն անել օրինավոր չէ»: Եվ նա նրանց ասաց. «Դուք չե՞ք կարդացել, թե ինչ արեց Դավիթը, երբ քաղց զգաց նա և նրանք, որ նրա հետ էին: Թե ինչպես մտավ Աստծու տունը և կերավ առաջավորության հացը, որն ուտել օրենք չէր ո՛չ նրա և ո՛չ էլ նրա հետ եղողների համար: Կամ թե Օրենքում չե՞ք կարդացել, որ շաբաթ օրերը տաճարում քահանաները պղծում են շաբաթը և անմեղ

են: Բայց ասում եմ ձեզ, որ այստեղ տաճարից մեծ մեկը կա» (Մատթ. 12:1-6):

Ահա այս պահը և փարիսեցիների առարկությունը մեզ այսօր մտածելու առիթ են տալիս: *«Ի՞նչ էր Աստծու Մարդեղացման նպատակը: Ի՞նչ կարիք կար, որ Հիսուս աշխարհ գար իբրև Մարդ, երբ արդեն իսկ աշխարհում աստվածային օրենքներ գոյություն ունեին և մարդկությունը դրանք կատարում էր»:*

Իրապես, ինչո՞ւ: Այս հարցին պատասխան տալուց առաջ, եկեք տեսնենք, թե ի՞նչ վիճակ էր տիրում աշխարհում սրանից երկու հազար տարի առաջ: Օրենքը այնքան էր նյութականացել, որ մարդկանց վզին լուծ էր դարձել, նույնիսկ այնպիսի մի բարձրության էր հասել, որ նրանք սկսել էին օրենքը երկրպագել Աստծու փոխարեն: Ահա Հիսուսի աշխարհ գալու նպատակներից մեկը: Երբ նա ասում է. *«Այստեղ Տաճարից մեծ մեկը կա»*, ուզում է շեշտել Իր աստվածային ներկայությունը, այսինքն այս ձևով օրենքից այն կողմ մարդու արժեքը ավելի վեր է դասում: Մարդը արժևորվում է Աստծու ներկայությամբ, որովհետև օրենքները դրվում են մարդկանց գործածության համար և ոչ թե մարդը դառնում է օրենքի գերի: Բոլորս էլ լավ գիտենք, թե օրենքը մի միջոց է մարդու համար և ոչ թե նպատակ: Սակայն օրենքը միայն բավարար չէ: Աստծու պարգևած շնորհքն է հիմնականը, որը մեզ դարձնում է Աստծու որդիներ և ոչ թե օրենքի ծառաներ:

Քրիստոնեական վարդապետության մեջ շեշտված է Աստծու Որդի լինելու գաղափարը, որովհետև Պողոս Առաքյալը հիշեցնում է, թե՝ *«Ծառա չենք, այլ՝ որդի»:* Ծառան և որդին տարբեր հասկացություններ են: *«Որդին ժառանգակիցն է»* (Հռոմ· 8:15-17),- ասում է Պողոս Առաքյալը և մենք երբ Սուրբ Ավազանից սուրբ մկրտությամբ

վերստին ենք ծնվում, դառնում ենք Քրիստոսին ժառանգակից:

Ահա, այս պարզ նպատակով, ամեն նոր օրը մեզ համար դառնում է սկիզբ և ոչ թե վերջ, առիթ՝ Աստծու շնորհքը ըմբռնելու և ընդունելու: Քրիստոնեական Վարդապետության խտացումն է՝ Աստծու լուսավոր որդիներ դառնալը, ժառանգությունից մաս և բաժին ունենալը ու հավիտենական կյանքը ընդունելը, որոնք կարող ենք ունենալ միայն Հիսուսին հավատալով և գործնապես դրանք ապրելով այս աշխարհում: Ահա թե ինչո՞ւ Քրիստոս մարդացավ, որպեսզի մեզ մեր մեղքերից սրբի և հավիտենական կյանքին արժանի դարձնի:

Մովսես մարգարեի օրենքը Հիսուսի բերած շնորհքով և ճշմարտությամբ վերջացավ, որովհետև մինչև Հովհաննես Մկրտչի ժամանակ էր այդ: Իսկ մարգարեության և օրենքի վերջակետը հանդիսացավ Ինքը՝ մեր Տերը և մեզ բոլորիս այդ շնորհների ճանապարհով դարձրեց Հայր Աստծու որդեգիրները:

Այս պատմությունը կարծում եմ հետաքրքիր է.

ԿՈՐՑՐԱԾ ՊԱՀԵՐԸ

«Մի հողագործ լսում է, որ իրենց երկրի թագավորը հանդիպելու է ժողովրդի հետ՝ մարդկանց ցանկությունները լսելու և օգնելու համար ու այդ նպատակով շտապում է քաղաք՝ նրան տեսնելու և իր խնդրանքները ներկայացնելու: Երեկոյան մտնում է մի հյուրանոց, գարեջուր պատվիրում ու նստում մի սեղանի մոտ: Այդ պահին ներս է մտնում մաշված, պատառոտված հագուստներով մի աղքատ մարդ, որը գալիս ու նստում է հողագործի մոտ և հարցնում.

Տեսնում եմ, որ այս քաղաքից չեք, ի՞նչ գործով եք եկել այստեղ:

Երազանքներիցս մեկը թագավորին հանդիպելն է ու իմ խնդրանքները նրան ներկայացնելը,- պատասխանում է հողագործը;

Աղքատ մարդն ասում է.

Ես կարող եմ քեզ օգնել, որ թագավորին տեսնես:

Այդ ժամանակ հյուրանոց են մտնում մեծահարուստ մի քանի մարդիկ ու նստում նրանցից քիչ հեռու: Հողագործը մտածում է, որ այս անվանի մարդիկ ավելի շուտ կարող են օգնել իրեն, քան այս աղքատ մարդը, գնում է, գարեջուր հյուրասիրում ու միանում նրանց:

Հաջորդ օրը, երբ թագավորն իր շքախմբով անցնում էր քաղաքի պողոտայով, հողագործը զարմանում է ու ափսոսում, բայց ժողովրդի բազմության պատճառով չի կարողանում մոտենալ նրան: Թագավորն այն մարդն էր, որը նախորդ օրը աղքատի զգեստներով նստած էր իր կողքին…» (Հովհաննես Մանուկյան, «Առակներ» Երևան, էջ 13):

Դժբախտաբար մեր կյանքի ընթացքում մենք էլ շատ անգամ կորցնում ենք այն պահը, երբ Հիսուս աղքատի հագուստներով, Իր խոնարհությամբ ու պարզությամբ մեր կողքին լինելով հանդերձ, հեռանում է մեզանից, քանի որ մենք ընտրում ենք հարուստի զգեստներով քողարկված սատանային: Ուշադի՛ր եղեք ու մի կորցրեք այդ կարևոր պահը:

Ի՞նչ է փոխվել այսօր: Նույնիսկ կարելի է ասել՝ ոչ մի բան: Միայն դարերն են գլորվել ու աշխարհը զարգացում է ապրել: Այսօր, ներկա դարում մեր ուսերի վրա դրված քաղցր պարտականությունն է, եթե երբեմն դժվար էլ լինի, ճանաչել ճշմարիտ Աստծուն, ինչպես նաև մեր անձը, թե ո՞վ ենք մենք: Մենք մեզ նայելով հոգևոր հայելու մեջ, տեսնենք ու հասկանանք, որ մենք ծառաներ չենք, այլ՝ Աստծու որդիներ. որով պիտի աշխատենք, տքնենք, չարչարվենք, որպեսզի արժանի դառնանք Նրա որդիները

դառնալու: Սա մարդուն տրված մի մեծ իշխանություն է, որովհետև նա Աստծու համար արժեքավոր մեկն է, կարելի է ասել Նրա ձեռագործն է, որի վրա Աստված աշխատել է, դեռևս աշխատում է ու պիտի աշխատի, ինչքան էլ մարդիկ փորձեն հեռանալ լույսից, արդարությունից ու ճշմարտությունից, մեկ է դրանք հավասարապես պիտի տարածվեն արդարների ու մեղավորների վրա, քանի դեռ աշխարհը գոյություն ունի:

Եկե՛ք փորձենք հասկանալ, թե՝ *«Այստեղ Տաճարից մեծ մեկը կա»*, խոսքով ի՞նչ է ուզում հասկացնել մեզ մեր Տերը. այսինքն օրենքը պահելով չէ որ պիտի տիրանանք Աստծու հավիտենական ժառանգության, այլ՝ Նրա շնորհները առիթ պիտի դառնան: Մնում է, որ մենք կարողանանք արժանի դառնալ այդ շնորհներին, որոնք Աստված մշտապես անձրևի պես տեղացնում է մեր վրա: Աստծու լույսը կարևոր է, հետևենք նրան և դառնանք Լույսի որդիներ (Թես· 5:5): Երկրային կյանքը սկիզբն է հավիտենական կյանքին տիրանալու համար և մենք այստեղից պիտի աշխատենք ու փառավորենք Տիրոջը: Ամեն:

ԱՍՏԾՈՒ ԴՐԱՄԱՊԱՆԱԿԻ՞Ց ԵՍ ԳՈՂԱՑԵԼ

«ՄԻ՛ ԳՈՂԱՑԻՐ» (Տասնաբանյա պատվիրաններից)

Այս խոսքը Մովսես մարգարեին Աստծու տված Տասնաբանյա պատվիրաններից մեկն է: Փորձենք հիշել դրանցից մի քանիսը· *«Ես եմ քո Տեր Աստվածը, Ինձանից բացի ուրիշ Աստված չպիտի ունենաս»: «Կուռքերին չպիտի պաշտես»: «Պատվի՛ր հորդ և մորդ»: «Մի՛ սպանիր»: «Մի՛ շնացիր»* և այլն: Այս քարոզի բնաբան եմ ընտրել· *«Աստծու դրամապանակի՞ց ես գողացել«* անունը: Աշխարհում ամեն կողմ էլ գողություն կա: Ոմանք մեծ գողեր են նկատվում, ոմանք էլ՝ փոքր: Օրինակի համար, եթե մեկը մեքենայից ձայնագրիչ է գողանում, ասում ենք *«մի մեծ բան չէր, թեթև գողություն էր»* և շատ ուշադրության չենք արժանացնում ու մեքենայի տիրոջն էլ ասում ենք· *«Բախտդ բերել է, էժան ես պրծել»:*

Արհեստի մեջ էլ գողությունը *«մանր արարք է համարվում»:* Սակայն ինչ լինում է *«մանրից»* է սկսվում: Ժողովուրդը մի լավ խոսք ունի· *«Զու գողացողը, ձի էլ կգողանա»:* Տասը պատվիրանների մեջ հստակ գրված է ու պատվիրված· *«Մի՛ գողացիր«* և վերջ, չես կարող այսքան և այնքան գողանալ, այլ ուղղակի արգելք է դրված, որը պատժելի է և՝ մարդկային և՝ աստվածային օրենքներով:

Խորհրդային Միության տարիներին, անաստվածության շրջանում, գողությունը դժբախտաբար համատարած երևույթ էր, բանվորից մինչև նախագահ օղակի նման մեկը մյուսից գողանում էր: Հիշում եմ, 13, 14 և 15 տարեկանին, երբ Հոգևոր Ճեմարանի ուսանող էի, ամառային արձակուրդներին մորս հետ գնում էի շինարարության վրա աշխատելու իբրև բանվոր, որպեսզի կարողանամ օգնել ընտանիքիս մի քիչ նյութապես թեթևացնելու համար տան բեռը: Ամեն օր աշխատանքից վերա-

դառնալիս, մայրս իր հետ վերցնում էր մի փոքր տոպրակով ավազ կամ շաղախ (ցեմենտ), փայտի կամ երկաթի կտոր: Քանի որ ես հոգևոր կրթություն էի ստացել, այդ բաները ինձ խորթ էին թվում ու դառնացած մորս ասում էի· *«Մամ, շենքի վրա աշխատում են ավելի քան հիսուն բանվորներ, վարպետներ և ինժեներներ: Եթե ամեն մեկը քո նման մի բան տուն տանի, պատկերացնո՞ւմ ես կառուցվելիք շենքի վիճակը»:* Մայրս էլ թեթև ժպիտով անկեղծորեն արդարացնելու համար իր արածը, պատասխանում էր· *«Էհ, տղաս, մեր արածը ինչ է որ, ինժիները մեքենայով է տանում«:* Այդ ժամանակներում *«Մի՛ գողացիր»* աստվածային պատգամի *«մի»*-ն հանված էր և թողնված էր միայն *«Գողացի՛ր»*-ը:

Գողությունների տեսակները շատ են ու բազմազան, բայց թողնենք դրանք: Ի՞նչ եք կարծում, ո՞րն է ամենամեծ գողությունը: Վստահ եմ, որ ձեզանից շատերը կարող են ասել՝ դրամատների (բանկերի) գողությունները, որտեղից միլիոններ են գողանում կամ ավազակային հարձակումները ընտանիքների և այլ հաստատությունների վրա: Սակայն մեզանից ոչ մեկի մտքով չի անցնում, թե ամենամեծ գողությունը ո՞րն է: Բոլորս էլ նյութական գողության մասին ենք խոսում կամ մտածում, սակայն ամենամեծ գողությունը համարվում է այն, որ Աստծու Դրամապանակից ենք գողանում: Այո՛, այո՛, մի՛ զարմացեք, Աստծու Դրամապանակից: Հիմա ձեզանից շատերը ծիծաղելով կասեն· «*Տեր հայրը խելքը թռցրել է, ի՞նչ է խոսում, ո՞վ համարձակություն կարող է ունենալ Աստծու Դրամապանակից գողանալ կամ արդյոք Աստված Դրամապանակ ունի՞: Աստված նյութական հարստություն ունի՞, որ Դրամապանակ էլ ունենա ու մենք հասնենք երկինք և գողանանք»:* Բնական է, որ այսպիսի հարցեր բոլորս էլ կարող ենք ունենալ, երբ հարցը Աստծուն է վերաբերում:

Այս հետաքրքիր պատմությունը վստահ եմ ձեզ կլուսաբանի:

«Հավատացյալ մի մարդ, որ տարիներ շարունակ երազել էր ուխտի գնալ Երուսաղեմ, վերջապես կարողանում է հավաքել անհրաժեշտ գումարը ու ճամբորդել: Անշուշտ նա իր հետ վերցնում է ճամբորդության անհրաժեշտ իրեր, գնում է մեծաքանակ գորգեր Տաճարին նվիրելու համար, բարձում դրանք ուղտերի վրա և բավական շատ դրամ վերցնելով իր հետ, ճանապարհվում է դեպի Երուսաղեմ: Մեծ դժվարություններ հաղթահարելով, նույնիսկ ավազակային հարձակումների ենթարկվելով ու փրկվելով, վերջապես հասնում է Երուսաղեմ և նույն օրը Տաճարի Լուսարարապետին տեղեկացնում իր գալստյան մասին: Հանդիպելով նրան Տաճարին նվեր բերած մետաքսե թանկարժեք գորգերը հանձնում է Լուսարարապետին, որը կարգադրում է դրանք անմիջապես դնել ներսում: Ժամանակը գալիս է, Տաճարի դռները փակվում են և բոլորը գնում են հանգստանալու: Հանկարծ ժամկոչը դռան արանքից ծուխ է նկատում և նայելով տեսնում, որ գորգերը վառվում են: Մոտ գտնվող մարդիկ նրա աղաղակը լսելով սարսափահար վազում են դեպի Տաճար, բացում դռները և ով զարմանք, հավատացյալի նվիրած գորգերը այրվել ու մոխրացել էին: Հետաքրքիրն ու զարմանալին այն էր, որ կողքի ոչ մի գորգ ու իր չէր վառվել: Ներկաները ավելի քան ապշած և զարմացած էին ու մեկը մյուսին նայելով ասում էին· «Ինչո՞ւ, ի՞նչն է պատճառը»: Լուսարարապետը սպասում էր պատասխանի և հավատացյալը նրան առանձին պատմում է պատճառի մասին:

Նրա պատմածից հասկանալի էր, որ նա վաճառական է եղել: Ծնողները միշտ խորհուրդ են տվել նրան Կիրակի օրերը նվիրել Աստծուն, չաշխատել: «Կիրակի օրերի շահը թող Աստծու Տան համար լինի քո նվիրատվություններով»,- ասել են նրան: Մարդը սկզբում լսել է

իր ծնողների խորհուրդը և Կիրակի օրերի շահույթը նվիրել եկեղեցիներին: Սակայն տեսնելով իր շուրջի առևտրականներին, որոնք Կիրակի օրերն էլ էին աշխատում, մոռանալով ծնողների բարի խորհուրդը, շահելու ակնկալիքով ինքն էլ է միանում նրանց ու Կիրակի օրերը առևտուր անում: Ահա այդ հավաքած գումարով էլ գնում է թանկարժեք մետաքսե գորգերը և իր ուխտը կատարելու համար դրանք նվիրում Երուսաղեմի Տաճարին:

Ծերունազարդ Լուսարարապետը ուշադրությամբ լսելուց հետո, ասում է նրան· *«Տղաս, բայց դու այդ գումարը գողացել ես Աստծու Դրամապանակից, քանի որ Կիրակի օրերը Նրան է պատկանում: Այդ օրը չի կարելի առևտուր անել, ո՛չ էլ սակարկության մեջ մտնել Աստծու հետ, առօրյայի և Կիրակիի դրամական հաշիվները բաժանելով: Աստված աշխարհը, ամեն ինչ և մարդուն վեց օրում ստեղծելուց հետո յոթերորդ օրը հանգստացավ ու Իր օրինակով մարդուն թելադրեց նույնպես հանգստանալ և Իրեն երկրպագել ու ոչ թե Իր հաշվին ապրել»: Այդ պատճառով էլ Աստված քո ուխտը ընդունելի չհամարեց և նվիրածդ գորգերը այրվեցին ու մոխրացան»:*

Ամեն բարիքի հիմքը՝ Աստվածպաշտությունն է: Աստծուն տրված ամեն տեսակի նվերներ անարժեք են դառնում, երբ դրանք Նրան երկրպագելու փոխարեն են ձեռք բերվում, նման այն հավատացյալ մարդու գորգերին, որոնք կրակից մոխրացան: Հիշենք Աստվածաշնչից Աբելի ու Կայենի ընծաների պարագան: Աբելի *ընծան մաքուր, սուրբ, անարատ և անխարդախ էր*, իսկ Կայենինը՝ դրա հակառակը: Դրա համար Աբելի ընծան ընդունվեց Աստծու կողմից, իսկ Կայենինը՝ ոչ: Ի՞նչ պատահեց: Կայենը ատելությունից կուրացած, նախանձեց ու սպանեց իր եղբորը:

Այս պատմությունը լսելուց հետո, մենք իբրև վաճառական, արհեստավոր, արվեստագետ և կամ այլ մասնա-գիտություն ունեցող հավատացյալ մարդիկ, պիտի համարձակվե՞նք դիպչել Աստծու Դրամապանակին: Վաճառականի նվիրած գորգերը այրվեցին ու մոխրացան: Վերջապես ե՞րբ պիտի սովորենք պատմությունից դասեր քաղել:

Կարծում եմ ամեն ինչ ավելի քան հստակ է, Կիրակին Աստծու օրն է: Եկեք այդ օրը աղոթենք ու նվիրենք Նրան, որպեսզի հաջորդ օրերը Աստված մեր գործերին հաջողություն տա և մեզ առողջ պահի; Կիրակի օրերի հանգստով միասնաբար փորձենք լցնել Աստծու Դրամապանակը՝ մեր սիրով, հավատով և արդար ու մաքուր կյանքով: Ամեն:

ԲԱՐԻ ԳՈՐԾԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

«ՈՐՈՎՀԵՏԵՎ, ՈՎ ՈՐ ՁԵՐ ԹՇՆԱՄԻՆ ՉԷ, ՁԵՐ ԿՈՂՄՆ Է» (ՂՈՒԿ. 9:50):

Քրիստոսի խոսքերն են, որը վերցրել եմ Ղուկաս ավետարանչի 9-րդ գլխի 50-րդ համարից: Հիսուսի այս պատգամը ցույց է տալիս, թե ինչպե՞ս կարելի է ազատվել երևույթները դատելուց: Առաքյալները մոտենում են Տիրոջը և պատմում մի մարդու մասին, որը Նրա անունով դևեր էր հանում: Եվ քանի որ այդ մարդը առաքյալների հետ չէր գնում, նրան արգելեցին այդ կատարել: *«Վարդապե՛տ, տեսանք մեկին, որ քո անունով դևեր էր հանում և արգելեցինք նրան, որովհետև մեզ հետ չի շրջում»* (*Ղուկ.* 9:49): Այստեղ հայտնի չէ, թե նրանք ի՞նչն էին արգելում. դևերին հալածե՞լը, թե՞ Հիսուսի անունը գործածելը; Սակայն կարծես թե նրանք ավելի մտածում էին նրան արգելել, որպեսզի Հիսուսի անունը չգործածի, կարծելով, թե այդ ձևով Նրա հեղինակությունը պիտի ընկնի: Հիսուսի պատասխանը նրանց կարելի է ասել ցնցեց. *«Մի՛ արգելեք նրան, որովհետև, ով որ ձեր թշնամին չէ, ձեր կողմն է»:*

Դժբախտաբար ապրում ենք մի աշխարհում, ուր մարդիկ ավելի շատ տարված են տեսանելի երևույթներով, այսինքն՝ այն ինչ տեսնում, հավատում են ու այդպես էլ դատում: Սակայն Հիսուսի խոսքն այլ էր թերահավատ Թովմաս Առաքյալին. *«Որովհետև դու ինձ տեսար և հավատացի՛ր, երանի նրանց, ովքեր չեն տեսել, և սակայն կհավատան» (Հովհ. 20:29):* Կարծես թե ամեն ինչ դրանում է կայանում; Շատ կարևոր է, թե ի՞նչ ենք հագնում, ինչպե՞ս ենք խոսում, ինչքան բան գիտենք, ինչքան գեղեցիկ ենք և այլն…: Եթե որևէ մեկը այս երևույթներին չի հարմարվում, նման է այն մարդուն, որը հոսանքին հակառակ է լողում:

Քանի որ այս պատճառով բարոյականությունն էլ սկսում է հիմնվել տեսանելի երևույթների վրա: *«Եթե տեսնեմ, կհավատամ, չեմ տեսնի՝ չեմ հավատա»,* այսպես են արտահայտվում թերահավատ մարդիկ: Ներքին հոգեկան վիճակից և կամ սիրո արտահայտություններից ավելի, բարոյական կյանքի օրենքները հասկանում են գործադրելու, ձևերն ու սովորությունները կատարելու մեջ: Հավանաբար այս է պատճառը, որ *բարոյականությունը իբրև ձև* հսկա անկում է ապրում և դրան հակառակ՝ *անբարոյականությունը* դառնում է ավելի բնականոն և զարմանալիորեն՝ շարունակաբար, քանի որ պարզ ու հասարակ երևույթները, որոնք մենք տեսնում ենք, չեն կարող համոզել մի մարդու, որը խելացի է ու սիրում է մտածել: Եվ եթե այդ խելացի ու մտածող մարդը ընկնում է հաճույքների ու կրքերի ետևից, բնական է, որ պիտի մոռանա ամեն բարոյական սկզբունք, ձև կամ օրենք:

Սակայն սրանք դեռ ոչինչ, կան ավելի վատերը: *Զևապաշտություն, իշխանամոլություն* աշխարհիկ, եկեղեցական կամ հավատի կյանքում: Դժբախտաբար մեր ժողովրդի և Եկեղեցու պատմությունը լիքն են այսպիսի քայքայիչ գործունեությունների պատմություններով: Մարդիկ, ժողովուրդներ, եկեղեցականներ, մինչև իսկ պետություններ ու եկեղեցիներ կռվել, չարչարել, պատերազմել, սպանել ու կործանել են: Ու մի' կարծեք, թե խոսքս միայն անցյալի մասին է. դժբախտաբար այսօր էլ աշխարհում շարունակվում են՝ նույն անհանդուրժողությունը, ատելությունն ու թշնամանքը մինչև իսկ միևնույն դավանանքը ունեցող Եկեղեցիների անդամների միջև: Օրինակները շատ են: Վատն այն է, որ ամեն բան կատարվում է Աստծու անունով:

Նույնն էր պարագան, երբ երկու հազար տարի առաջ առաքյալները արգելեցին մի մարդու, որը Տիրոջ

անունով դևեր էր հանում: Սուրբ Գիրքը ասում է, թե նա ոչ թե փորձում էր, այլ ուղղակի հանում էր, այսինքն մարդկանց, հիվանդներին Տիրոջ անունով բուժում էր, մի խոսքով Աստծու Որդու գործն էր կատարում: Սակայն առաք-յալները անիմաստ նախանձախնդրությամբ արգե-լեցին նրան և այս մասին հպարտությամբ պատմեցին Տիրոջը: Պատկերացնում եք այն սպասումի վիճակը, որ առաքյալները ունեին, մտածելով, թե բարի գործ են կատարել: Նրանք հանդիմանության չէին սպասում, այլ՝ գնահատանք: Սակայն Տերը սառը ջուր լցրեց նրանց սպասելիքներին, ցնցիչ և քննադատական պատասխան տալով նրանց. *«Մի՛ արգելեք նրան, որովհետև, ով որ ձեր թշնամին չէ, ձեր կողմն է», «…Որովհետև չկա մեկը, որ իմ անունով զորավոր գործեր անի ու կարողանա ինձ հայհոյել…» (Մարկ. 9:38):*

Նույն բանը պատահել էր Մովսես մարգարեին: Երբ մարդիկ գալիս ու նրան ասում են, թե երկու հոգի ժողովրդի մեջ մարգարեություններ են անում, այսինքն, ուզում էին ասել, մարգարեն դու ես, բայց ուրիշները նույնպես մարգարեանում են, նա պատասխանում է. *«Ո՞ւմ համար է ձեր նախանձախնդրությունը՝ Աստծո՞ւ, թե՞՝ իմ: Երանի ամբողջ Իսրայելի ժողովուրդը իմ նման լիներ»:* Սուրբ Գիրքը անմիջապես շարունակում է, թե աշխարհում Մովսեսից ավելի խոնարհ մեկը չկար:

Աստծու առատաձեռնությունն ու կամեցողությունն անսահման են մարդու հանդեպ:

Հետաքրքիր է.

«Մի իմաստուն մարդ կար իր ժամանակին, որն ուսյալ էր, քարոզող ու աղոթող: նրա մասին ասում էին, թե Աստծուն նվիրված հավատքի մշակ է: Նա ուր որ ապրում էր ծովեզերքի քաղաքներից մեկն էր, նրան մոտիկ մի կղզի կար, ուր քարայրում առանձնացված

ապրում էր մի ճգնավոր՝ Հիսուսին մկրտող Սուրբ Հովհաննես Նախակարապետի նման: Նրա կերածը մարախ ու վայրի մեղր էր:

Սակայն այս անապատականը հրաշագործ էր Սբ. Պողոս և Սբ. Պետրոս առաքյալների նման և բրժըշկություններ էր կատարում, միայն թե նրա մասին ասում էին թե սովորած չի, դպրոց չի գնացել: Երբ հիվանդներ էին բերում, նա աղոթում էր ու նրանք բուժվում էին, բայց ոչ մեկը չգիտեր, թե նա ի՞նչ է աղոթում և ինչպե՞ս է աղոթում:

Այս Անապատականի համբավը հասնում է իմաստուն մարդու ականջը և նա իր մտքում ասում է. «Ես որ այսքան սովորած մարդ եմ և միշտ աղոթող, բայց հրաշագործ չեմ, ուրեմն ես էլ գնամ, այցելեմ այդ անապատականին, տեսնեմ ի՞նչ է նրա աղոթքը, որը հաճելի է Աստծուն, սովորեմ նրանից աղոթել և մի օր հրաշքներ գործեմ…»:

Նստում է նավ այլ ուղևորների հետ, դուրս է գալիս ծովեզերք, առաջնորդվում ճգնավորի քարայրը և ի՞նչ տեսնի… մրոտ-փրչոտ, մորուսավոր մի մարդ բազմած մերկ քարի վրա Եղիա մարգարեի նման, իր գործը միայն Աստծու հետ է:

Իմաստունը քաղաքի ճոխ ու փարթամ կյանքին վարժված մեկն էր, շատ չէր սիրում այդ ճգնավորի կյանքը: «Բայց, կարևոր չի, թող մի անգամ էլ այսպես ապրեմ, միայն թե իմանամ հրաշագործության գաղտնիքը, դրանից հետո թող ճգնավորը տառապի իր գործի մեջ»,- ասում է մտքում իմաստունը:

Այս մտածելով, նա մոտենում է ճգնավորին, խոնարհվում նրան ու ասում.

Ով Աստծու մարդ, լսել եմ, որ դու հրաշագործ մեկն ես: Ինչ որ խնդրես Աստծուց՝ ստանում ես: Արդ, ես էլ մի իմաստուն եմ և եկել եմ խնդրելու քեզանից, որ ինձ սովորեցնես քո աղոթքը:

Ճգնավորը մի պահ զարմանում է, լռում, չի համարձակվում խոսել, բայց իբրև մի բարի էակ չի ցանկանում մերժել իմաստունի խնդրանքը:

Միայն ասում է.

«Ես երկար աղոթքներ չգիտեմ, իմ կյանքս էլ տարբեր է թերևս ձեզանից, աղոթքս էլ; Ուզո՞ւմ ես իմ աղոթքը լսել: Ահավասիկ այս է միայն.

Աստված Դու ինձ մեղա՝ ես Քեզ՝ ողորմյա:

«Ի՞նչ, մեղա, մեղա ասեցիր»,- միջամտում է իմաստունը: Աստված քեզ մեղա պիտի ասի, որ դու իրեն ողորմե՞ս: Դու ո՞վ ես: Ո՛չ, ո՛չ: Խնդրում եմ սրանից հետո ուղիղ և ճիշտ աղոթես ու պիտի ասես.

Աստված՝ Քեզ մեղա, Դու ինձ՝ ողորմյա:

Այսպես մեր իմաստունը ճգնավորին մի քանի անգամներ կրկնել է տալիս այս աղոթքը ու նավը նստելով՝ հեռանում: Ճգնավորը կրկնում է մի քանի անգամ իմաստունի սովորեցրածը ու հետո մտնում է և ծովի վրայով քայլելով վազում է նավի ետևից ու կանչում:

«Խնդրում եմ, ասես, մոռացա, թե ինչպե՞ս պիտի աղոթեի»:

Իմաստունը տեսնելով ջրի վրայով քայլող ու վազող ճգնավորին, այլայլված ասում է.

Քո իմացածը ճիշտ է, քո իմացածը ճիշտ է, գնա՛ և այդպես շարունակիր աղոթել» (Կարապետ Ավ. Քհն. Գալֆայանի գրվածքներից, «Գիրք Առակաց», 1957, Բեյրութ, էջ 11):

Հետաքրքիր է, այս պարագային *«Ի՞նչ կլինի մեր դիրքը կամ կեցվածքը, եթե այսօր որևէ մեկը մեր հասկացածից ու ընդունածից մի այլ ձևով գործի, սակայն դրանով փառաբանվի Տիրոջ անունը. Մարդիկ ազատվեն դևերից, Աստծուն ճանաչեն, հոգևոր կյանքը ծաղկի, հավատը զորանա, այսինքն այդ մարդը Աստծու գործը կատարի: Կհալածե՞նք, չե՞նք թողնի, որ նա իր գործը կատարի, ոստիկանությո՞ւն կկանչենք, մի խոսքով ի՞նչ կա-*

նենք»: Հիսուս մեզ տալիս է այդ ուղղությունը Իր այս խոսքով. «*Մի՛ արգելեք նրան, որովհետև, ով որ ձեր թշնամին չէ, ձեր կողմն է…». (Մարկ. 9:38):* Զգուշ եղե՛ք, չլինի, որ մենք անտեսենք Աստծու Որդու խրատը և ուղղությունը ու մի օր էլ մենք մեզ գտնենք արգելող մարդկանց մեջ: Հիսուս շարունակում է Իր խրատը. *«Այս բաները ասացի ձեզ, որպեսզի գայթակղությունից հետ մնաք: Իրենց ժողովարաններից դուրս պիտի հանեն ձեզ. մինչև իսկ ժամանակը կգա, երբ, ով ձեզ սպանի, պիտի համարի, թե Աստծուն պաշտամունք է մատուցում: Եվ այդ բանը պիտի անեն ձեզ էլ, որովհետև չճանաչեցին ո՛չ Հորը և ո՛չ էլ ինձ» (Հովհ. 16:1-3):*

Որևէ գործի Աստծուն հաճելի լինելու գլխավոր չափանիշ այն է, թե արդյոք դրանով մարդիկ ավելի կմոտենա՞ն Նրան, Աստծու անունը կփառավորվի՞, Եկեղեցին կպայծառանա՞, կսրբանա ու կզորանա՞: Եթե ոչ՝ անշուշտ որ Աստծու կողմից մերժելի է այդ գործը: Իսկ եթե՝ այո՛, կարծում ենք, թե այս պարագային ձևն այնքան էլ կարևոր չէ, քանի որ այդպիսի բարի գործունեությունը օրհնված է և Աստծու կողմից ընդունելի:

Թող Տերը մեզ բոլորիս իմաստություն պարգևի, որպեսզի Նրա ճշմարիտ կամքը կատարողները լինենք: Ամեն:

ԲԱՐԻՔԻՑ ՉԱՐԻՔ ԿԼԻՆԻ՞

«Ով խփում է քո ծնոտին, նրան մյո՛ւսն էլ մոտեցրու»
(Ղուկ 6:29):

Լսել եք անշուշտ, որ չարիքից բարիք է լինում, սակայն բարիքից չարիք լինո՞ւմ է: Հարցը բավական դժվար է, քանի որ ապացուցված պատասխան տալը այդքան էլ հեշտ չէ: Հաստատ ասված «այո»-ն կարող է նշանակել, թե ինչ որ տեղ մենք վստահ ենք մեր պատասխանի մեջ, այսինքն՝ մեր կատարած գործը մի բարիք է և երկրորդ՝ թե այն երբեմն կարող է մեզ առաջնորդել դժբախտության: Հնարավոր է և բացառված չէ:

Մեր առօրյա կյանքում մարդիկ այնպես են մտածում, թե նույնիսկ իրենց թշնամուն անգամ կարող են նվաճել նրան բարիք կատարելով և նա կպարտվի մարդասիրական ուժի դիմաց, կթուլանա և զինաթափ կլինի բարիքի քաղցրությունից ու քնքշությունից:

Մեր Տերը՝ Հիսուս, իբրև Աստծու Որդի չարիքին բարիով պատասխանելու խրատն ու հորդորն էր տալիս Իր հետևորդներին, ասելով. *«Ով խփում է քո ծնոտին, նրան մյո՛ւսն էլ մոտեցրու»:* Սա կարելի է ասել ինքնին չարին պարտության մատնելու մի ռազմամիջոց է: Պետրոս Առաքյալն էլ նմանատիպ մի խոսք ունի այս մա-սին. *«Չարի փոխարեն չար մի՛ հատուցե՛ք, կամ նախատինքի փոխարեն՝ նախատինք, այլ, ընդհակառակը, օրհնեցե՛ք, որովհետև այդ բանին իսկ կոչվեցիք, որպեսզի ժառանգեք օրհնությունը» (Ա Պետրոս 3:9):*

Երբ մարդուն դժբախտություն կամ անհաջողություն է պատահում, նրան հանգստացնելու և խաղաղեցնելու համար ասում են. *«Մի՛ մտածիր, ամեն չարիքի մեջ մի բարիք կամ մի լավ բան կա»:* Հավանաբար այս խոսքը

ասվում է այն ժամանակ, երբ բարիքից չարիք կարող է առաջանալ և նույնիսկ զարմանք պատճառել:

Որպեսզի ավելի հասկանալի լինի կարծում եմ այս պատմությունը հետաքրքիր է.

«Նորապսակ մի զույգ ավանակի (էշի) վրա նստած ճանապարհորդում է: (Հին ժամանակներում լավագույն փոխադրության միջոցներից մեկը այդ էր): Ճանապարհին նրանց մի կույր է հանդիպում: Հարսը խղճալով նրան, օգնելու նպատակով ամուսնուն խնդրում է, որ նրան վերցնեն, նստեցնեն ավանակի վրա ու տանեն: Ամուսինը ավելի փորձված լինելով չի ուզում վերցնել, սակայն վերջապես հարսի խնդրանքներին ընդառաջելով կույրին նստեցնում են ու իրենք էլ ոտքով շարունակում իրենց ճանապարհը: Երբ մոտենում են քաղաքին, կույրը մարդկանց ձայներ լսելով, սկսում է բարձրաձայն բղավել, թե իրեն ընկերակցող երիտասարդը ցանկանում է իրեն կողոպտել, առևանգելով իր կնոջն ու ավանակին: Մարդիկ հավաքվում են, բնականաբար հավատում են կույրին ու նրանց տանում քաղաքի դատավորի մոտ; Կույրին օգնող մարդիկ վկայություն են տալիս, որ իրապես երիտասարդը նրան կողոպտելու ցանկություն ուներ: Սակայն դատավորը լսելով երիտասարդ զույգի լացակումած աղաչանքները ու նրանց ասածների հակառակ խոստովանությունները, չի հավատում կույրին ու նրանց երեքին փակում է առանձին սենյակներում: Գիշերը առաջինը նա մոտենում է հարսի դռանն ու լսում, որ նա զղջում է իր ամուսնուն չլսելու և կույրին օգնած լինելու համար. երկրորդ՝ մոտենում է ամուսնու դռանը ու լսում, որ նա զղջացել է իր կնոջը լսելու և մարդասիրական օգնություն ցույց տալու համար, ապա մոտենում է կույրի դռանն ու լսում նրա խոսքերը. «Այսպես թե այնպես, շահավոր պիտի դուրս գամ այս դատից, կամ կնոջը պիտի տան կամ ավանակին…»: Դատավորը այս լսելուց հետո, հաս-

կանում է եղելությունը, նրանց անմիջապես հանում է սենյակներից, կնոջն ու ավանակին վերադարձնում երիտասարդին, իսկ կույրին պատժում է ոտքերի տակ գավազանի երեսուն հարված նշանակելով»:

Այս պարագայում ի վերջո ճիշտ է բարին է հաղթում, սակայն պատմությունը ցույց է տալիս, որ ժամանակավորապես չարը ևս հաջողություն է ունենում իր ծրագրերը իրագործելու ճանապարհին: Մինչև դատավորի ճշմարտությունը բացահայտելը, մարդիկ համոզված էին, թե կույրը անմեղ ու արդար է, քանի որ մտածում էին, թե Աստված արդեն իսկ նրան պատժել է կույր ստեղծելով, մի տեսակ խղճահարություն ունենալով նրա նկատմամբ, սակայն հետո հասկացան նրա անխիղճ ու անարդար լինելը և գտան, թե նա արժանի է դատավորի նշանակած պատժին;

Մեր ամենօրյա կյանքում կարող ենք բերել բազմաթիվ օրինակներ, երբ մարդիկ տուժում են իրենց կատարած բարի գործերի համար: Բարիքից չարիք կարող է լինել, քանի որ նրանք այս կյանքում քույր և եղբայր են ու տխրությունը և ուրախությունը խորհրդանշում են նույն սրտի երկու մասերը;

Բարության աղբյուրը Աստված Ինքն է և Իր օրինակով է, որ մարդիկ բարիքներ են կատարում իրենց նմանների նկատմամբ: Սակայն հաճախ կատարված բարիքից առաջացող չարիքն է, որ նվազեցնում է բարեգործների ուժը, նրանց զգուշացնելով վերահաս վտանգներից:

Այս պատմության նման այսօր էլ շատ ու շատ դեպքեր են կատարվում, օրինակի համար կարծեցյալ մուրացկանին մոտեցող քանի, քանի երեխաներ են առևանգվել ու անհետ կորել մեծ վիշտ պատճառելով նրանց բարիք գործելու խրատող ծնողներին;

Ամերիկյան քաղաքների ներկա իրականության մեջ դժվար է նույնիսկ կողմնորոշվել մի աղքատի օժանդակություն ցուցաբերելու հարցով, երբ նկատի ունենանք նրան տված նյութականի օգտագործման նպատակը: Վատ մոլությունների մեջ ընկնելով անտուն մնացած մուրացկաններից շատերը մարդկանց կողմից նվիրաբերված գումարները հաճախ չեն ծառայեցնում բուն նպատակին, այլ օգտագործում են թմրադեղերի ու ոգելից խմիչքների գնման համար: Կան մարդիկ, որոնք ավելի մարդասիրական մոտեցում են ցուցաբերում, նույնիսկ իմանալով այս մասին, նրանք մի տեսակ սա օգնություն են համարում, որպեսզի մուրացկանները բավարարեն իրենց մոլության ցանկությունը՝ չտառապեն ֆիզիկապես և հոգեպես: Այսինքն՝ *«Նա էլ մարդ է և պետք ունի օգնության, որ իր հաճույքը կարողանա բավարարել, թեկուզ բացասական և ժխտական իմաստով»:* Հետաքրքիր մոտեցում է և առիթ է տալիս մեզ մտածելու այս մասին: Սա նման է այն վիճակին, երբ բժիշկը իմանալով հանդերձ, որ հիվանդը ծխելու պատճառով տառապում է քաղցկեղից, նրան թույլատրում է օրական մի հատ ծխախոտ ծխել, հաշվի առնելով, որ տարիների ընթացքում նրա վարժված մարմինը խոր պահանջ ունի…

Այո՛, բարիքից չարիք է լինում, ինչպես նաև չարիքից՝ բարիք: Սակայն իմաստությունը կայանում է այս երկուսի հավասարակշռությունը պահպանելու մեջ, այսինքն՝ պիտի կարողանանք շրջահայաց և չափավոր լինել:

Յուրաքանչյուր մարդ թող ինքնիրեն հարց տա, արդյոք կարո՞ղ է այնքան արթուն լինել, որ ուրիշները չկարծեն, թե անհասկացող ու թույլ մեկն ենք: Որպեսզի այսպիսի մեկը չկարծեն քեզ, փորձիր չափավորել կատարածդ օժանդակությունները, ինչո՞ւ չէ քննելով նաև

դրանց հետևանքներն ու ազդեցությունները շրջապատիդ կյանքի վրա:

Ահա բարիքի արմատը, որի աղբյուրը, լավ հիշի՛ր և մտաբերի՛ր, բանականության ծնողն է՝ Աստված:

Նոր Կտակարանում Հիսուս պատմում է Բարի Սամարացու մասին (Ղուկ. 10:29-37): Մոտավորապես այսպիսի պատմություն էլ սա է.

«Աղքատներից մեկը ամեն օր տեսնում է մի հարուստ ու բարի մարդու, որն անցնում է իր գեղեցիկ ձիու վրա նստած: Նա այնքան է հավանում այդ ձիուն, որ երևակայությամբ պատկերացնում է, որ այն իրենն է;

Մի հարմար առիթով նա տեսնելով, որ ձիավորը գալիս է, հիվանդ ձևանալով ընկնում է գետնին և օգնություն խնդրում հարուստից: Ձիավորը բարի մարդ լինելով, անմիջապես ձիուց իջնում է և փորձում օգնել հիվանդին: Գետնին փռված գողը, սակայն, հանկարծ արագ վեր է կենում, ցատկում ձիու վրա ու սկսում է քշել: Ձին կորցնող մարդը նրա ետևից կանչում է, որ կանգնի ու լսի իրեն: Գողը կանգնում է բավական հեռավորության վրա ու սպասում հարուստի խոսքին: «Նժույգիս նմանը չկար այս քաղաքում և դու այն գողացար,- ասում է հարուստը,- թող քոնը լինի ու բարով վայելես, սակայն մի խնդրանք ունեմ քեզանից, այն, ինչ որ ինձ արեցիր, ուրիշին մի՛ պատմիր, որովհետև կարող է պատահել, որ իսկական մի հիվանդ օգնության կարիք ունենա և գետնին ընկած լինի ու ոչ մեկը նրան չմոտենա, կարծելով թե նա ձևացնում է, որ հիվանդ է» :

Դժբախտաբար շատերը կան, որոնք բարի գործերից ավելի իրենց հասցրած չարիքներն ուրիշներին պատմելով՝ հպարտանում են: Հատկապես դրամական գործարքների մեջ եղող անձինք, իրենց կտրիճ կարծելով, կուրծք են ծեծում հպարտանալով, թե այսինչ կամ այնինչ

անձից այսքան դրամ են կորզել: Մանավանդ և առավելապես, եթե դա տեղի է ունեցել մի հարուստ մարդու հետ, տասի տեղ հարյուր շահած լինելու մասին են պատմում ու կարծում են, թե դա մեծ հաջողություն է իրենց համար:

Փոխադարձ վստահությունը ամուսինների, ընկերների ու բարեկամների միջև, եթե առողջ հարաբերություն կարող է ստեղծել, պետությունների ու ազգերի միջև էլ խաղաղ պայմանների ծնունդ կտա, որից կարող են օգտվել բոլորը: Այդ վստահության պահպանման համար պատասխանատու ենք բոլորս, որը կարող է ստեղծվել ու պահպանվել անկեղծությամբ և սիրով: Չիավորին խաբող սուտ հիվանդները ավելի շուտ են աճում ու բազմանում, երբ գողերը պատմում են իրենց *«հաջողակ»* արարքների մասին;

Արդյոք դու, սիրելի եղբայր, որ կարդում ես իմ այս խոսքերը, ուրիշներին պատմո՞ւմ ես քո կատարած «քաջագործությունների» ու չարիքների մասին: Եթե այո՛, սխալ ես անում: Նայի՛ր ուշադիր շուրջդ, փնտրի՛ր ու կտեսնես, որ բազմաթիվ այլ պատճառներ և առիթներ կարող ես գտնել հպարտանալու և ինքնասիրությունդ շոյելու համար: *«Չարիքներո՞վ» ու «ճարպկություններո՞վ»* պիտի հպարտանաս, ամոթ է, ուրիշ բան չմնա՞ց: Իմացիր, որ այդ բոլորի վերջը կործանում է: Սերը դարձրու քո ամենօրյա բարիքի աղբյուրը: Բարությունը չարության աղբյուր չի կարող դառնալ, եթե դեպքեր էլ կան, մեկ է, դրանք չեն կարող ստվեր գցել իսկական բարության կարևորության ու օգտակարության վրա: Ամեն;

«ՀԱ'ՅՐ, ՆԵՐԻ'Ր ԴՐԱՆՑ, ՈՐՈՎՀԵՏԵՎ ՉԳԻՏԵՆ, ԹԵ ԻՆՉ ԵՆ ԱՆՈՒՄ» (ՂՈՒԿ. 23:34):

ՆԵՐԵԼՈՒ ՈՒ ՍԻՐԵԼՈՒ ՈԳԻՆ

Մեր Տիրոջ Հիսուս Քրիստոսի խոսքերն են խաչի վրա: Պատկերացրեք, արյունլվա, չարչարված, տանջված, արհամարհված, ապա խաչված Հիսուս խնդրում է Իր Հորից, որ ների նրանց: *«Հա՛յր, ների՛ր դրանց, որովհետև չգիտեն, թե ինչ են անում» (Ղուկ. 23:34):* Ինչ մեծություն: Նոր Տարվա և Սուրբ Ծննդյան Տոներն են, ուրախության և ցնծության օրեր: Հիսուս մեզ օրինակ է հանդիսանում, որ սիրենք ու ներենք մեկս մյուսին. կարո՞ղ ենք: Եթե չենք կարող, ինչպե՞ս պիտի շնորհավորենք միմյանց և սկսենք մի նոր կյանք Նոր Տարվա ընթացքում: Ինչպե՞ս կարող ենք Մանուկ Հիսուսի Սուրբ Ծննդյան Տոնը ողջունել. *«Քրիստոս Ծնաւ եւ Յայտնեցաւ», «Զեզ և մեզ մեծ ավետիս»* ասել, բարի լուր տալ, երբ չենք կարող սիրել և ներել մեկս մյուսին: Ի՞նչն է մեզ խանգարում, չէ՞ որ մենք քրիստոնյա ենք:

Հիսուս մեզանից ուղղակի պահանջում է կատարել Իր պատգամը և այն դարձնել մեր կյանքի ապրելու ձևը: Պատկերացրեք, եթե մեր հայրերն ու մայրերը իրենց զա-վակների հանդեպ ներողամիտ չլինեին, ի՞նչ պիտի լիներ այդ ընտանիքի վիճակը: Զղջումն ու ապաշխարությունը ներելու պայմաններն են: Մեղանչողին քանի՞ անգամ կարելի է ներել: Այս հարցը հուզում էր նաև Առաքյալներին, որոնք հարցրեցին Հիսուսին, թե՝ *«Տէր, քանի՞ անգամ, եթե եղբայրս իմ դեմ մեղանչի, պետք է ներեմ նրան. մինչև յո՞թն անգամ»:* Հիսուս պատասխանեց. *«Քեզ չեմ ասում թե՝ մինչև* յոթն անգամ, այլ՝ մինչև յոթանասուն անգամ յոթը» (Մատթ. 18:21-22):

«*Ինչո՞ւ ներել*» վերնագրով այս պատմությունը կարծում եմ հետաքրքիր կլինի:

«Թշնամիները հարձակվում են մի քաղաքի վրա: Բնակիչները փախչում են դեպի գետը՝ մյուս ափը անցնելու և փրկվելու համար: Ծանր քայլերով, քրտինքը երեսին գետին է մոտենում մի երիտասարդ՝ հսկա պարկը ուսին գցած: Ափի մոտ կանգնած փոքրիկ նավակի միջից մի մարդ այդ տեսնելով ասում է նրան.

Եղբայր, պարկդ թող ու մտիր նավակ, քանի որ այն կարող է միայն երկու մարդ տեղափոխել:

Երիտասարդը պատասխանում է.

Չեմ կարող իմ պարկը թողնել ու դրանից հրաժարվել, այն լցված է քարերով, որոնցով մեր քաղաքի բնակիչները ինձ հարվածել և ցավ են պատճառել: Ես դրանք հավաքել եմ ու մյուս ափ պիտի անցկացնեմ, որպեսզի դրանցով հարվածեմ ինձ ցավ պատճառողներին:

Եղբայր, դու այդպես և նավակը կխորտակես և մեզ՝ քո պարկի հետ միասին, դատարկիր այն ու նավակ մտիր:

Երիտասարդը պարկը դնում է գետնին, բացում նրա բերանը, հանում տարբեր չափի քարերն ու մինչև հիմա որոշում է, թե ի՞նչ մեծության քարերը թողնի պարկում... Այդ ընթացքում նավակը հեռանում է ափից ու երևում են թշնամիները: Երիտասարդը այնքան կուրացած էր վրեժխնդրությունից, որ նախընտրում է թշնամու ձեռքն ընկնել, նույնիսկ մեռնել, քան թե ներել իրենց ցավ պատճառողներին: Նրա մեջ խոսում էր վրեժ լուծելու և «արյունով արյունը լվալու» ցանկությունը: Ի՞նչ եք կարծում, ճի՞շտ էր նրա որոշումը:

Հոգևոր իմաստով պարկը շալակած Երկնքի Արքայություն մտնելը անհնար է... մանավանդ, երբ թշնամին մեղքի միջոցով ներխուժել է մեր կյանքից ներս» (Հովհաննես Մանուկյան, «Առակներ», Երևան էջ 12):

Ցավոք այսօր ներման շնորհքը պակասում է մեր մեջ: Փոխանակ մտածենք այդ պակասը լրացնելու մասին, ամեն մեկս մի դատավոր դարձած այնպիսի ատելությամբ ենք լցված իրար նկատմամբ և այնպիսի դատեր ենք տեսնում, որ նույնիսկ անհավատ մարդկանց նախանձն են շարժում:

Եկե՛ք այս Նոր Տարվա և Սուրբ Ծննդյան Տոները առիթ ունենալով՝ ներենք միմյանց, ողջույն տանք իրար սիրով ու հավատով, իսկ եթե մեկը մեր հանդեպ սխալ է գործել կամ նեղացրել է մեզ, մենք չդառնանք վրիժառու ու գիշեր-ցերեկ մտածենք այս մասին, այլ թողնենք Աստծու հույսին, Նրա դատաստանին և հիշենք մեր Տիրոջ խոսքը. «*Իմն է վրեժխնդրությունը և ես կհատուցեմ» (Հռովմ. 12:19):* Մի՛ սպասեք խաղաղություն այնտեղ, ուր բացակայում է ներելու և սիրելու ոգին:

Մեղքը մի սև ամպ է, որը ստվերի մեջ է դնում Աստծուն, Նրան պահում ու հեռացնում է մեր տեսողությունից:

Աստված ներում է մեզ երկնքից, իսկ մենք երկրի վրա ապրելով պարտավոր ենք ներել մեր նմաններին: Ներման չափանիշը սերն է: Աստված սեր լինելով՝ անհունորեն ներում է:

Ինչո՞ւ չներենք մեր եղբորը, մի՞թե մենք Աստծուց ավելի մեծ ենք… *«Եթե դուք մարդկանց ներեք իրենց* հանցանքները, ձեր երկնավոր Հայրն էլ ձեզ կների» *(Մատթ. 6:14-15)*,- ասում է Հիսուս:

Ներենք միմյանց և ասենք. *«Խաղաղություն բոլորին»*: Ամեն:

ԿՅԱՆՔԻ ԻՄԱՍՏԸ

Ի՞ՆՉ ԵՆՔ ՓՆՏՐՈՒՄ ԱՅՍ ԿՅԱՆՔՈՒՄ ԵՎ Ի՞ՆՉ Է ԿՅԱՆՔԻ ԻՄԱՍՏԸ

Պողոս Առաքյալը իր աշակերտ Տիմոթեոսին ուղղած երկրորդ նամակի 3-րդ գլխի 1-17 համարներում գրում է.

«Վերջին օրերին չար ժամանակներ պիտի գան, երբ մարդիկ պիտի լինեն անձնասեր, փողասեր, հպարտ, ամբարտավան, հայհոյող, ծնողներին անհնազանդ, անշնորհակալ, անմաքուր… մեծամիտ, ավելի շատ հեշտասեր, քան աստվածասէր…» (Բ. Տիմ. 3:1-4):

Այս խոսքերը կարդալուց հետո, ակամա մտածում ենք, թե մենք իբրև մարդիկ *«Ի՞նչ ենք փնտրում այս կյանքում և թե ի՞նչ է կյանքի իմաստը»:*

Քանի դեռ երիտասարդ ենք, ձգտում ենք կյանքը զգալ մեր ձևով, այսինքն՝ երազանքները իրականություն դարձնել. տքնաջան աշխատել, սիրել, սիրվել ու փորձել վայելել կյանքի բարիքները: Գլխապտույտ այս վազքի մեջ մենք ուզենք, թե չուզենք աճում ենք, ինչպես ասում են՝ *«հասակ»* ենք առնում և, երբ հասնում ենք մի տարիքի, ինքներս մեզ հարց ենք տալիս, թե՝ *«Ի՞նչ ենք արել ոչ միայն մեր ֆիզիկական մարմնի առողջության, այլ մանավանդ՝ մեր հոգու հասունության համար»:*

Հոգու նպատակը Քրիստոսին հասնելն է, որը հնարավոր է միայն հավատով ու աղոթքով: Քանի երիտասարդ ենք, ամեն ինչ անում ենք, որ մի բանի հասնենք. ոմանք հաջողություններ են ունենում և մեծ հարստություն են կուտակում, դառնում մեծահարուստ, ուրիշներ գիտության մեջ են առաջ գնում, իսկ ոմանք էլ համեստորեն շարունակում են իրենց կյանքը մշտապես փառք տալով Ամենակարող Աստծուն:

Նրանք ովքեր միայն նյութական հարստություն էին կուտակել և դարձել մեծահարուստ, հասկանում են, որ միայն դրամով ոչ մի արդյունքի չեն հասել, գիտությամբ առաջ գնացողները, հասկանում են, որ միմիայն գիտությամբ շատ բանի չես կարող հասնել: Իսկ նրանք, որոնք զոհացել են իրենց վաստակով և միշտ Աստծուն փառք են տվել ու օգնել իրենց նմաններին, ուրախ և գոհ են իրենց անցկացրած տարիների համար, որոնք լցրել են իմաստությամբ:

Այս պատմությունը կոչվում է « ԱՐԴԱՐ ՄԱՐԴԸ» կարծում եմ հետաքրքիր կլինի.

«Մի երիտասարդ ուխտել էր անմաքուր բան ամենևին չուտել և մի օր նա գնաց գետի եզրը ու տեսավ, որ ջուրը մի խնձոր է բերում: Երիտասարդը սոված էր, առավ խնձորը ու կերավ, ապա միտքն ընկավ իր ուխտը և խղճմտանքով գնաց գետն ի վեր. գտավ մի այգի և իմացավ, որ խնձորն այդ այգուց էր: Երիտասարդն ասաց այգետիրոջ. «Ողորմիր ինձ և առ խնձորի գինը կամ արդար արա, որովհետև ես անմաքուր բան ամենևին չեմ կերել»: Եվ բուրաստանի տերն ասաց. «Կեսը, որ իմն է, քեզ եմ բաշխում և կեսը, որ իմ եղբորս է, նրան տեր չեմ: Եվ իմ եղբայրը հեռու է այստեղից վեց օրվա ճանապարհ»: Եվ երիտասարդը ճանապարհ ընկավ և գտավ այն մարդուն, ասաց. «Կամ առ քո կես խնձորի գինը և կամ ինձ բաշխիր»: Եվ մարդն ասաց. «Ոչ գինը կառնեմ և ոչ քեզ կբաշխեմ: Թե կուզես, որ քեզ բաշխեմ, ես մի աղջիկ ունեմ՝ որ <u>ոչ ականջ ունի և ոչ էլ լեզու և ոչ ձեռք և ոչ ոտք,</u> նրան կին առ, որ քեզ բաշխեմ»:

Երիտասարդն անճարացած առավ այդ աղջկան, և երբ առագաստ մտան, տեսավ, որ աղջիկը ամենևին առողջ էր: Եվ երիտասարդն աներոջն ասաց. «Ինչո՞ւ էիր ծաղրում քո աղջկան»: «Եվ նա ասաց. <u>Ես ճշմարիտ էի, որովհետև ծնված օրից իմ աղջիկը արեգակի լույսը</u>

երդիկից է տեսել և օտար մարդու ձայն չի լսել և օտարի հետ չի խոսել և ձեռքով մեղք չի շոշափել և ոտքը դռնից դուրս չի դրել: Եվ ես քեզ նման արդար մարդ էի ուզում, և ահա դու եկար»: (ՎԱՐԴԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԱՅԳԵԿՅԻ, *«Աղվեսագիրք», էջ 76):*

Երբեմն մարդիկ ինձ հարց են տալիս. թե՝ *«Տեր Հայր, եթե գամ եկեղեցի, ի՞նչ կարող եմ ստանալ»:* Ես էլ անկեղծորեն պատասխանում եմ. *«Եկեղեցին քեզ պիտի տա հոգու հանգստություն և խաղաղություն, որը ոչ մի գումարով չես կարող գնել. իսկ դա կարծում ես քի՞չ է»:*

Ձեզանից շատերը ապրել են Խորհրդային Հայաստանում, ես՝ նույնպես: Դեռևս այդ տարիներից կարծես սովորություն էր դարձել և կամ կարելի է ասել ընդհանուր մտայնություն էր, թե եկեղեցի պիտի գնան միայն տարիքն առած մարդիկ: Անշուշտ սա սխալ մտածում է, երբեք էլ այդպես չի եղել: Պատանիները և երիտասարդները, որոնք դեռևս հասունացման շրջանում են գտնվում, ոչ թե պիտի խուսափեն եկեղեցի գալուց, այլ ընդհակառակը, եթե ուզում են հեռու մնալ կյանքի բացասական և ողբերգական մոլություններից, հաճախ պիտի գան եկեղեցի, որպեսզի գտնեն այն հարցերի պատասխանները, որոնք կօգնեն իրենց ճիշտ կառուցել կյանքը, ապրեն ոչ թե ժամանակավոր մարդկանց հաճելի կյանքով, որի ավարտը հուսախաբությունն ու հուսահատությունն է, այլ աստվածահաճո կյանքով, որը նշանակում է, թե նրանք երկնային կյանքը ապրում են երկրի վրա:

Քարոզիս սկզբում կարդացի Պողոս Առաքյալի խոսքերը. *«Վերջին օրերին չար ժամանակներ պիտի գան երբ մարդիկ պիտի լինեն անձնասեր, փողասեր, հպարտ, ամբարտավան, հայհոյող, ծնողներին անհնազանդ, անշնորհակալ, անմաքուր, անհաշտ, անգութ, բանսարկու, անժուժկալ, դաժանաբարո, անբարեսեր, մատնիչ, հանդուգն, մեծամիտ, ավելի շատ հեշտասեր, քան աստվա-*

ծասեր, մարդիկ, որ ունեն աստվածպաշտության կերպարանք, սակայն ուրացել են նրա զորությունը»: Եթե մարդիկ, առավելապես երիտասարդները ավելի մոտ լինեն Աստծու Տանը, աղոթքով ու հավատով անցկացնեն իրենց տարիները, հեռու կմնան *անշնորհակալ, ծնողներին անհնազանդ, հայհոյող, անգութ, անմաքուր լինելուց և աստվածավախ ու բարի ժառանգներ կլինեն:*

Դժբախտաբար տարբեր տարիքի շատ մարդիկ այսօր գալիս են եկեղեցի միայն Ծնունդից Ծնունդ կամ Զատիկից Զատիկ և կամ այն ժամանակ, երբ խնդիրների ու դժվարությունների մեջ են ու այլևս ճար չունեն և վերջին հույսը եկեղեցին է կամ հոգևորականը: Եթե հասկանանք իր ժամանակին, կյանքում մեր կորցրածը ոչ մի տեղ չենք կարող գտնել, բայց եկեղեցում կգտնենք ամենամեծ գանձը՝ *«Հոգու խաղաղությունը»:* Հավատացեք ամեն մարդ հոգու խաղաղության կարիքն ունի, որը մեզ կարող է տալ միայն Աստված: Եկեղեցի գալով դուք լսում եք Աստծու ձայնը, որը կանչում է ձեզ դեպի Իրեն: Աստված բնակվում է բոլոր նրանց սրտերում, ովքեր լսում են Նրա ձայնը, փնտրում Տիրոջը, ձգտում դեպի այն ամենը, ինչով ապրում է Եկեղեցին:

Երանի այսպես լիներ, սակայն իրականությունն այլ է: Մեր օրերում հատկապես երիտասարդների համար դժվար է ապրել քրիստոնեական կյանքով, որը նշանակում է լողալ գետի հոսանքին հակառակ, որովհետև այսօրվա կյանքում *բարեգործությունը, բարությունը, մեծահոգությունը, սերը, հասկացողությունը, ազնվությունը* չասենք մոռացված, բայց մի կողմ թողնված կամ կարելի է ասել մերժված արժեքներ են: Յուրաքանչյուր մարդ, սակայն, պետք է գիտակցի, առավելապես երիտասարդները, որ եկեղեցին ժամանակավոր, կեղծ արժեքների մասին չի կարող քարոզել:

Հայաստանում և այստեղ ևս ես ականատես եմ եղել, որ մեր զավակները եկեղեցի են գալիս միայն մոմ վառելու համար, շատ քչերն են, որ մնում ու մասնակցում են Սուրբ Պատարագի արարողության: Ասում են, երկար է, չենք հասկանում: Սրանք դատարկ խոսքեր են: Ես կարող եմ շատ օրինակներ բերել դրա հակառակը ապացուցելու համար, բայց այսօր դրա ժամանակը չի: Պետք է հասկանանք ու գիտակցենք, որ Եկեղեցին այն հոգևոր Տունն է, Աղոթքի Տունն է, որը օդի ու ջրի պես անհրաժեշտ է մեզ բոլորիս, մանավանդ այս օտար ափերում: Եկեղեցին չի ստիպում մեզ կտրվել աշխարհիկ կյանքից, կոչ չի անում ապրել միայնակ, անձը զրկել կյանքի վայելքներից ու չի վախեցնում դժոխքով և սատանայով, ինչպես անում են օտար ուսմունքի մոլորեցնողները, այլ՝ ընդհակառակը, ուրախացնում է Քրիստոսի բերած բարի ավետիսով: Այն հորդորում է մեզ լինել երկրի աղը և աշխարհի լույսը *(Մատթ. 5:13-14),* ինչը նշանակում է՝ ապրել այն բարձրագույն արժեքներով, որոնք մեզ ժառանգ են թողել մեր Տերը և մեր Սուրբ Հայրերը:

Պողոս Առաքյալը Տիմոթեոսին ուղղած իր երկրորդ նամակը վերջացնում է այս խոսքերով, որը հրաշալի օրինակ է մեզ բոլորիս, խոսքեր, որոնք երկու հազար տարի հետո էլ այժմեական են.

«Իսկ դու հետևեցիր իմ վարդապետությանը, իմ վարմունքին, կամեցողությանը, սիրուն, համբերատարությանը և այն հալածանքներին ու չարչարանքներին, որոնք պատահեցին ինձ Անտիոքում, Իկոնիոնում և Լյուստրայում. գիտես թե ինչպիսի հալածանքների ենթարկվեցի, բայց Տերն ինձ փրկեց այդ բոլորից: Եվ բոլոր նրանք, որ ուզում են աստվածապաշտությամբ ապրել Քրիստոս Հիսուսով, հալածանքների մեջ պիտի լինեն: Իսկ չար ու խաբեբա մարդիկ չարից այն կողմ էլ պիտի գնան, իրենք մոլորված՝ պիտի մոլորեցնեն ուրիշներին:

Բայց դու հաստա՛տ մնա այն բանի մեջ, որ սովորեցիր և որին հավատարիմ եղար, գիտես, թե ումից ես սովորել, որովհետև մանկուց գիտես Սուրբ Գրքերը, որոնք կարո՛ղ են իմաստուն դարձնել քեզ փրկության համար այն հավատի միջոցով, որ Քրիստոս Հիսուսի մեջ է» (Բ. Տիմ. 3:10-15):

Հետևենք Պողոս Առաքյալի խրատներին և շարունակենք մեր կյանքը մշտապես հավատարիմ մնալով մեր Սուրբ Հայրերի ճշմարիտ հավատին, հավատ, որը ավելի քան երկու հազար տարուց ի վեր դարձավ ամուր վահանն ու պաշտպանը մեր Հայրենիքի և մեր ժողովրդի: Ամէն:

ՀՐԵԱ ՕՐԵՆՍԳԵՏԻ (ՓԱՍՏԱԲԱՆԻ) ԻՄԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ

«ԵԹԵ ԱՅԴ ԽՈՐՀՈՒՐԴԸ ԿԱՄ ԱՅԴ ԳՈՐԾԸ ՄԱՐԴԿԱՆՑԻՑ Է, ԿՔԱՆԴՎԻ, ԻՍԿ ԵԹԵ ԱՍՏԾՈՒՑ Է, ՉԵՔ ԿԱՐՈՂ ԴՐԱՆՔ ՉԱԽԵՂՈՑՆԵԼ. ՄԻ ԳՈՒՑԷ ԱՍՏՈՒԱԾԱՄԱՐՏ ԷԼ ԴԱՌՆԱՔ» (ԳՈՐԾՔ 5:38-39):

Այս խոսքերը ես վերցրել եմ Գործք Առաքելոցի 5-րդ գլխի 38-39 համարներից:

Գամաղիել անունով մի հրեա օրենսգետ հանձն առավ պաշտպանել Հիսուսի աշակերտներին, երբ քրիստոնեություն քարոզելու համար նրանց ձերբակալել էին: Իրապես իր գործին գիտակ օրենսգետը կարևորությամբ նկատի է առնում խնդրի երկու կողմերը և եթե հավատում է արդարության ու գործի մաքուր լինելուն, ամեն գնով փորձում է պաշտպանել արդարին: Ահա այդպես եղավ պարագան այս օրենսգետի հետ: Նա տեսնելով Հիսուսի աշակերտների կատարած հրաշագործությունները, հակառակ իր հրեա լինելուն, անվախ, համարձակորեն, օրենքի սահմաններից դուրս չելնելով՝ հանձն է առնում պաշտպանել նրանց իրավունքները:

Հիսուսի Հարությունից հետո որոշ ժամանակ անց, առաքյալները ստանալով Սուրբ Հոգու շնորհները, զբաղվեցին Ավետարանի քարոզչությամբ, ինչպես որ իրենց Վարդապետը Համբարձման լեռան վրա նրանց կտակ էր թողել. «*Գնացե՛ք ուրեմն աշակերտ դարձրե՛ք բոլոր ազգերին, նրանց մկրտեցե՛ք Հոր և Որդու և Սուրբ Հոգու անունով…» (Մատթ. 28:19):* Բնական ձևով, ինչպես որ հրեաները Հիսուսին չարչարեցին, տանջեցին, փշե պսակ դրեցին Նրա գլխին և ապա խաչեցին, նույն ձևով պիտի վարվեին ու հալածեին Նրա հետևորդ առաքյալների հետ, որոնք տաճարում քարոզում էին քրիստոնեությունը և մարդկանց դարձի բերում:

Եվ այդպիսի մի օր, երբ առաքյալները իրենց քարոզչական գործն էին կատարում, ձերբակալվում են ու բանտ տարվում, այն մեղադրանքով, որ նրանք իբրև թե խռովություն են սերմանում ժողովրդի մեջ: Երբ նրանք Քահանայապետի մոտ հարցաքննության են բերվում, Գամաղիել անունով մի հրեա ուսուցիչ, առաջ անցնելով պաշտպանում է առաքյալներին՝ ասելով. «*Արդ, ասում եմ ձեզ, հեռո՛ւ մնացեք մարդկանցից և բա՛ց թողեք նրանց, որովհետև եթե այդ խորհուրդը կամ այդ գործը մարդկանցից է, կքանդվի, իսկ եթե Աստծուց է, չեք կարող դրանք ձախողեցնել. մի գուցէ աստուածամարտ էլ դառնաք» (Գործք 5:38-39):*

Այդ քաջ և ազդեցիկ արտահայտությունը կատարողը Հիսուսին հավատացողներից մեկը չէր, սակայն որպես օրենսգետ, պաշտպանում է առաքյալներին, հակառակ, որ նրանք որևէ ձևով չպիտի կարողանային նյութապես վճարել նրան: Այսօր ոչ մի օրենսգետ երեսիդ չի նայի, եթե իմանա, որ հնարավորություն չունես նրան վճարելու իր ուզածի չափով: Իսկ Գամաղիելը ոչ միայն պաշտպանեց առաքյալներին, այլև նրան հաջողվեց համոզել դատական ատյանին նրանց չվնասելու և ազատ արձակելու: Շնորհիվ այս օրենսգետի, առաքյալները ազատվեցին և շարունակեցին իրենց քարոզչությունը. «*Ժողովականները հավանություն տվեցին նրան և առաքյալներին կանչելով, զանահարեցին նրանց ու պատվիրեցին, որ Հիսուսի անունով այլևս չխոսեն և արձակեցին նրանց» (Գործք 5:40),*- ասվում է Գործք Առաքելոց գրքում:

Քրիստոս արդեն իսկ գոյություն ունեցող օրենքի վրա հիմնեց Իր նոր կրոնը: Հիշեցե՛ք Իր խոսքը. «*Նոր պատվիրան եմ տալիս ձեզ, որ սիրեք միմյանց, ինչպես որ ես ձեզ սիրեցի. դուք էլ միմյա՛նց սիրեցեք: Եթե դուք միմյանց սիրեք, դրանով բոլորը պիտի իմանան, որ դուք իմ աշակերտներն եք» (Հովհ. 13:35):* Սիրո այս նոր կրոնը հնի համեմատ ավելի ուժ ու եռանդ տվեց նրանց, որոնք

ընդունեցին այն: Անշուշտ որ այն ժամանակվա պայմաններում քրիստոնեության տարածումը լուրջ սպառնալիք նկատվեց:

Գամաղիելը լինելով օրենքի մարդ, գիտակցեց և հասկացավ առաքյալների քարոզչության բուն էությունը, սակայն նրանց կատարածի մեջ որևէ սպառնալիք չնկատեց: Որպեսզի նա կարողանար փաստել իր պաշտպանության արդարացիությունը, ներկայացրեց անցյալից քաղաքական ապստամբության երկու օրինակ: Այդ երկու ապստամբությունը ունեցել էին մեծ թվով հետևորդներ: Երբ այդ շարժումների պարագլուխները՝ Թևդասն ու Հուդա Գալիլիացին *(Գործք 5:36,37)* սպանվեցին, նրանց հետևորդները ցրվեցին և իրենց շարժումները այլևս չշարունակվեցին: Սբ» Գրքում այսպես է գրված նրանց մասին, *«Ով՛ իսրայելացիներ, զգո՛ւյշ եղեք թե այս մարդկանց ի՞նչ պիտի անեք: Այս օրերից առաջ մեջտեղ ելավ Թևդասը, որն իր մասին ասում էր, թե ինքը երևելի մեկն է և նրան հարեցին թվով մոտ չորս հար-ուր մարդիկ. Նա սպանվեց և բոլոր նրանք, որ նրա հետ միաբանել էին, բաժան-բաժան եղան, ու նրանցից ոչինչ չմնաց: Դրանից հետո, մարդահամարի օրերին, մեջտեղ ելավ Հուդա Գալիլիացին և շատ ժողովուրդ ապստամբեցրեց իր հետևից նա էլ կորավ, ու բոլոր նրանք, որ նրա հետ համաձայնել էին, ցիրուցան եղան» (Գործք 5:35-37):*

Ուստի Գամաղիելը եզրակացնելով ասում է, եթե Աստված կողմնակից էր Քրիստոսի հետևորդներին, հակառակ բոլոր դիմադրություններին ու հալածանքներին, նրանք հաջողություն պիտի գտնեին: Իսկ եթե առաքյալների սովորեցրածը մարդկային իմաստություն է միայն՝ առանց աստվածային օգնության, մտահոգվելու կարիք չկա, նրանք պիտի ձախողվեն և անհետանան, ինչպես պատահեց վերևում մեր հիշած շարժումների պարագային:

Իրապես Աստված մարդկանց հավատացողին կամ անհավատին շնորհել է պարզ մի տրամաբանություն, տեսնել և տարբերել լավը՝ վատից: Ուրեմն, մեր միտքն ու կամքն է, որ մեզ մոտեցնում է ընտրելու բարին կամ չարը: Երբ դեմ հանդիման ենք գալիս ճշմարտության, միայն այն ժամանակ ենք գիտակցում, թե ինչքան հեռու ենք նրանից:

Գամաղիելը տեսել էր քրիստոնեության տված արդյունքն ու բարիքը և նրա համար հետաքրքիր էր իմանալ այդ նոր օրենքի ու կանոնի լրացուցիչ հատկանիշների, իմաստի և իրագործելիության մասին: Ուստի այն բոլոր բժշկություններն ու հրաշքները, որոնք տեսել էր նրանց կողմից, իզուր տեղը չէին կատարվել: Սակայն նա հուսահատված էր և սաստիկ նեղված իր կրոնի ռաբբիներից, որոնք չէին կարողացել անել Հիսուսի առաքյալների կատարած աշխատանքի նույնիսկ կեսի չափը:

Այդ հրեա օրենսգետը Աստծու օգնությամբ գործածեց իր իմաստությունը և զգուշացրեց իր մարդկանց, որ չվնասեն քրիստոնեության քարոզիչներին: Պարզ խոսքերով նա բացատրեց, որ եթե քրիստոնեությունը սուտ էր, նա շուտով կձախողվեր, իսկ եթե Աստծուց, ոչ ոք չէր կարող լռեցնել, որովհետև նրա ետևում Աստված էր կանգնած:

Եկեղեցին իր հիմնադրությունից մինչև այսօր, գործում է Հիսուսի անունով: Եկեղեցին ժողովուրդն է, ապրող ու շնչող մարդիկ, որոնք ծառայելով և աղոթելով փորձում են գտնել դեպի Աստծու Թագավորությունը տանող ճանապարհը: Բայց ծառայելուց և աղոթելուց առաջ, մարդիկ պետք է գիտակցեն ու հասկանան, թե ի՞նչ է ճշմարտությունը; Եթե չճանաչենք և չհասկանանք Աստծու ճշմարտությունը, շատ հավանական է, որ նույնիսկ կարող ենք Նրա դեմ գործել, ինքներս մեզ հավատացնելով, թե ծառայում ենք Աստծուն: Մեր մտածումները և գործերը պետք է համապատասխանեն աստվա-

ծային ճշմարտության: Այդ պարագային միայն մեր աշխատանքները լավ արդյունք կունենան: Մի պահ կանգ առնենք և հարց տանք մենք մեզ, թե արդյոք մեր գործերը համապատասխանո՞ւմ են ճշմարտության: Կարելի է ասել, թե ճշմարտությունը ճանաչելը ավելի անհրաժեշտ է, քան նույնիսկ այն հասկանալն ու բացատրելը: Մենք կարող ենք լավ ուսուցիչներ լինել մեր իմացածը բացատրելու կամ սովորեցնելու, բայց կարևոր է, որ հավատանք այդ ճշմարտության ու գնահատենք այն: Ավետարանի ճշմարտությունը իմանալու, հասկանալու և գնահատելու համա, այն ամեն օր պիտի կարդանք ու ոչ միայն պարզապես կարդանք կարդացած լինելու համար, այլ գործադրենք ու նույնիսկ սովորեցնենք լավ և բարի օրինակ հանդիսանալով ուրիշներին, որոնք դեռևս քայլում են խավարի մեջ:

Գամաղիելը՝ օրենքի այս բարի ուսուցիչը քննեց ու նկատի առավ այս բոլոր պարագաները և ապա նոր հանձն առավ պաշտպանել առաքյալներին՝ ճշմարտության քարոզիչներին ու քրիստոնեությունը:

Հիսուս մեզ սովորեցրեց ամենամեծ ճշմարտությունը՝ *«Միրեցեք մեկդ մյուսին»,* օգնեցեք և աղոթեցեք մեկդ մյուսի համար ու Իր Վարդապետությունը հաստատեց Սիրո այս անքակտելի հիմքի վրա:

Եկեք մենք էլ մեր այս կարճ երկրային կյանքում հետևենք Սիրո պատվիրանին՝ մեր ընտանիքներից ներս, մեր շրջապատում և ամենուր ու փորձենք ապրել մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի, օրինակելի կյանքով՝ *արդար, մաքուր, ճշմարիտ և ուղիղ ճանապարհով,* որպեսզի կարողանանք նայել «*Աստծու աչքերին*»: Ամեն:

ԻՆՉՊԵ՞Ս ՀԱՂԹԵԼ ՉԱՐԻՆ

«ԹՈՒՅԼ ՄԻ' ՏՈՒՐ, ՈՐ ՉԱՐԸ ՀԱՂԹԻ ՔԵԶ, ԱՅԼ ԲԱՐԻՈ'Վ ՀԱՂԹԻՐ ՉԱՐԻՆ» (ՀՌՈՄ· 12:20-21)

Պողոս Առաքյալի խոսքերն են ուղղված Հռոմայեցիներին: Ինչո՞ւ, ի՞նչն էր պատճառը: Պարզ է, թե ինչո՞ւ, որովհետև Հռոմայեցիների համայնքը նոր էր և քրիստոնյաները բավական դժվարություններ ունեին հոգևոր և բարոյական կյանքի տեսակետից:

Եթե ուսումնասիրենք աշխարհի մարդկության անցած պատմությունը, կտեսնենք, որ բարու և չարի առեղծվածը միշտ էլ եղել է մարդկանց ու ժողովուրդների ուշադրության կենտրոնում: Իմաստասերներ, կրոնաբարոյագետներ, աստվածաբաններ և գիտնականներ իրենց մեկնաբանություններն են կատարել այս հարցի վերաբերյալ:

Այդքան էլ հեշտ չի այս պատգամը իրագործել մեր կյանքում: Իսկապես քրիստոնեական ուժեղ ոգի է պետք, որպեսզի չարի դեմ բարիով կարողանաս հաղթանակ տանել: Նույնիսկ նշանավոր աղոթասացները, հավատով ուժեղները, սիրո առաքյալները և մեր սրբերը, որոնք իրենց կյանքը չզլացան զոհաբերելու հանուն Քրիստոսի, շատ անգամներ դժվարություններ են ունեցել այս պատգամը իրականություն դարձնելու: Բայց մի բան պարզ է ու հասկանալի· այս գործադրելու համար շատ կարևոր է մեր ամենօրյա անձանձրույթ աղոթքը, որը մեր հավատը պիտի զորացնի, որպեսզի մեր հույսը դնենք Աստծու վրա· Նրա կամքո'վ պիտի լինի ամեն ինչ, առանց Նրա նույնիսկ ծառի մի տերև իսկ չի կարող շարժվել: Դրա համար էլ Տերունական աղոթքի մեջ ասվում է· *«Եղիցին կամք քո որպէս յերկինս եւ յերկրի»,* այսինքն՝ *«Թող Քո կամքը լինի ինչպես երկնքում, այնպես էլ երկրի վրա»:*

Եկեք մի պահ անդրադառնանք Հիսուսի այս խոսքերին· *«Եթե քաղցած է քո թշնամին, հա՛ց տուր նրան, և թե ծարավ, ջո՛ւր տուր նրան· այս անելով՝ կրակի կայծեր կկուտակես նրա գլխին: Թույլ մի՛ տուր, որ չարը հաղթի քեզ, այլ բարիո՛վ հաղթիր չարին» (Հռոմ· 12:20-21)* և հարցին մոտենանք հոգեբանական տեսանկյունից:

Իբրև մարդ, եթե մեր մեջ արթուն ու պատրաստ չի քրիստոնյա մարդը, անկարելի է, որ կարողանանք իրագործել Առաքյալի այս խոսքերը, այսինքն՝ վրեժ լուծելու, բռնելու ու չարչարելու, տանջելու և նույնիսկ մահվան դատապարտելու փոխարեն, կերակրենք, սիրենք ու կարիքի դեպքում օգնենք մեր թշնամուն: Եթե սիրելու և օգնելու փոխարեն, հակառակը անենք, այսպես վարվելով մենք ցույց կտանք, որ մեր մեջ բացակայում է Աստծու սերն ու ներողամտության ոգին: Էլ չեմ խոսում վերջին խրատի մասին· *«Թույլ մի տուր չարը հաղթի քեզ, այլ բարիո՛վ հաղթիր չարին»,* որով ըստ Առաքյալի՝ *«այս անելով՝ կրակի կայծեր կկուտակես նրա, այսինքն՝ թշնամու գլխին»:*

Եթե չարը չարիքով փոխադարձենք, ի՞նչ պիտի շահենք, ոչինչ, ոչ մի բան չենք կարող փոխել մեզ չարիք պատճառած անձի հոգեկան աշխարհում, այլ՝ ընդհակառակը, մենք մեզ իջեցրած կլինենք չարագործի մակարդակին: Ինքը մեր Տերը օրինակ հանդիսացավ մեզ, խաչի վրա ներելով Իրեն չարչարողներին, տանջողներին և խաչ բարձրացողներին՝ *Հայ՛ր ների՛ր դրանց, որովհետեւ չգիտեն թէ ինչ են անում» (Ղուկ. 23:34)*

Բարի մարդուց միայն բարիք կարելի է սպասել: Հիսուս ասում է· *«Չկա բարի ծառ, որ չար պտուղ տա և դարձյալ՝ չկա չար ծառ, որ բարի պտուղ տա, որովհետև յուրաքանչյուր ծառ իր պտղից է ճանաչվում» (Ղուկ· 6:43-44):* Մենք հայերս գեղեցիկ խոսք ունենք, երբ տեսնում ենք մի հավատավոր, խելոք, կրթված ու զարգացած երիտա-

սարդի և գիտենք ծնողներին, ասում ենք· *«Պտուղը ծառից հեռու չի ընկնում»,* այս ասելով նկատի ենք ունենում անշուշտ երիտասարդի ծնողների կրթուած ու շնորհքով մարդիկ լինելը:

Հասկանալի է և ընդունելի, որ իբրև թույլ մարդիկ շատ անգամ մեր հոգին՝ Աստծու տուած պարգևը, պատրաստ է չարին բարությամբ հաղթելու, բայց մեր մարմինը թույլ է այն գործադրելու: Սակայն անկարելի բան չկա աշխարհում, եթե մարդը իր ամբողջ էությամբ ձգտի իրագործել այն: Մենք կարող ենք հաղթել մեր թուլություններին, վնասակար մոլություններին, անկարելի թվացող երևույթներին, երբ գործադրենք Աստծու կամքը, որը մեր մեջ է· միայն հարկավոր է, որ ցանկանանք: Հեշտ է ասել՝ չեմ կարող, չի ստացվում, հնարավոր չի, անկարելի է և այսպիսի թույլ ու Նրա կամքին հակառակ արտահայտություններ: Հիսուս շարունակում է· *«Բարի մարդը իր սրտի բարի գանձերից բարին է բխեցնում, իսկ չար մարդը չարն է բխեցնում, որովհետև սրտի ավելցուկից է, որ խոսում է նրա բերանը» (Ղուկ· 6:45):*

Ֆրանսիական առածն ասում է· *«Ես ինձ կարող եմ պաշտպանել իմ թշնամիներից, եթե Աստված էլ ինձ պաշտպանի իմ բարեկամներից»:* Այս խոսքը կարելի է այսպես մեկնաբանել· *«Ավելի նախընտրելի է թշնամու անկեղծ ապտակը, քան բարեկամի կեղծավոր համբույրը»:* Ֆրանսիացիները շարունակում են· *«Ավելի լա՛վ է ունենալ միայն մի բարեկամ, որը անկեղծ է, քան ունենալ բազմաթիվ բարեկամներ, որոնք սուտ ու կեղծավոր են»:* Սա էլ կարելի է այսպես մեկնաբանել· *«Նախընտրելի է թշնամու խոժոռ դեմքը, քան կեղծավոր բարեկամի սուտ ժպիտը»:*

«Ինչպե՞ս կարելի է հաշտեցնել անմեղությունը՝ խարդախության հետ, և բարությունը՝ չարության հետ: Կարելի՞է բարին համեմատել գործված չարիքի հետ»:

Այսպիսի հարցեր են ծագում յուրաքանչյուր մարդու մտքում, երբ ամեն րոպե առնչվում ենք կյանքի այնպիսի երևույթների, որոնք շատ անգամներ մեծ չարիքներ են առաջացնում ոչ միայն պարզ մարդկանց, այլև ժողովուրդների կյանքում:

Ժողովրդական առածն ասում է· *«Գլուխը ծակող քարը հաճախ չակնկալված կամ չսպասված տեղից է գալիս»:*

«Թշնամու» դանակը խոցում, արյունոտում ու վիրավորում է, բայց չի մեռցնում, մի *«բարեկամ»-ի* կամ *«բարեկամ»* կարծվածի, որին վստահում ես, մթան մեջ մեջքից խփված դանակն է, որ քեզ մեռցնում է:

Մեր Տերը Իր վստահված սուտ բարեկամի խարդախության զոհը եղավ: Ինչպե՞ս:

ա· Հիսուս խաչվեց Հուդայի խարդախ ու կեղծ համբույրով·

բ· Հեթանոս հռոմեացիներից մեխվեց փայտի վրա և առաջին խաչելությունը անհամեմատորեն ավելի տառապանք տվեց Նրան, քան երկրորդ խաչելությունը Գողգոթայի լեռան վրա: Առաջին խաչելության մեջ՝ «*Սիրո ու վստահության մատնությունը»* կար· անորակելի հուսախաբություն սուտ և կարծեցյալ մի «*բարեկամ»-ից,* որը չկա'ր երբեք երկրորդ խաչելության ժամանակ:

Այս աշխարհում չարերի ուժը և կարողությունը կկոտրվի ու անհետևանք կմնա, եթե բարիները չխաբե'ն և չդավաճանե'ն: Այս' է առաջին պայմանը բարու հաղթության և չարի պարտության:

Ամեն մարդ, որ կյանքում ակնկալում է հեշտ ու հարթ ճանապարհ ունենալ, իզուր տեղն է չարչարվում, քանի որ այդպես չի կարող ապրել այս աշխարհում: Այդ

դեպքում ավելի լավ է նա չծնված ուղղակի երկինք թող բարձրանա: Արդեն Հիսուս Իր աշակերտներին ասաց· *«Աշխարհում նեղություն պիտի ունենաք, սակայն քաջալերվեցե՛ք, որովհետև ես հաղթեցի աշխարհին» (Հովհ· 16:33):*

ԱՐԴՅՈ՞Ք ԻՆՁ ԷԻՐ ՓՆՏՐՈՒՄ - ՀԱՅԵԼԻ ՎԱՐՈՒՑ «ԲԱՐՈՅԱ-ԽՐԱՏԱԿԱՆ ՊԱՏՈՒՄՆԵՐ»

Ամբրոսիոս անունով հռչակավոր մի ճգնավոր է լինում: Նրա համբավը և հրաշագործությունները ամենուր տարածված են լինում: Մի երիտասարդ ցանկանում է նրա աշակերտը դառնալ, ավելի ճանաչել Աստծուն, նվիրվել հոգևոր կյանքին: Մի անգամ հանդիպում է մի ծերունու, ով նրան ասում է.

Եթե ուզում ես ավելին գիտենալ Աստծու մասին, այդ դեպքում փնտրիր Ամբրոսիոս ճգնավորին, նա քո առջև կբացահայտի Աստծո խորհուրդները: Երիտասարդը ճամփա է ընկնում ու գտնում հռչակավոր սրբին ու ասում.

Հա՛յր սուրբ, մանկությունից Աստծուն եմ փնտրել ու կամեցել Նրան լավ ճանաչել, Նրա ճանապարհներն ու շավիղներն իմանալ ու Նրան հետևել: Խնդրում եմ, ընդունիր ինձ որպես աշակերտ քեզ մոտ: Ճգնավորը նայում է երիտասարդին, ժպտում ու հարցնում.

Արդյո՞ք կարող ես թողնել աշխարհը և հետևել ինձ;

Կարող եմ,- պատասխանում է երիտասարդը:

Ճգնավորն ասում է.

Այդ դեպքում, հետևիր ինձ ու լսիր, թե Տիրոջ մասին քեզ ինչ կասեմ ու կպատմեմ, և թե ինչպես է պետք հոգևոր կյանքով ապրել: Եվ նրանք զրուցելով քայլում են: Նրանց դեմ-դիմաց գեղեցիկ կառք է գալիս քաղաքի եպիսկոպոսը՝ ոսկեզոծ զգեստներ հագած ու մեծ հարգանքով բարևելով ճգնավորին ասում է.

Հա՛յր սուրբ, գիտեմ, որ Աստծո առաջ մեծ շնորհ ունես և բազում աշակերտներ: Ինձ մի օգնական է պետք, ուղարկիր աշակերտներիցդ որևէ մեկին՝ որպես ինձ օգնական:

Երիտասարդը տեսնելով գեղեցիկ կառքը, հրաշագեղ նժույգներն ու եպիսկոպոսի ոսկեզոծ թագն ու կապը, խնդրում է.

Սրբազան հայր մանկությունիցս ի վեր ցանկացել եմ ծառայել Աստծուն ու Նրա շավիղներն ու ճանապարհները իմանալ վերցրու ինձ՝ իբրև քեզ օգնական: Եպիսկոպոսը նայում է ճգնավորին, որը գլխի շարժումով իր հավանությունն է տալիս: Երիտասարդը մեծ ուրախությամբ նստում է կառքը, եպիսկոպոսի հետ հեռանում: Ետ է նայում ու մի տեսիլք է տեսնում, որ ճգնավորի հետ մի ծերունի է քայլում: Ծերունին կանգնում է, շրջվում: Դա այն ծերունին էր, որը երիտասարդին խորհուրդ էր տվել գտնել ճգնավորին ու աշակերտել նրան: Այնուհետև ծերունին վերափոխվում է և երիտասարդը պայծառ լույսի մեջ տեսնում է Հիսուսին: Հիսուս նրան հարցնում է.

Արդյո՞ք ինձ էիր փնտրում:

Երիտասարդը պատասխանում է.

Տե՛ր իմ, գիտես, որ միշտ քեզ եմ փնտրել, քանի որ հոգևոր էությունս միշտ կամեցել է Քեզ մոտ շատ լինել և Քեզ ավելի լավ ճանաչել: Հիսուս նրան պատասխանում է.

Եթե դու հոգևոր լինեիր, կճանաչեիր Իմ խոսքը, կլսեիր Իմ ձայնը՝ կանչն ու հրավերը և կհետևեիր Ինձ, բայց դու ընտրեցիր աշխարհը և նրա անցողիկ փառքը:

Այնուհետև Հիսուս շրջվում է ու ճգնավորի հետ հեռանում: Երիտասարդը հասկանում է իր սխալը, կանգնեցնում է կառքը, դուրս գալիս ու շտապում է դեպի ճգնավորը:

Այո՛, կարևոր է, որ փնտրենք Հիսուսին և գեղեցիկ ու շքեղ կյանքի հաճույքներին զոհ չդառնանք. արդեն չարի ու սատանայի ուզածը այդ է, աստվածաստեղծ

մարդուն հեռացնել Աստծուց և թաթախել մեղքի ու չարության մեջ:

Դժվարությունները, հուսախաբությունները, ցավը, արցունքը, պայքարը, նեղությունները յուրաքանչյուր մարդու ամենօրյա կյանքի մաս են կազմում· դրանք այն փոսերն են, որոնք չեն թողնում, որ մարդը արկածի ենթարկվի: Մարդկանցից ոչ մեկը չի կարող այդ խոչընդոտները վերացնել, դա իր ուժերից վեր է, բայց կարող է պայքարել դրանց դեմ՝ համբերել, ներել, սիրել և նույնիսկ ընկնել վերկենալով շարունակել առաջ գնալ այդ ճանապարհներով: Նրանք, որոնք այդ պայքարից հաղթական են դուրս գալիս, բնականորեն շարժում են մյուսների նախանձը, որոնք անկարող են և կամ չեն ուզում պայքարել, ավելի հեշտ կյանքի ակնկալիք ունենալով: Ու սկսվում է չարի հալածանքը և քարկոծումը, որպեսզի պայքարողը դադարեցնի իր գործունեությունը ու իր շնորհները ցույց չտա;

Ընդհանուր Քրիստոնեական Եկեղեցու Հայրերից Սուրբ Օգոստինոսն ասում է· *«Ամեն ձախորդություն հաջողության ճանապարհի վրա դրված մի անկյունաքար է»:*

Ուշադի'ր նայեցեք ձեր շուրջը՝ ստախոսները չեն սիրում ճշմարտախոսներին, ինչպես չարերը երբե'ք չեն սիրում բարիներին: Պատճառը շատ պարզ է, որպեսզի իրենց սուտը և սխալ ճանապարհի վրա լինելը չնկատվեն: Ուրեմն զգույշ մնանք *«քաղցր լեզվով օձ»*-երից, որոնք շատ անգամ ոչխարների պես են մոտենում բարիներին, որպեսզի վնասեն նրանց: Այդպիսիները կեղծավոր և ներսից ուտողներ են, որոնք ավելի շատ են վնաս հասցնում, քան՝ թշնամիները: Մեր պատմության ընթացքում քանի քանի այդպիսի անձեր ու դեպքեր մեր անմեղ ժողովրդի կոտորածի և մեր երկրի ավերման պատճառ դարձան: Բնության մեջ նույնիսկ, երբեմն նայում ես

արտաքինից առողջ ու գեղեցիկ ծառը ընկնում է, փնտրում ես պատճառը և տեսնում, որ որդը ներսից կերել է այն, արտաքինից չերևացող որդը:

Պողոս Առաքյալը չարի դեմ պայքարելու իր ձևն ուներ և մեզ էլ պատգամում է այդպես վարվել· *«Թույլ մի՛ տուր, որ չարը հաղթի քեզ, այլ բարիո՛վ հաղթիր չարին»:* Նրա պայքարը այսպես էր և նա իր ներշնչումն ու ուժը ստանում էր Աստծուց·: Չարին չարով պատասխանելը, նշանակում է նորանոր խնդիրներ առաջացնել, պատերազմներ հրահրել, խռովությունները խորացնել, գժտությունները ամրացնել և այլն: «*Եթե քաղցած է քո թշնամին, հա՛ց տուր նրան, և թե ծարավ, ջո՛ւր տուր նրան· այս անելով՝ կրակի կայծեր կկուտակես նրա գլխին: Թույլ մի՛ տուր, որ չարը հաղթի քեզ, այլ բարիո՛վ հաղթիր չարին»:* Ամեն

ԻՆՉՈ՞Ւ ՉԵՆՔ ՍԻՐՈՒՄ ԽՐԱՏԸ

«Որդյակ իմ, Տիրոջ խրատը մի՛ անարգիր, և մի՛ վհատվիր, երբ հանդիմանվես նրանից, քանի որ Տերը ում սիրում է՝ խրատում է…» (Եբր. 12:6):

Հետաքրքիր հարց է: *«Ինչո՞ւ խրատը չի սիրվում»: «Ի՞նչն է պատճառը»:* Փորձենք բացատրել:

Պատկերացրեք, որ մեկին գեղեցիկ մի թելադրություն եք անում կամ նրա ուշադրությանն եք հանձնում մի բան, որի անունը *«խրատ»* ենք դնում, բոլորովին էլ կարևոր չի, թե ի՞նչ խրատ է, հոգևո՞ր, կրթակա՞ն, ընկերայի՞ն, քաղաքավարակա՞ն, պատմական և այլն, կտեսնեք, թե ի՞նչ բացասական արձագանք կլինի: Մոտավորապես այսպես.

«Նորից սկսեց խրատ տալ: Քո խրատները քեզ պահի՛ր: Խրատը լսելուց ձանձրացել ենք: Խրատի կարիքը չունենք»:

Այսպիսի արտահայտություններ բոլորս էլ ունեցել ենք և զարմանալիորեն պիտի ընդունենք այս ճշմարտությունը, թե ամեն մեկս էլ խրատ բառի նկատմամբ հակակրություն ունենք: Ինչո՞ւ: Շատ պարզ է. խրատողը փորձում է քեզ կյանքի ճիշտ ճանապարհը ցույց տալ, իսկ դու չես ուզում լսել նրան, մանավանդ այս ցայտուն է երիտասարդների մոտ, որովհետև, ինչպես ժողովուրդն է ասում. *«Ծովը ծնկներից է»,* այսինքն նրանք չափից ավելի եռանդուն ու անկառավարելի են, որի համար էլ որևէ մեկի խրատի կարիքը չունեն:

Պողոս Առաքյալն ասում է. *«Ամեն խրատ տվյալ պահին ուրախություն չի թվում, այլ՝ տրտմություն, բայց հետո արդարության խաղաղարար պտուղն է հատուցում՝ նրանով դաստիարակվածներին» (Եբր. 7-9, 11):*

Սակայն այս բառը հրաշալի խոսք է, որը ազնիվ մի թելադրություն է, ուղղիչ ցուցմունք և անկեղծ մտածողության ու առողջ բանականության խառնուրդ է:

Մի մեծ իմաստասեր ասել է· *«Քիչ են խելացի մարդիկ, որոնք կարող են առողջ քննադատությունը գերադասել դավաճան գովեստից»:* Ի՞նչ խոր տարողություն ունի խրատ հասկացողությունը, եթե կարողանանք չափել նրա արժեքը: Այն միշտ դրական, ճիշտ ու օգտակար է:

Խրատի և ուղղության կարիք ունեն ինչպես աշխարհականները, այնպես էլ՝ եկեղեցականները, որոնք նույնպես շատ անգամներ մեծերի խրատները չեն ուզում լսել:

Այս պատմությունը դրա վառ ապացույցն է.

Մի երիտասարդ վանական նստած բլրի վրա նայում է երկնքին, արևածագին: Մեկ այլ վանական մոտենում է ու ասում.

Եղբա՛յր, ժամերգության ժամանակն է, եկ գնանք վանք, օգնիր մեզ ժամերգությանը:

Վանականը պատասխանում է.

Ես մի մեծ ու բարի նպատակ ունեմ, սպասում եմ այն պահին, երբ ժամանակը գա, ես դառնամ եպիսկոպոս ու հանուն Աստծու փառքի գործեմ ու ծառայեմ այնչափ, որչափ ոչ ոք չի ծառայել:

Կեսօրին մոտենում է մի այլ վանական ու հարցնում.

Ի՞նչ ես անում այդ բլրի վրա, ընկերներդ քո կարիքն ունեն, հիմա պետք է նրանց օգնել:

Երիտասարդ վանականը պատասխանում է.

Երբ այս երեկո վանահայրը վերադառնա և ինձ շնորհի խոստացված հնարավորությունն ու կարողու-

թյունը, ես կօգնեմ ոչ միայն իմ ընկերներին, այլև բոլոր նրանց, ում Աստված իմ առջև կբերի:

Երեկոյան՝ արևամուտին, երիտասարդ վանականը լսում է, որ վանահայրը յոթ ութ օր հետո է վերադառնալու վանք և տխրում է ու շրջվում, ետ նայում, տեսնում է Հիսուս վանքի բակում մի դույլով թառամած ու թոշնած ծաղիկներն է ջրում՝ հարցնելով ու ասելով երիտասարդ վանականին.

Ինչո՞ւ ես մենակ մնացել այդտեղ: Նախ ցած իջիր այդ բլրից, ապա օգնիր ջրել քո խնամքին թողնված այս թառամած ծաղիկները, չէ՞ որ ինձ համար նույնքան թանկ են այս փոքրիկ ծաղիկները, որքան խրոխտ ու բարձրաբերձ լեռները: Նպատակդ պետք է լինի այն, որ գործես ու ծառայես տվյալ պահին քո շրջապատում այնքանով, որքանով կարող ես օգնել, այլ ոչ թե բարձրանաս բլրի վրա ու սպասես, թե ե՞րբ է գալու այդ պահը, չէ՞ որ Ես երբեք չեմ սպասել, թե ե՞րբ Ինձ պետք է թագավոր հռչակեն, որպեսզի մարդկանց օգնեմ, այլ եռանդով ու սիրով գործել եմ ու ծառայել ոչ թե ինձ, այլ մարդկանց համար»:

Շատ անգամ այն նպատակը, որը մարդը համարում է բարի ու աստվածահաճո, չի արժանանում Աստծու արձագանքին ու կամքին, քանի որ այդ նպատակի մեջ մարդը կենտրոնանում է իր անձի «ես»-ի ինքնադրսևորման վրա, այլ ոչ թե այն պարզ ու հասարակ ծառայությունը իրագործում, որն Աստված ակնկալում է իրենից և որը կարող է ամեն օր իրականացնել ու իր կյանքը հոգևոր օրհնություններով զարդարել» (Հովհաննես Մանուկյան, «Առակներ» Երևան, էջ 67):

Խրատի գեղեցկությունը օրինակողները միշտ էլ եղել են խրատելու դերում գտնվողները: Այն խրատը, որ սխալ ձևով և անտեղի ժամանակ կտրվի՝ ճիշտ հակառակ ազդեցությունը կթողնի ենթակայի վրա: Օրինակ, երբ զավակիդ, քրոջդ, եղբորդ, ընկերոջդ, բարեկամիդ, կնոջդ

կամ ամուսնուդ մի սխալի մեջ գտար և ճիշտ այդ բոպեին ուրիշների ներկայությամբ սկսեցիր բարոյախոսական քարոզ կարդալ նրա գլխին, այդ անձը ոչ թե կօգտվի քո տված խրատներից, այլ՝ ընդհակառակը, քո դեմ կլցվի ատելությամբ և հակակրանքով ու մտքում կասի, շատ անգամ էլ բարձրաձայն· *«Այդ խրատներդ գնա դու քեզ տուր»:*

Խրատելու ժամանակն ու խոսելակերպը շատ կարևոր են: Եթե ուզենք օգտակար լինել մեր շրջապատին, սովորենք խրատելու ձևը:

Բերենք մի քանի օրինակներ:

Հիպոկրատն ասել է·

Շատ վատ է այն մարդը, որը ոչինչ չգիտի և չի էլ ցանկանում սովորել:

Չէ՞ որ նրա մոտ երկու արատ (մեղք - չիմանալը և ցանկություն չունենալը) միասին են հանդես գալիս:

Ո՞վ է ավելի շատ արժանի խղճահարության:

Սոկրատին ինչ որ մեկն ասում է·

Քեզ շատ եմ խղճում, չէ՞ որ դու շատ աղքատ ես:

Եթե դու կարողանայիր զգալ կյանքի այն քաղցրությունը, որ միայն աղքատներին է մատչելի և որից դու զուրկ ես՝ ապա դու կխղճայիր ոչ թե ինձ, այլ ինքդ քեզ,- պատասխանում է փիլիսոփան:

Պողոս Առաքյալը շարունակում է· *«Թե խրատին համբերող եք, Աստված ձեզ կմոտենա իբրև որդի-ների: Ո՞րն է այն որդին, որին հայրը չի խրատում· որովհետև, եթե մնաք առանց խրատի, որին բոլորն են բաժնեկից, ապա խորթ եք և ոչ թե հարազատ որդի· հիրավի, եթե պատկառում ենք մեր մարմնավոր հայրերից, որոնք մեզ*

խրատում են, որչափ ևս առավել պիտի հնազանդվենք հոգիների Հորը, որ ապրենք…» (Եբր· 7-9):

Ինչքան լավ կլինի, եթե երիտասարդ սերունդը բոլոր ասպարեզներում, իմանա օգտվել փորձառու մարդ-կանց խրատներից: Լսեցե՛ք խրատը, գործադրեցե՛ք և Բարին Աստված միշտ ձեզ հետ կլինի: Ամեն:

ՄԱՐԴՈՒ ՊԱՏԿԵՐԸ

**«Աստված մարդուն ստեղծեց իր պատկերով,
Աստծու պատկերով ստեղծեց նրան» (Ծննդոց 1:27):**

Այս խոսքերը ես վերցրել եմ Ծննդոց Գրքի 1-ին գլխի 27 համարից, ուր հստակ գրված է, որ Աստված առաջին մարդուն՝ Ադամին ստեղծեց Իր պատկերի համաձայն: «*Ի՞նչ է նշանակում այս խոսքը. «Աստված մարդուն ստեղծեց Իր պատկերով»:* Գիտենք, որ *«Աստված սեր է ու բարի է»:* Ամեն անգամ, երբ Աստված ստեղծում էր երկինքն ու երկիրը, կենդանիներին ու թռչուններին, ամբողջ բնությունը և այլն, օրվա վերջում տեսնում էր, թե լավ է, ասում էր. *«Թող լինեն»: «Եւ Աստված տեսավ, որ այն ամենը ինչ ստեղծել էր շատ լավ է և եղավ երեկո, և եղավ առավոտ…» (Ծննդոց 1:31): Ու այսպես Աստված ինչ ոչ ստեղծեց բարի էր ու չար բան չկար Նրա ստեղծագործության մեջ: «Մարդ ստեղծենք մեր կերպարանքով ու նմանութեամբ, նա թող իշխի ձկների, սողունների վրա: Եվ Աստված մարդուն ստեղծեց իր պատկերով, Աստծու պատկերով ստեղծեց նրան» (Ծննդոց 1:27)… «Տեր Աստված մարդուն ստեղծեց երկրի հողից, նրա դեմքին կենդանության շունչ փչեց, և մարդն եղավ կենդանի էակ» (Ծննդոց 2:7),-* վկայում է Ծննդոց Գիրքը:

«Որտեղի՞ց եմ գալիս, ո՞ւր եմ գնում և ո՞րն է իմ կյանքի իմաստը», այս հարցերն ենք տալիս, երբ ուզում ենք իմանալ, թե Աստծու պատկերը ի՞նչ ձևով է պահպանվել մեր մեջ: Աստծու պատկերը ունենալը համարվում է մարդու կյանքի հիմնական հարցերից մեկը: Մի մտածող ասել է, *«Աստծու պատկերը մի իրականություն է, որը գոյություն ունի մարդու հոգեկանում: Այն չի կարող ոչ մի կերպ դուրս շպրտվել: Եթե մենք այն մեր միջից հանենք՝ հոգեկան հիվանդ կդառնանք: Ցանկացած հոգեկան հիվանդ կորցրել է այն, ինչ որ կենդանի կրոններն*

իրենց հավատացյալներին բոլոր ժամանակներում տվել են: Ոչ ոք չի կարող ամբողջապէս բժշկվել, եթե իր կրոնական համոզմունքները վերստին ձեռք չի բերել»:

Եկեք նախ պարզենք, թե՝ *«Ի՞նչ ենք հասկանում պատկեր ասելով»:*

Մեր մտքում շատ պատկերներ կան: Օրինակ՝ երբ ասում ենք *«ընկեր»,* ամեն մեկս պատկերացնում ենք մեր մտերիմ ընկերոջը: Պատկերը մեր երևակայության ամբողջությունն է: Բոլոր պատկերները մի ընդհանուր յուրահատկություն ունեն. խոր ազդեցություն են թողնում մարդու հոգեբանության վրա: Ցանկացած պատկեր հիշելիս կամ անգամ երազում տեսնելիս մենք տարբեր ապրումներ ենք ունենում: Եթե մեր տեսած պատկերները դրական են, ապա դրանք կարող են ոգևորել, քաջալերել, ուրախացնել մեզ, իսկ եթե բացասական են՝ ժխտական, չար, կարող են վատ ազդեցություն թողնել մեր վրա. Հնարավոր է, որ մեր տրամադրությունը ընկնի, ֆիզիկապես թուլանանք և կորցնենք կյանքի նկատմամբ մեր ունեցած հավատն ու հույսը: Սակայն այս պատկերները ամեն անգամ նույն ձևով չեն երևում, անընդհատ փոփոխվում են: Երբեմն հանդիպում ենք այնպիսի մարդկանց, որոնք հոգեպես խանգարված են: *«Ի՞նչն է պատճառը»:* Պատճառը այն է, որ նրանք կամաց-կամաց, աստիճան առ աստիճան շեղվել ու հեռացել են իրական կյանքից ու նրանց մեջ չասենք մեռել է, ավելի շուտ խամրել է Աստծու պատկերը:

Շեղումները հիմնականում երեքն են՝ *«ԳԵՐԾԱՆՐԱԲԵՌՆՈՂ.* Այսինքն՝ չափից ավելի ծանրաբեռնված *ՇԵՂՈՒՄՆԵՐ», «ՊԱՐԶ ՁԵՎՈՎ ՇԵՂՈՒՄՆԵՐ», «ԿԵՂԾ ԿԱՄ ԱՍՏԾՈՒՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ ՇԵՂՈՒՄՆԵՐ»:*

ա. «<u>ԳԵՐԾԱՆՐԱԲԵՌՆՈՂ ՇԵՂՈՒՄՆԵՐ»:</u> Այս ձևի մտածող մարդկանց թվում է, թե Աստված չափից

ավելի խիստ, միայն կարգ ու կանոն պահանջող մեկն է և իբրև թե մշտապես հետևում է իրենց, այսինքն՝ Նրանից փախուստ չկա: Ամենավատն այն է, որ այդպես մտածող մարդիկ ինչքան էլ փորձեն, մեկ է Աստծուն չեն կարող բավարարել: Այսպիսիները միշտ իրենց մեղավոր ու չբավարարված են զգում և մի տեսակ արդարանալու համար ասում են. *«Ես այնպիսի մեղք եմ գործել, որ Աստված ինձ երբեք չի ների»:* Գերմանացի գրողներից մեկը իր *«Թունավորում Աստծով»* գրքում հենց այս հարցն է շոշափում: Նա փորձում է բացատրել, թե ինչպես մարդ-Աստված հարաբերությունը վերածվում է հիվանդության ու գրում է, թե ծնողները երեխային ներշնչել էին, որ Աստված ամեն ինչ տեսնում է, լսում և ցանկացած միտք հասկանում է: Ու Նրան դիմելով երեխան այս խոսքերն է ասում. *«Քեզ տխրեցնելուց և հիասթափեցնելուց ես միշտ վախեցել եմ: Դո՛ւ Աստված. եղել ես հիվանդագին աստիճանի վիրավորող մի անձ, որը կարող է նյարդայնանալ, անգամ երբ ես իմ ատամները չլվանայի»:* Այո՛, չպետք է երեխաներին այնպես տրամադրել ու նույնիսկ վախեցնել, թե Աստված ամեն րոպե կարող է իրենց պատժել և Նա գիշեր-ցերեկ Իր բանն ու գործը թողած հետևում է իրենց: Ընդհակառակը պետք է բացատրել և հասկացնել, որ Աստված իրենց միշտ կօգնի, եթե ծնողներին լսող ու լավ սովորող երեխաներ լինեն:

բ. «ՊԱՐԶ ՁԵՎՈՎ ՇԵՂՈՒՄՆԵՐ»-ի դեպքում Աստված նմանեցվում է մի բարի ծերուկի, որի ուսին կարող ես բարեկամաբար խփել, իր հետ միասին ծիծաղել, այսինքն՝Նրան երբեք չես կարող լուրջ վերաբերվել: Այս պատճառով մարդիկ Տերունական աղոթքի *«Եղիցին կամք Քո»-ն* փոխարինում են *«Թող լինի Քո կամքն այնպես, ինչպես որ ես եմ դա ուզում»* գաղափարով և մտքում ավելացնում. *«Իսկ եթե իմ ուզածը չանես, ուրեմն Դու այլևս գոյություն չունես»:* Այս պարզ

ձևով կարծես թե փորձում են Աստծուն պարտավորեցնել, վախեցնել կամ սարսափի մէջ պահել:

գ. «ԿԵՂԾ ԿԱՄ ԱՍՏԾՈՒՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ ՇԵՂՈՒՄՆԵՐ»: Մարդը միշտ փնտրում է մի բան, որ «*Ի՞նչ է կյանքի իմաստ*»-ի բացատրությունը ստանա: Եթե նա ամուր չի իր հավատի մեջ, ապա կկորցնի ամեն բան: Նրանք, ովքեր Աստծուն չեն ճանաչում, Նրա փոխարեն իրենց համար կեղծ նյութական կուռքեր են պատրաստում, որովհետև այդպիսիների համար նյութական արժեքները *(ունեցվածք, հաճույքներ, պաշտոններ և այլն),* այնքան բարձր են գնահատվում, որ վերջ ի վերջո Աստծուն փոխարինում են դրանցով: Եվ բնական է, եթե մարդը կապվում է նյութական արժեքների հետ, ի վերջո դրանց հետ էլ մահանում է, քանի որ մարդու սիրտն ու հոգին այնքան մեծ են, որ ոչ մի նյութական արժեք չի կարող դրանց տեղը լցնել: Հոգեբաններից մեկն ասում է. *«Աստծու հետ կապը մարդու համար անհրաժեշտություն է: Առանց Նրա՝ մարդու հոգում դատարկություն է, որը ստիպում է նրան Աստծուն փոխարինող դնել այնտեղ»: Մեր Տերը ասում է. «Չե՞ս կարող ծառայել և՛ Աստծուն և՛ մամոնային» (դրամին) (Ղուկ. 16:13):*

«Իսկ ի՞նչ կարելի է անել, որ մարդիկ հանգիստ լինեն և Աստծու ճշմարիտ պատկերը զարգանա նրանց մեջ»: Ես կարող եմ իմ օրինակը բերել. մտնելով ժողովրդի մեջ, նրանց հետ անմիջական կապ հաստատելով, սիրելով ու աղոթելով կարողանում եմ միշտ ինձ ուրախ ու հանգիստ պահել: Խորհուրդ կտամ այն մարդկանց, որոնք չեն կարողանում իրենց հանգստացնել, թող աշխատեն երբեք մենակ չմնալ, ավելի շատ կապ պահեն իրենց նմանների հետ, հասկանան ու հասկացնեն, սիրեն ու սիրվեն, գնահատեն ու գնահատվեն և ամենակարևորը՝ անձանձրույթ աղոթեն: Մանուկների պարագային, սերը պիտի ներարկվի նրանց մեջ ծնողների միջոցով: Օրինակ,

եթե հայրը սիրում է իր զավակներին, խնամում ու հոգ է տանում նրանց, ապա երբ երեխային ասեն, որ Աստված հայր է, նրանք իրենց հոր օրինակին նայելով կարող են ճիշտ պատկերացում ունենալ Նրա մասին; Երեխաները սիրո փորձառություն կարող են ձեռք բերել նաև դպրոցում՝ ուսուցիչներից, ընկերներից, եկեղեցում՝ հոգևոր հովվից, հավատացյալներից, ինչպես նաև քրիստոնեական պատմություններից, որոնք վկայում են մեր եկեղեցական հայրերի ու սրբերի զոհված կյանքի մասին: Միայն անկեղծ սերը կարող է նպաստել, որ մենք Աստծու հետ կարողանանք մեր կապը չխզել:

Այն մարդը, որը երբեք սեր չի ճաշակել, չի զգացել նրա քաղցրությունն ու անհրաժեշտությունը, ինչպե՞ս կարող է հասկանալ ու հետևել մեր Տիրոջ Հիսուս Քրիստոսի պատգամին. *«Սիրեցեք իրար»:*

Ուստի, յուրաքանչյուր մարդ, կարևոր չէ թե ինչ գաղափարի տեր է կամ ինչպե՞ս է ապրում, թող փորձի չթունավորել իր կյանքը՝ ժխտական կեցվածքով: Կյանքի երևույթները՝ դժվարություններ, դժբախտություններ, նեղություններ, մտահոգություններ, ուզենք կամ չուզենք պիտի լինեն; Չափազանց կարևոր է, որ մենք դրանց նայենք թեթևորեն և լավատեսությամբ: Ամերիկացիները մի գեղեցիկ բառ ունեն "Take it easy", «Թեթև վերցրեք կամ թեթև նայեք»: Եվ զարմանալիորեն կյանքում նրանք կարողանում են այս խոսքը գործի վերածել, բայց մենք՝ ոչ: Ուրիշ մոտեցում վստահ եղեք մեզ դեպի կործանում կտանի: Իսկ կործանումից դեպի փրկություն գնալու համար մարդը պարզապես պարտավոր է հայելու նման միշտ մաքուր ու ջինջ պահել իր հոգին: Այս ձևով նրա ներքին հոգեկան աշխարհը ավելի հանգիստ կլինի և նա կկարողանա պատասխանել վերևում նշածս երեք հարցերին. «*Որտեղի՞ց եմ գալիս, ո՞ւր եմ գնում և ո՞րն է իմ կյանքի իմաստը»* ու հասկանալով կարժեքորի իր կյանքը,

կգնահատի իր դիմացինին, որը նույնպես ստեղծվել է Աստծու պատկերի համաձայն ու կսկսի քրիստոնեավայել կյանքով ապրել:

Մեր Տերը ասում է. *«Եկեք ինձ մոտ, բոլոր հոգնածներդ ու բեռնավորվածներդ, և ես ձեզ կհանգստացնեմ: Իմ լուծը ձեր վրա վերցրե՛ք և սովորեցեք ինձնից, որ հեզ եմ և սրտով խոնարհ. և ձեզ համար հանգիստ պիտի գտնեք, որովհետև իմ լուծը քաղցր է և իմ բեռը թեթեւ» (Մատթ.11:28): Ամեն:*

ՍՏԱԾԻ'Ր ԵՎ ԳՈՐԾԻ'Ր

«Քո առջև Տերը կրակ ու ջուր է դրել, որին կամենաս՝ կմեկնես քո ձեռքը» (Սիրաք 15:14-17):

Սիրաքի այս խոսքը հետաքրքիր է: *«Ի՞նչ է ուզում սրանով նա մեզ հասկացնել· ի՞նչ է նշանակում Տերը քո առջևդ կրակ ու ջուր է դրել»:* Իմ կարծիքով այս խոսքերով Սիրաքը ուզում է մեզ հասկացնել, թե մարդը Աստծու ամենակատարյալ էակն է, աշխարհում ստեղծված բոլոր բարիքներից ամենաուժեղն ու խելացին, քանի որ Աստված նրան տվեց այն, ինչից զրկեց կենդանիներին, բույսերին, ծառերին, այսինքն խելք, մտածելու կարողություն, խիղճ ու ազատ կամք, որով մարդը կարողանում է ինքը ընտրել լավն ու բարին, չարն ու վատը: Դժբախտաբար, շատ անգամ այդ նույն մարդը ընկնում է չարի ծուղակը ու զրկվում աստվածային շնորհներից: Դա գալիս է հավատի պակասից: Ում հավատը խորն է, նա նման է այն իմաստուն մարդուն, որն իր տունը կառուցում է ամուր ժայռի վրա և երբեք էլ չի մոլորվի չարի որոգայթներից: Ուրեմն, հասկանալի ու պարզ է, որ մարդուն տրված է մտածելու և կողմնորոշվելու կարո-ղություն:

Այս պատմությունը դրա վառ ապացույցն է·

Մի ազգի մեջ սովորություն կար, ըստ որի իրենց արքան մեկ տարի միայն կարող էր թագավորել: Երբ տարին լրանում էր, նրան մերկացնում էին և աքսորում մի կղզի, որտեղ սովից ու ծարավից մեռնում էր և նրա փոխարեն մի ուրիշին էին թագավոր դնում ու այսպես շարունակ: Հետո մի խելոք մարդ նստելով գահին՝ մտածում է. «Իմ թագավորելու մեկ տարին երբ լրանա, անշուշտ ես էլ պիտի արժանանամ նույն վիճակին, ինչ որ իմ նախորդները: Նրանց պես ինձ էլ մերկ պիտի աքսորեն, բոլոր ունեցվածքս այստեղ պիտի մնա, իսկ ես այնտեղ քաղցած ու ծարավ պիտի մեռնեմ: Դրա համար

էլ քանի դեռ իշխանությունն իմ ձեռքում է, գանձարանիս հարստությունը և ունեցվածքս նախորոք ուղարկեմ այդ կղզին ու երբ թեկուզ մերկ էլ գնամ այնտեղ, որևէ հոգս չեմ ունենա»: Այսպես մտածելով իրեն հավատարիմ մարդկանց միջոցով սկսում է գանձարանի փողերն ու ունեցվածքը ուղարկել այդ կղզին: Շատ ուրախ էր, քանի որ հոգս չուներ, թե իրեն մերկ պիտի աքսորեն և մտատանջվեր, թե ունեցվածքը մնացել է այստեղ, ինչպես մյուս թագավորներինը: Ու մտածում է, թե այնտեղ սրանից ավելի լավ կյանք կվարի և այդ մտքից ավելի էր ուրախանում: Վերջապես, երբ տարին լրանում է, նախորդ թագավորների պես նրան էլ են մերկացնում և աքսորում այդ կղզին: Բայց ի տարբերություն մյուսների, այս թագավորը տխուր չէր և ուրախությամբ էր գնում, որովհետև հույսն իր հետ էր, չէ՞ որ նախորոք պատրաստություն էր տեսել և այնտեղ տուն կառուցել: Այնտեղ հաստատվելուց հետո, ուրիշ մարդիկ էլ է բերել տալիս ու բազմամարդ մի քաղաք կառուցում, իսկ ինքը առոք փառոք դառնում է նրանց թագավորը՝ մինչև իր կյանքի վերջը:

«Ի՞նչ է այս պատմության իմաստը, ինչպե՞ս կարելի է բացատրել»:

Ամեն մարդ իր անձի թագավորն ու իշխանն է, որովհետև Աստված մարդուն ազատ ստեղծեց, ինչպես Սիրաքն է ասում. *«Նա իսկզբանե մարդուն ստեղծեց և նրան թողեց իր իսկ կամքի ձեռքին… Քո առջև Տերը կրակ ու ջուր է դրել, որին կամենաս՝ կմեկնես քո ձեռքը»: (Սիրաք 15:14-17):* Բայց մահից հետո մարդը իր տերը չի և կամքն այլևս իր ձեռքում չի, այլ ապրողների, դրա համար, երբ մեռնենք, հիշյալ թագավորների պես շուտով մեզ էլ կմերկացնեն ու կուղարկեն Արքայություն կամ դժողք՝ ըստ մեր գործերի: *«Սիրաքի պես կրակն ու ջուրը առջևդ դրված է. կարող ես ուզածիդ պես ձեռքդ մեկնել: Ջուրն՝ արքայության, իսկ կրակը՝ Դժողքի խորհրդանիշն է: Բայց պետք է, որ մահդ դեռ չեկած՝ այն խելոք թա-*

գավորի պես մտածես»: «Երբ ես մեռնեմ, այսքան ունեցվածքից ինձ կզրկեն ու մերկ դժողք կաքսորեն: Իսկ ողջ ունեցվածքս կմնա այստեղ: Երբ դժողք գնամ, մի կաթիլ ջրի կարոտ պիտի մնամ»:

Ավետարանում կա ևս մի պատմություն, որը Հիսուս Ինքը պատմեց՝ *«Աղքատ Ղազարոսի և մեծահարուստի» մասին: Այս պատմությունը կարող ենք կարդալ Ղուկաս ավետարանչի 16-րդ գլխի 19-31 հա-մարներում:*

«Մի մեծահարուստ մարդ կար, որ բեհեզ ու ծիրանի էր հագնում և ամեն օր առատապես ուրախություն էր անում: Եվ Ղազարոս անունով մի աղքատ մարդ ընկած էր նրա դռան առաջ՝ վերքերով ծածկված:

Եվ ցանկանում էր լցնել որովայնը այն փշրանքներով, որոնք թափվում էին մեծահարուստի սեղանից: Եվ դեռ շներն էլ գալիս էին ու լիզում նրա վերքերը: Երբ աղքատը մեռավ, հրեշտակները նրան տարան Աբրահամի գոգը· մեծահարուստն էլ մեռավ և թաղվեց: Եվ դժողքում, մինչ սա տանջանքների մեջ էր, բարձրացրեց իր աչքերը, հեռվից տեսավ Աբրահամին և Ղազարոսին էլ՝ նրա գրկում հանգստացած: Եվ նա աղաղակեց ու ասաց· «Հա՛յր Աբրահամ, ողորմի՛ր ինձ և ուղարկիր Ղազարոսին, որ իր մատի ծայրը թրջի ջրով և զովացնի լեզուս, որովհետև այս տապից պապակում եմ»: Եվ Աբրահամը նրան ասաց· «Որդյա՛կ, հիշի՛ր, որ դու ստացար քո բարիքները այնտեղ, քո կյանքի ընթացքում, իսկ Ղազարոսն էլ՝ չարչարանքները· այժմ սա այստեղ մխիթարվում է, իսկ դու այդտեղ պապակում ես: Եվ այս բոլորից բացի, մեծ վիհ կա մեր և ձեր միջև: Եթե ուզենան այստեղից ձեզ մոտ անցնել, չեն կարողանա· ոչ էլ այդտեղից մեկը կարող է մեր մոտ անցնել»: Մեծահարուստն ասաց· «Արդ, աղաչում եմ քեզ, հա՛յր, որ Ղազարոսին ուղարկես իմ հոր տունը,- որտեղ ես հինգ եղբայր ունեմ,- որպեսզի նրանց

վկայություն տա, որ նրանք էլ չգան տանջանքների այս վայրը»: Եվ Աբրահամն ասաց· «Նրանք ունեն Մովսես ու մարգարեներ, թող նրա՛նց լսեն»: Եվ նա ասաց· «Ո՛չ, հա՛յր Աբրահամ, բայց եթե մեռելներից մեկը նրանց մոտ գնա, նրանք կապաշխարեն»: Եվ Աբրահամը նրան ասաց· «Եթե Մովսեսին ու մարգարեներին չեն լսում, մեռելներից մեկն էլ եթե հարություն առնի, չպիտի համոզվեն» (Ղուկաս 16:19-31):

Ընտանեկան մի հավաքույթ կար, որի ընթացքում զրուցում էի մի երիտասարդի հետ, որը մեքենա վերանորոգելու արհեստանոց ուներ (body shop): Այս արհեստանոցը բավական մեծ էր և երիտասարդը աշխատում էր իր երկու եղբայրների հետ: Խոսքի ընթացքում հարցրեցի, թե՝ *«Քանի՞ օր են աշխատում»:* Նա պատասխանեց՝ *«Յոթը օր»: «Իսկ ե՞րբ եք հանգստանում»,* իմ զարմացական հարցին, նա ծիծաղելով պատասխանեց· *«Այն աշխարհում կհանգստանանք»*: Ես էլ կես կատակ, կես լուրջ ասացի· *«Հետաքրքիր է, ես իբրև քահանա այսքան մարդկանց հետ գործ ունեմ, սակայն մինչև օրս մեկը այն աշխարհից չի եկել ու պատմել այնտեղի կյանքի մասին, ի՞նչ երաշխիք ունեք, որ այնտեղ լավ է: Եթե այստեղ, երկրի վրա, չեք կարողանում ձեր ժամանակն այնպես դասավորել, որ գոնե Կիրակի օրերը մի քանի ժամով Աստծուն փառաբանեք, ապա ի՞նչ կարող եք անել երկրնքում, ուր Աստծու դատաստանը պիտի լինի, այսինքն՝ բոլորս էլ հաշիվ պիտի տանք մեր երկրի վրա կատարած գործերի համար»:* Երիտասարդը քմծիծաղ տվեց, հասկացավ, բայց թե ինչքանո՞վ հետևեց իմ խորհրդին, չգիտեմ: Փաստը մնում է փաստ: Մեր երիտասարդների մեծ մասը, չասելու համար բոլորը մտածում են միայն դրամ կուտակելու և հարստանալու մասին, որը շատ ողբերգական է ու կործանարար, քանի որ միայն նյութը շահելով, դժբախտաբար հոգին են դատարկում:

Ի՞նչ եք կարծում, եթե այսօր Հիսուս գա, պիտի հավատա՞ն Նրան: Չգիտեմ ձեր պատասխանը ի՞նչ պիտի լինի, բայց իմ երկար տարիների քահանայական փորձառությունն ասում է, որ Նրան էլ չպիտի հավատան, քանի որ աշխարհը շատ քիչ բանով է տարբերվում երկու հազար տարի առաջ Հիսուսի ապրած ժամանակներից, երբ Նրան չհավատացին, այլ՝ ընդհակառակը մոլորված համարեցին, և ոչ միայն դա· այլ անմեղ, արդար ու մարդկանց բարիքներ արած Աստծու Որդուն չարչարեցին, տանջեցին, փշե պսակ դրին գլխին, ապա՝ խաչ բարձրացրին: Այո՛, դա այդպես է: Ո՞վ պիտի լսի Նրան, եթե գա· այսօրվա բռնակալնե՞րը, իրար սպանողնե՞րը, մանուկներին գայթակղեցնողնե՞րը, նույն սեռով իրար հետ ամուսնացողնե՞րը, հարազատ մայրերին բռնաբարող որդինե՞րը, դատարկ եկեղեցինե՞րը· ո՞ր մեկն ասեմ: Հիշենք Աստծու խոսքը Աբրահամին· *«Եթե քաղաքում (խոսքը Սոդոմ Գոմորի մասին է) տասը արդար մարդ գտնեմ, չեմ կործանի» (Ծննդոց 18:32-33):* Սոդոմ Գոմորի կործանման պատճառների պատմությունը կա-րող եք կարդալ Ծննդոցի 19-րդ գլխում: Եթե Աստված այ-սօր նույն հարցադրումը անի մեզանից յուրաքանչյուրին, պիտի կարողանա՞նք գտնել մի քանի արդար մարդ, որոնք ամբողջ սրտով, ամբողջ հոգով ու ամբողջ մտքով սիրում են Աստծուն: Եվ եթե չգտնենք, ի՞նչ է լինելու աշխարհի վախճանը՝ Սոդոմ Գոմո՞ր, Զրհեղե՞ղ, թե՞՝···

Ուրեմն այս անցողիկ կյանքում ի՞նչն է մնայուն ու արժեքավոր: Հիսուս տալիս է դրա պատասխանը·

«Վաճառեցե՛ք ձեր ինչքերը և ողորմություն տվեք· և ձեզ համար շինեցե՛ք չհնացող քսակներ և անհատնում գանձեր երկնքում, ուր ո՛չ գողն է մոտենում, և ո՛չ ցեցը՝ փչացնում. որովհետև, ուր որ ձեր գանձն է, այնտեղ և ձեր սրտերը կլինեն» (Ղուկ. 12:33-34): Ամեն:

ՄԻ' ՏՐՏՆՋԱ, ԱՅԼ ՀՈՒՅՍ ՈՒՆԵՑԻՐ

«ՏԵՐԸ, ՈՒՄ ՍԻՐՈՒՄ Է՝ ԽՐԱՏՈՒՄ Է, ՊԱՏԺՈՒՄ Է ԱՄԵՆ ՄԻ ՈՐԴՈՒ, ՈՐԻՆ ԸՆԴՈՒՆՈՒՄ Է» (ԵԲՐ· 12:6)

Ապրում ենք այնպիսի մի ժամանակաշրջանում, երբ մեր շուրջը մարդիկ կամա թե ակամա բողոքում են ու դժգոհում դժվարություններից և նեղություններից: Այո', կարելի է ասել նույնիսկ Ամերիկայի նման հզոր մի երկրում տնտեսական դժվարին մի ժամանակում ենք ապրում: Ժողովրդական հայտնի ասացվածք կա. *«Աստված ցավը, նեղությունը, դժվարությունը քարին տվեց, չտարավ, բայց մարդը՝ դիմացավ»:*

Երբ մարդը նեղության մէջ է, նրա վիճակն ավելի ծանր է դարձնում անընդհատ դժգոհելն ու տրտնջալը: Եկեղեցու հայրերից մեկն այսպէս է ասում. *«Սատանան միշտ կանգնում է մեր առաջ բաց բերանով, որ եթե Աստծուն անարգող, հայհոյող ու տրտունջ պարունակող բառ գցես, այն բռնելով նորից կգա, բայց եթե միշտ գոհու-թյուն մատուցես Աստծուն, քաղցի կմատնես նրան և կստիպես փախչել»:*

«Չե՞ս կարող լռել,- խորհուրդ է տալիս Սուրբ Հովհան Ոսկեբերանը,- *ասա, բայց ոչ հայհոյանք, այլ շնորհակալություն, բողոքի փոխարեն՝ օրհնություն: Աղաղակիր Տիրոջը, գոչիր՝ Նրան փառաբանելով: Դրանից և տանջանքդ կթեթևանա, քանի որ երախտագիտության հետևանքով սատանան կփախչի և Աստծու օգնությունն էլ արագ կհասնի քեզ»:*

Մենք երկու հազար տարուց ավելի քրիստոնյա ենք, հակառակ դրան պատմության ընթացքում ավելի հաճախ ենք փորձությունների ենթարկվել, քան այլ հեթանոս ազգեր, որոնք տիրողի ու թագավորողի դիրքում

են եղել: Առանձին վերցրած՝ սա կարելի է ասել նաև անհատ մարդկանց մասին: Ո՞րն է սրա պատճառը: Երբ այս մասին հարցնում են փորձառու մի հավատացյալի, նա ասում է. *«Տեսե՞լ եք, թե ինչպես է որսորդը թռչուններ որսում. որոնք արդեն սպանված-ընկած են, նրանց այլևս ձեռք չի տալիս, որովհետև գիտի, որ դրանք իրենն են, և ընկնում է կենդանի թռչունների ետևից: Ահա այդպես էլ սատանան երբեք չի պատերազմում մեղքի մեջ կորածների, անհավատների հետ, որովհետև գիտի, որ իրենն են և տարբեր փորձություններով պատերազմում է հավատացյալների դեմ՝ նրանց հոգիները կորստյան մատնելու համար»:* Աստված, սակայն, մենակ չի թողնում իր հավատացյալին և սատանայի փորձություններն ու դժվարությունները փոխակերպում է մարդկանց օգուտի համար ավելի լավ վիճակների, որպեսզի նրանց հայացքը դարձնի դեպի երկինք:

Սրբերի պատմությանը ծանոթանալիս, տեսնում ենք, որ նրանք ենթարկվել են ահավոր չարչարանքների: Այսօր էլ կան շատ մարդիկ, որոնք նյութական և կամ այլ զանազան նեղությունների ու դժվարությունների մեջ են: Սկիզբում իբրև բնաբան օգտագործեցի այս խոսքը. *«Տերը, ում սիրում է՝ խրատում է, պատժում է ամեն մի որդու, որին ընդունում է»:* Ավելի պարզ, նշանակում է Աստված ում որ սիրում է, նրան նեղություններ եւ դժվարություններ՞ է տալիս, որպեսզի տեսնի, այդ հավատացյալը կամ անհատը պիտի կարողանա՞ դիմանալ: Երևի ձեզանից շատերը նույնիսկ կարող են վրդովվել Աստծու այս տեսակ վերաբերմունքից: Ինչպես թե, ուրեմն Աստված մեր հավատը կասկածի տա՞կ է դնում: Անշուշտ՝ ո՛չ: Գիտեմ, որ բոլորս էլ, ես էլ մեջը լինելով, ուզում ենք, որ մեզ հետ միշտ միայն լավը լինի, մանավանդ, եթե Աստծուն սիրում ու հավատարիմ ենք: Ոմանք դժգոհում են, որ ճոխությամբ չեն ապրում: Եկեք նայենք, թե ինչպես է վարվում այգեգործը: Նա թույլ չի տալիս, որ ծառը փար-

թամությամբ աճի. գարնանը կամ աշնանը թեթևացնում է ծառի ճյուղերը, որպեսզի այն առողջ լինի, շատ բերք տա և երկար ապրի: Ճիշտ նույն կերպ էլ Աստված որոշ զրկանքներով մարդուն կատարելության է հասցնում ու հետո շնորհում բարիքներ:

Սուրբ Հովհան Ոսկեբերանն ասում է. «*Չկա բարի կամ արդար մարդ առանց մեղքի և չկա վատ մարդ առանց առաքինության»:* Այնուհետև շեշտելով, որ մարդու բնությունն Աստծու կողմից չար չի ստեղծվել, ասում է. *«Ոչխարը չի կարող վայրենի լինել, իսկ գայլը՝ հեզ, որովհետև նրանց բնությունն է այդպես, իսկ մարդը մեկ լինում է չար, մեկ՝ հեզ, որովհետև օժտված է ազատությամբ և հետևաբար չարը բնությունից չէ»:*

Հասկանալի է և նույնիսկ ընդունելի, որ Աստված մեղավոր մարդկանց նեղություններ ու դժվարություններ է տալիս, որպեսզի նրանք խրատվեն: Երանի խրատվեն: Բայց այդ դեպքում, ազնիվ, արդար, հավատով մարդիկ և մանավանդ սրբերը ինչո՞ւ են չարչարվել ու մինչև այսօր չարչարվում են, ի՞նչ է նրանց մեղքը: Պարզ մարդիկս երբեմն չարչարվում ենք, որպեսզի մեղքերից սրբվենք, իսկ սրբերը… նրանք չարչարվում էին արդարություն և պսակ ընդունելու ու այդ միջոցով իրենց մեծագույն սերը ցույց տալու Աստծու հանդեպ: Եթե ձեզանից շատերը նեղություններ ու դժվարություններ ունեն, թող չմտահոգվեն և չհուսահատվեն ու չկարծեն, թե Աստված մոռացել է իրենց: Նեղությունները երկու տեսակ են լինում՝ *հավատացյալների և անհավատների: Հավատացյալները լցված են հույսով և համբերությամբ, իսկ անհավատները՝ հուսահատությամբ: Հավատացյալները ավելի հանգիստ են մեռնում ու փառքի մեջ, քանի որ սովորել են այն խոսքը. եթե Քրիստոսի չարչարանքներին մասնակից են, Նրա փառքին էլ հաղորդակից պիտի լինեն, իսկ անհավատների պարագային նեղության դեպքում նրանց հանգիստ*

և փառք չկա: Հովսեփ Գեղեցիկի օրինակը մեզ կարող է մխիթարել, քանի որ նա բանտ նետվելով հույսով և համբերությամբ կրեց բոլոր նեղություններն ու վերջում հասավ մեծ փառքի և հանգիստ ու խաղաղ կյանք ունեցավ:

Մենք էլ իբրև Աստծուն սիրող և փառաբանող մարդիկ, չտրտնջանք ու չդժգոհենք մեր կյանքից, այլ հույսով լի կրենք մեր խաչը և այնպես ապրենք ինչպես Նա' է մեզ պատվիրել ու կտեսնենք, թե ինչպես աստվածային օրհնությունը և սերը լցվում են մեր սրտերից ու մեր ընտանեկան հարկերից ներս: Ամեն:

ԳԵՂԵՑԿՈՒԹՅԱՆ ԳԱՂՏՆԻՔԸ

Ամեն մարդ կյանքում ձգտում է ունենալ երեք կարևոր արժեքներ՝ ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ, ԲԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳԵՂԵՑԿՈՒԹՅՈՒՆ:

ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ իբրև մարդու խոսքի ու գործի միջև ճշտություն, կոչվում է ճշմարտախոսություն, անկեղծություն կամ ուղղամտություն: Արդարև Սուրբ Գիրքը վկայում է, թե Աստված ակունքն է ամեն ճշմարտության: Իրապես ճշմարտությունը Աստծու խոսքն է և Նա ճշմարտությունն է: Հիսուսին հավատալ նշանակում է մնալ Նրա խոսքի մեջ ճշմարտությունը ճանաչելու համար: Եվ Հիսուս սովորեցնում է ճշմարտության անպայմանավոր հրամայականը· *«Ձեր խօսքը թող լինի այո՝ այո՛, և ոչը՝ ոչ»:* Հիսուս ասաց. *«Ես եմ Ճանապարհը եւ Ճշմարտությունը եւ Կյանքը: Ոչ ոք չի գայ Հոր մոտ, եթե ոչ՝ ինձանով» (Հովհ. 14:6)* Մարդը, բնականաբար, ձգտում է ճշմարտության և հասնում նրան իր արժանապատվության զորությամբ: Ճշմարտության հասնելու և նրա մեջ մնալու համար պահանջվում է իմաստություն, քաջություն և հերոսություն:

Ամեն մարդ, ուր որ էլ ապրի, ինչ պայմաններում էլ, որ լինի, պարտավոր է իր կյանքի օրինակով ու իր խոսքի վկայությամբ ցույց տալու ճշմարտությունը, պարկեշտությունն ու անկեղծությունը:

Բարոյական գեղեցկությունը և բարիքի գործադրությունը ընկերակցում են ճշմարտությանը: Այս պատճառով Աստծու պատկերով ստեղծված մարդը Նրա հետ ճշմարտության կապը արտահայտում է նաև իր գեղարվեստական գեղեցկությամբ: Այս ուղղությամբ արվեստը ճշմարիտ է և գեղեցիկ, երբ իր ծնունդով համապատասխանում է հատուկ կոչման, որ է՝ հավատով ու երկրպագությամբ հիշել և փառավորել Աստծու գերակա խոր-

հուրդը: Այն գեղեցկությունն է վսեմ անտեսանելի ճշմարտության, սիրո ու պայծառությունը Աստծու փառքի: Արվեստը ձգտում է Աստծու անհուն գեղեցկության և օժանդակելու մարդկային հոգիների դարձը դեպի Նա:

Ուրեմն ճշմարտությունը, բարությունն ու գեղեցկությունը իրար հետ կապված են և կախում ունեն իրարից:

Տարիքով մի կնոջ հարց է տրվել, թե նա ի՞նչ է օգտագործում իր դեմքը այդքան գեղեցիկ ու իր կեցվածքը այնքան առողջ և գրավիչ պահելու համար:

Նա ժպտալով պատասխանել է·

ա· Շրթունքներիս համար օգտագործում եմ՝ ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ:
բ· Ձայնիս՝ ՔԱՂՑՐՈՒԹՅՈՒՆ:
գ· Աչքերիս՝ ԳՈՒԹ:
դ· Ձեռքերիս՝ ՈՂՈՐՄՈՒԹՅՈՒՆ:
ե· Տեսքիս՝ ՊԱՐԿԵՇՏՈՒԹՅՈՒՆ:
զ· Սրտիս՝ ՍԵՐ:
է· Եվ բոլոր նրանց համար, որոնք ինձ չեն սիրում՝ ԱՂՈԹՔ:

Արժի՞ արդյոք գեղեցկության այս ծրագիրը գործադրել: Ի՞նչ եք կարծում՝ կօգնի՞ այն գեղեցիկ լինելու համար: Ես գտնում եմ, որ՝ այո', արժի: Հավատացեք այս ծրագիրը օգտագործելուց հետո, դուք կարճ ժամանակից զգալի փոփոխություն կունենաք ձեր կյանքից ներս: Եթե իրական գեղեցկություն եք փնտրում և ուզում եք գեղեցիկ լինել՝փորձեցեք ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ, ՔԱՂՑՐՈՒԹՅՈՒՆԸ, ԳՈՒԹԸ, ՈՂՈՐՄՈՒԹՅՈՒՆԸ, ՊԱՐԿԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ, ՍԵՐՆ ՈՒ ԱՂՈԹՔԸ: Ամեն:

ՄԱՐՄԻՆՆ ՈՒ ԱՇԽԱՐՀԸ

«ՈՎ ՍԻՐՈՒՄ Է ԻՐ ԱՆՁԸ, ԿԿՈՐՑՆԻ ԱՅՆ, ԻՍԿ ՈՎ ԱՅՍ ԱՇԽԱՐՀՈՒՄ ԻՐ ԱՆՁՆ ԱՏՈՒՄ Է, ԱՅՆ ԿՊԱՀԻ ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ՀԱՄԱՐ»
(ՀՈՎՀ. 12:25):

Այս կյանքում կան երկու արգելող պատճառներ, որոնք իբրև գլորվելու պատրաստ քարեր, կանգնած են մեր ոտքերի առջև: Դրանցից առաջինը՝ ՄԱՐՄԻՆՆ Է, իսկ երկրորդը՝ ԱՇԽԱՐՀԸ: Ուրեմն եկեք քննենք դրանք, տեսնելու համար թե սրանք հավիտենական մի կյանք արժե՞ն, որոնց համար ներկա կյանքը մեր ձեռքից բաց թողնելու փորձության մեջ ենք և կամ թե սրանք կորցնելը հավիտենական կորստից ավելի՞ ծանր է:

Մեղավոր մարդը սիրում է իր մարմինը հոգուց ավելի, թեև գիտի, որ մարմինը ժամանակավոր է, իսկ հոգին՝ անմահ: Մարմինը հողից է ստեղծված, իսկ հոգին՝ Աստծու պատկերն է: Մարմինը մի տուփ է, իսկ հոգին՝ նրա մեջ պահված մի գոհար: Մեր մտածողներից մեկը ասել է. «*Բայց ինչքան կարող ես, աշխատիր շահել մարմինդ... չէ՞ որ որոշ ժամանակ հետո պիտի կորցնես այն... Զվարճացրու ինքդ քեզ ոգելից խմիչքներով, բայց մի օր մի կաթիլ ջրի կարոտ պիտի քաշես և այն էլ հավիտյան չպիտի կարողանաս գտնել: Զարդարիր ինքդ քեզ փառավոր ու գունավոր զգեստներով, բայց մի օր սպիտակ սավանով պիտի փաթաթվես՝ փոսի մեջ դրվելու համար: Հանգստացրու ինքդ քեզ փափուկ անկողինների վրա, բայց մի օր անկողինն ու վերմակդ էլ հողից պիտի լինեն...*»: Ահա այս է Տիրոջ վճիռը. *«Ով որ իր անձը կորցնի, պիտի գտնի այն»:* Հիմա իմաստուն մարդու պես մտածիր ու դատիր, թե այս կարգի մարմնապաշտ անձերը իրենք իրենց սիրա՞ծ, թե՝ ատած կլինեն:

ՄԱՐՄԻՆԸ առաջին արգելող պատճառն է:

Երկրորդ պատճառը՝ ԱՇԽԱՐՀՆ Է: Աշխարհի համար փրկության ճանապարհից ետ կանգնելը նույնքան անմիտ մի գործ է, որովհետև անցավոր ու թշվառությամբ լի աշխարհը նշանակում է փոխել հավիտենական երջանկությամբ լցված մի այլ աշխարհի հետ: Սրան մարդը պատասխանում է. *«Ես այս աշխարհը պահելով հանդերձ երկինքն էլ եմ շահում»,* սակայն մի մարդ երկու Տիրոջ չի կարող ծառայել, ինչպես ասաց մեր Տերը. *«Ոչ մի ծառա եր-կու տիրոջ ծառայել չի կարող, որովհետև, եթե մեկին ատի, մյուսին կսիրի, կամ եթե, մեկին մեծարի, մյուսին էլ կարհամարհի» (Ղուկ. 16:13):* Ինչքան մարդիկ կապված են աշխարհին, որքան էլ որ սիրեն ու գիշեր ցերեկ իրենց անձը նրան հաճելի դարձնելու համար աշխատեն, աշխարհը երբեք չի կարող մարդկանց սիրել կամ գոնե նրանց սիրո համար փոխադարձաբար մի բարի բանով փոխարինել: Ձեզանից ցածր գտնվողները՝ ձեզ կատեն, հավասար եղողները՝ կնախանձեն, իսկ ավելի բարձրում գտնվողները՝ կարհամարհեն:…

Բնական է, որ բոլորս էլ մոտ բարեկամներ, ընկերներ ու սիրելիներ ունենք, հնարավոր է, որ նրանց համար արգելք ունենանք մեր ճանապարհին. Սակայն հիշեք Հիսուսի խոսքը. *«Ով որ իր հորը կամ մորը ինձնից ավելի է սիրում, ինձ արժանի չէ. ով որ իր որդուն կամ դստերը ինձնից ավելի է սիրում, ինձ արժանի չէ. ով որ իր խաչը չի վերցնում ու իմ հետևից չի գալիս. ինձ արժանի չէ» (Մատթ. 10:37-39):* Թերևս նրանք ձեզ անկեղծությամբ սիրեն, բայց այդ սերը հաստատուն ու մնայուն չի կարող լինել, որովհետև երբ դուք մեռնեք ու ձեր մարմինը նրանց աչքերի առաջից աներևույթ լինի, ձեր հիշատակն էլ պիտի թառամի: Գերեզմանափոսի մեջ ծածկվելուց որոշ ժամանակ հետո, թող զարմանալի և տարօրինակ չթվա, ձեր սերը ամենամոտ սիրելիների սրտում իսկ մոմի

լույսի պես պիտի նվազի: Այսօրվանից մտածեք, թե իրապես արժի՞ այսպիսի ժամանակավոր երկրային հաճույքների ու վայելքների համար ձեր անձը մատնեք հավիտենական դատապարտության:

Սա իրական դեպք է, պատմում է ինքը մեքենայի արկած ունեցողը՝ Մամբրե Աբեղա Տաշչյանը: Ես այն մեջ եմ բերում վերցված ֆեյսբուքից, ինչպես որ Հայր Սուրբը գրել էր:

«ՕՐՀՆՈՒԹՅԱՄԲ ԱՍՏԾՈՒ ՎԵՐԱԴԱՐՁԱ ԵՐԿՐԱՅԻՆ ԿՅԱՆՔ:

Այն ինչի մասին ուզում եմ պատմել, շատերին անիրական, ֆանտաստիկ կթվա: Ինքս էլ գուցե այնքան էլ չհավատայի, եթե լսեի մեկ ուրիշից, քանզի կարծում էի՝ անհավանական է լինել Արարչի մոտ և այնուհետև վերադառնալ երկիր…»:

Այստեղ Հայր Սուրբը պատմում է, թե ինչպե՞ս է տեղի ունեցել իր մեքենայի արկածը, ի՞նչ պայմաններում և ապա ինքը ինչպե՞ս է հայտնվել անգիտակից վիճակում ու հետո ի՞նչ է պատահել: Բնականաբար նրան այցելել են Վեհափառ Հայրապետը, ծնողները, ընկերները, բայց ինքը ոչինչ չի զգացել ու շարունակում է.

…«Վթարից անմիջապես հետո ես կարծես տեղափոխվեցի մի ուրիշ աշխարհ: Քաղցր նինջը պատեց աչքերս, և ես սկսեցի բարձրանալ: Մարդկային լեզուն ի զորու չէ նկարագրել իմ տեսած գեղեցկությունը: Անծայրածիր կանաչ տարածություններ՝ ծաղկազարդ ու խնկաբույր: Այդ վայրը թվում էր այնքան սքանչելի, որ կարող էի հավիտենություն անհոգ ապրել: Այս դրախտային վայրում մի մեծ ու գեղեցիկ տուն կար: Ներս մտնելով՝ տեսա մի սպիտակամորուս, փառահեղ ծերունու, որն ինձ ընդառաջ էր գալիս: Ես անմիջապես հասկացա, որ ինձ բախտ է վիճակվել, սեփական աչքերով տեսնել ՆՐԱՆ՝ Տիեզերքը Արարողին, մեր բոլորի Հայր Աստծուն: Ողջու-

նելուց հետո ինձ ծանոթացրին տան պայմաններին: Այստեղ ինձ հյուրասիրեցին երկնային ուտելիքներով՝ սուրբ հացով և փլավով: Ինձ համար ամենազարմանալին այն էր, որ այնտեղ կար ինչ որ հսկա իր, որը ցույց էր տալիս, թե ինչ է կատարվում երկրում: Այդ հիասքանչ վայրում շատ մարդիկ կային: … Նրանց մեջ ես ճանաչեցի մեր հարևանուհիներից մեկին (որը ինչպես հետագայում իմացա, մահացել էր իմ վթարի ենթարկվելուց մի քանի օր անց):

Այն ինչ կատարվում էր այս դրախտային վայրում, պարզապես հրաշք էր: Այստեղ կարծես չկար ժամանակ, համենայն դեպս, ես այն չեմ զգացել: Ինքս ինձ զգում էի հավիտենության ու երանության գրկում: Ամեն ինչ անկեղծ ու անբասիր էր, հետաքրքիր, հիասքանչ: Մեզ տեղեկացնում էին ամեն բանի մասին, մենք տեսնում էինք ամեն ինչ:

Միաժամանակ հետո, սպիտակափառ ծերունին, ինքը՝ Հայր Աստված, կանչեց ինձ և ասաց, որ պետք է վերադառնամ երկիր՝ ծնողներիս և ինձ սպասող մյուս մարդկանց մոտ: «Ես քեզ հետ եմ ուղարկում երկիր,- ասաց նա,- հորդ ու մորդ մոտ, և քեզ տեսնելով՝ շատ մոլորյալներ դարձի են գալու ու հավատալու են ինձ»:

Ես ասացի, որ չեմ կարող վերադառնալ, քանի որ հետդարձի ճանապարհը չգիտեմ: Նա մի հրեշտակի կարգադրեց ուղեկցել ինձ;

Վայրեջքը նույնքան հուզիչ էր, որքան վերելքը: Իջնելիս աչքս ընկավ խոր գետնախորշերի, որտեղից մարդկային սրտակեղեք ձայներ էին լսվում: Այդ չարագուշակ փոսերում ես տեսա հսկայագլուխ շներ (կարծեմ՝ Կերբեր էին անվանում): Այդ գազանների երախն այնքան մեծ էր, որ մարդ առանց դժվարության կարող էր մտնել այնտեղ և դուրս գալ: Հրեշտակն ասաց, որ դրանց մոտ գցում են չար մարդկանց:

Քիչ անց հրեշտակն այլևս ինձ հետ չէր: Հետդարձս կատարված էր: Ես երկրի վրա էի՝ շրջապատված ինձ հարազատ մարդկանցով» (Ֆեյսբուքում դրված է Հրաչ Բեգլարյանի «Հրաշքների մասին» գրքից):

«Ես հավատում եմ քեզ, սիրելի Հայր Սուրբ, քանի որ այս աշխարհում և հավիտենական կյանքում ամեն ինչ կատարվում է Աստծու կամքով: Դրա համար ամեն անգամ «Հայր մեր» Տիրոջ աղոթքը արտասանելիս ասում ենք· «Թող Քո կամքը լինի՝ ինչպես երկնքում, այնպես էլ երկրի վրա»: Թողնենք ամեն ինչ Աստծու կամքին ու Նրա տնօրինությանը: Վստահ եղեք թե՛ հոգեպես և թե՛ ֆիզիկապես շատ ավելի հանգիստ ու խաղաղ կլինենք: Քեզ երկար կյանք, սիրելի Հայր Սուրբ»,-այսպես գրեցի ես իր ժամանակին ի պատասխան այս գեղեցիկ վկայության: Հիմա հերթը ձերն է հավատալո՞ւ կամ չհավատալու: Հավատաք՝ պատրաստ կլինեք հավիտենական կյանքին, չհավատաք՝ հանկարծակիի պիտի գաք, երբ հեռանաք այս աշխարհից:

Երբ դուք ձեր մեղքերի պատճառով դատապարտվեք, այնտեղ աշխարհը կամ ձեր սիրելիները ձեզ ի՞նչ մխիթարություն կամ ի՞նչ օգնություն կարող են ցույց տալ: Նույնպես աշխարհում վայելած ձեր հաճույքները վերջին դատաստանի օրը ձեր չարչարանքների դիմաց ի՞նչ մխիթարություն կարող են լինել. Կերուխումը, խաղն ու պարը կարծո՞ւմ եք դեռևս իրենց ազդեցությունները կունենան կամ այն ներդաշնակ նվագարանների ձայները դեռևս կլսվե՞ն. իհարկե՝ ոչ, դրանց փոխարեն միայն պիտի լսվեն՝ հավիտենական ողբ, հուսահատություն ու հառաչանք: …Դատաստանի օրը փոխանակ օգնություն կամ մխիթարություն լինելու, ավելի դառնություն և դժոխային մի կյանք պիտի լինեն, որովհետև սրանք Հովնաթանի նման քեզ հավիտյան պիտի աղաղակել տան. *«Ճաշակելով ճաշակեցի մի քիչ մեղր և ահա ես պիտի մեռնեմ»,* որովհետև սրանք ձեզ պիտի

հիշեցնեն, թե ինչպես ձեր վայելած հեշտ կյանքը մի կաթիլ մեղրի նման ոչինչ ու րոպեական մի բան էր, սակայն նրանց համար սահմանված պատիժները սոսկալի ու հավիտենական են: Քանի դեռ այդ վիճակի մեջ չեք ընկել, ձեզ համար կա հույս ու հնարավորություն փրկվելու: Ձեր կամքով բաժանվեք մարմնից ու աշխարհից, քանի դեռ մահը ձեզ բռնությամբ չի բաժանել: Աստծուն հաճելի ու Նրա կամքը փնտրե'ք, ձեր սիրտն ու սերը ամբողջովին Նրա՛ն նվիրեք և հաղթելով ձեր դեմ եղած արգելքներին, առա'ջ գնացեք փրկության նեղ ճանապարհով դեպի լայն ճանապարհը: Ամեն:

ՆՈՐ ՏԱՐԻ – 2013

«ԵՎ ՔԱՆԻ ԴԵՌ ՑԵՐԵԿ Է, ԵՍ ՊԵՏՔ Է ԿԱՏԱՐԵՄ ԳՈՐԾԵՐ ՆՐԱ, ՈՎ ԻՆՁ ՈՒՂԱՐԿԵՑ. ԿԳԱ ԳԻՇԵՐԸ ԵՐԲ ՈՉ ՈՔ ՉԻ ԿԱՐՈՂ ԳՈՐԾԵԼ» (ՀՈՎՀ 9:4):

Մի քանի օրից 2012 թվականը անցնելու է պատմության գիրկը: Սկսվելու է 2013 թվականը: 365 օրեր, որոնք պիտի փորձենք լցնել բարությամբ, ազնվությամբ, արդարությամբ, հավատով ու սիրով:

Մարդկային ընկերության մեջ մարդուց մարդ տարբերվում է ժամանակը օգտագործելու և օրերը լցնելու ձևը: Ոմանք իրենց օրերը անցկացնում են գոհացնելով միայն իրենց ֆիզիկական մարմինները: Նրանց համար կյանքի իմաստը կայանում է՝ *«Կե՛ր, խմի՛ր և ուրախ եղի՛ր»-ի* մեջ: Այդպիսիների համար կարևորը ներկան է և նրա ժամանակավոր հաճույքները: Նրանց մտածողության մեջ ապագան տեղ չունի: Իմաստասեր Սենեկան այսպիսիներին խրատում է. *«Ով մարդ, վայելիր ներկայի հաճույքները, բայց լավ նայիր, որ ապագա վայելքիդ չվնասես»:*

Ուրիշները լրջորեն մոտենալով ժամանակի խորհրդին, փորձում են օգտագործել յուրաքանչյուր վայրկյանը: Փիլիսոփաներից մեկն ասում է. *«Ժամանակը մեզ տրված է հավիտենականության մասին մտածելու և այն ինքնին կարճ պիտի գա զղջալու մեր կորստի վրա, եթե այն իզուր վատնենք»:*

Արդ, հարց է ծագում. *«Անցնող, անվերադարձ ժամանակի ի՞նչն է մնայուն»:* Մեր Տերը պատասխանում է. *«Եվ քանի դեռ ցերեկ է, ես պետք է կատարեմ գործերը նրա, ով ինձ ուղարկեց. կգա գիշերը, երբ ոչ ոք չի կարող գործել»:*

Մեր Փրկչի այս խոսքը հստակ կերպով ցույց է տալիս, թե մենք պիտի կատարենք Աստծու գործերը այս աշխարհի վրա սահմանված կյանքի տևողության ըն-

թացքին: Աստված օրը ստեղծել է. որպեսզի մարդը աշխատի, իսկ գիշերը տրված է նրա հանգստության համար: Իզուր չանցկացնենք ժամանակը և մեր օրերը լցնենք բարի գործերով: Անգլիացի նշանավոր գրող Վիլիամ Շեքսպիրը իր կյանքի վերջավորության ասել է. *«Ես ժամանակը վատնեցի և ահա ժամանակն էլ ինձ է վատնում»:* Մեր կատարած բարի գործերով է, որ մենք կարող ենք շահել ժամանակը և երջանկությամբ անցկացնել մեր կյանքի օրերը:

Գեղեցիկ ու գրավիչ է պատկերազարդ մի գիրք, որը հենց նոր լույս է տեսել տպարանից: Սակայն գլխավորը նրա արտաքինը շլացնող հատկությունները չեն: Ուշ թե շուտ, այդ գիրքն էլ պիտի հնանա, կողքն ու էջերը պիտի քանդվեն, նկարները իրենց գույները գցեն և այն պիտի դադարի հրապուրիչ ու հետաքրքրական լինելուց: Սակայն բոլորովին տարբեր են այն գրքերը, որոնք իրենց էջերում պարունակում են իմաստության հավիտենական ճշմարտություններ, հոգեկան և իմացական անկորնչելի գանձեր, որոնք բոլոր ժամանակների սերունդներին մի բան կասեն ու նրանց ցույց կտան կյանքի ճիշտ ճանապարհը:

Նոր Տարին նոր հրատարակված մի գիրք է՝ 365 էջերով, որը մի պահ իր տոնական ուրախություններով, փոխանակված սիրալիր մաղթանքներով ու նվերներով, ուրախացնում և խանդավառում է մեզ: Բայց երբ խրախճանքի ոգևորությունները վերջանում են, բարիմաղթանքները դադարում և փոխանակված նվերների տպավորությունն էլ ջնջվում է, Նոր Տարին էլ հին գրքի պես մոռացվում է ու ենթարկվում իր նախորդների անփառունակ վիճակին;

Քրիստոնյայի համար Նոր Տարվա օրը զվարճության, ուրախության և վայելքի մի պահ լինելուց ավելի պիտի լինի աղոթքի ու հաշվետվության օր: Հետադարձ մի ակնարկ նետելով մեր մեկ տարվա կատարած կյանքի

վրա, փորձենք ինքնաքննությամբ նշել մեր դրական կողմերը ու ինչո՞ւ չէ նաև՝ մեր թերությունները:

Ամերիկան վազքի երկիր է: Մարդիկ ամեն ինչ թողած դրամի ու հաճույքի ետևից են վազում: Շատերը դադարել են իրենց տներում Սուրբ Ավետարանը կարդալ: Հայահոծ այս համայնքում մեր եկեղեցի հաճախելն էլ կարծես թե պատահական երևույթ է դարձել: Մոռացել ենք, որ մեր Սուրբ եկեղեցին ոչ միայն Աստծու Տունն է, Քրիստոսի Խորհրդական Մարմինն է, մշակույթի կենտրոնն է, մեր նախահայրերի հոգիների և բարբառի ներկայությունն է, այլև մեր հոգիների փրկության նավը, մեր խղճի հանգստության Տաճարը, մեր հավատարմության Ուխտավայրը և մեր ազգապահպանման ամրապինդ Խարիսխը:

Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Գարեգին Արքեպիսկոպոս Հովսեփյանցն ասում է.

«Մենք իրավունք ունինք ուրախանալու միայն այն դեպքում, երբ մեր հոգու հաշվեմատյանները ուղիղ են, երբ անցավոր ժամանակի մեջ այնպիսի բարիք ենք ձեռք բերել, որ մեզ համար և մեր ժողովրդի կամ եկեղեցու համար տևական նշանակություն ունի:... Արդ, ի՞նչ է մնայուն, որ անցնող ժամանակի մէջ ձեռք բերել կարելի է: Այս հարցի պատասխանը Փրկիչն է տալիս. «Ես պետք է կատարեմ գործերը նրա, ով ինձ ուղարկեց. կգա գիշերը, երբ ոք չի կարող գործել»: Ժամանակը շահեցնելու միջոցը գործն է: Անցնող ժամանակի մեջ դրականը աշխատանքով ձեռք բերված հոգևոր բարիքն է: Նյութական բարիք ձեռք բերելու համար մեծամեծ ջանքեր են հարկավոր, որքան ևս առավել հոգևոր հարստության, տևական բարիքի համար: Ժամանակը անցնում է արագ, երկիրը կատարում է յուր ընթացքը Տիեզերքի Տիրոջ կարգադրության համաձայն: Մեզ մնում է օգտվել. «Կգա գիշերը, երբ ոք չի կարող գործել» (Գարեգին Կաթողիկոս Հովսեփյանց, «Դեպի Լույս և Կյանք», էջ 15-16):

Անգիական պատմության մեջ գրված է, թե մի ալեհեր մարդ, անդրադառնալով իր անցած կյանքին, հառաչանքով ասել է. *«Ով մանկություն, որ անմեղությամբ, բայց անգիտակցությամբ անցար ու ով երիտասարդություն, որ սին հաճույքներով արագորեն անհետացար և ինձ առանց ուժի թողեցիր հասցնելով մի փոսի առջեւ: Ինչքան կուզեի մանկանալ և այս կյանքը վերստին սկսել, որպեսզի ունեցած փորձառությանս վրա կարողանայի ապրել լավագույն մի կյանք, մի կյանք՝ սիրել Աստծուն ու օգտակար հանդիսանալ մարդկանց, մի կյանք, որն ինձ անուն և պատիվ ապահովեր, մի կյանք, որը կարողանար հոգիս փրկել, երբ օրս հասնի հեռանալու այս կյանքից»:*

Աստված մեզ շնորհում է Նոր Տարի, նոր կյանք, նոր արև և մենք տրված կյանքը փոխանակ մեր Երկնավոր Հոր փառքի համար գործածելու, վատ գործեր ենք անում ու տարվա վերջում վերադարձնում ենք Նրան. արդեն իսկ մեր օրերը և ժամերը իզուր տեղը ծախսած լինելով:

Նոր Տարվա արշալույսը հստակորեն մեզ ցույց է տալիս առաքինության ուղին, որը Հիսուսի փառավոր գործերի ու նվիրումների լուսաճաճանչ կյանքի ճանապարհն է: Այդ մշտալույս ճանապարհի վրա ամեն բան նոր ու հրապուրիչ պիտի գտնենք:

Մեր նեղ օրերին, ո՛չ հին և ո՛չ էլ նոր ժամանակները չկարողացան քանդել մեր դարավոր Եկեղեցու ամուր ժայռը, որովհետև մեր հոգիներում վառ մնաց հավատի կրակը: Դժբախտաբար մեր խաղաղ կյանքում փորձում ենք հանգցնել այդ անմար բոցը և մեր նախնիների մեծասքանչ ավանդը:

Մարդը իր իմացական կարողության արդյունքներով կարող է անմահանալ այս աշխարհում և իր նյութական հարստությամբ ճոխ ու փարթամ կյանք ապրել. Բայց Ավետարանն ասում է. *«Ի՞նչ օգուտ է մարդուն, եթե*

ամբողջ աշխարհը շահի, բայց իր անձը կորցնի, որովհետև մարդ ի՞նչ ունի տալու իր անձի փոխարեն» (Մարկ. 8:36):

ԳԱՐՈՒ ՀԱՇԻՎԸ

Մի մարդ կալից գրաստով գարի էր կրում տուն: Եվ քուռակը մոր հետ գնում էր և հետ դառնում: Իսկ տանը, ուր կրում էին գարին, մի խոզ կար կապած, որին գիրացնում էին: Եվ գարին անպակաս էր նրանից, որպեսզի ուտի ու գիրանա: Եվ քուռակն ասաց մորը. «Ինչո՞ւ համար այն խոզն առանց աշխատանքի ուտում է գարին, որ մենք կրում ենք մեծ դժվարությամբ և մեզ, որ չարչարվում ենք, օրը մի անգամ են գարի տալիս»: Մայրն ասաց. «Լսիր, որդյակ և մի շաբաթ ևս համբերիր և ապա ես քեզ պատասխան կտամ, և քո աչքով կտեսնես»: Եվ մի շաբաթ հետո էշը և քուռակը բեռով տուն էին գալիս, քուռակը մորից առաջ էր գնում և լսեց խոնչոցի ահագին ձայն, որովհետև խոզին մորթում էին: Եվ խրտնեց քուռակը և հետ փախավ դեպի մայրը, և մայրն ասաց. «Ի՞նչ եղավ քեզ, որդյակ, որ սոսկում ես, մի վախենար խոզից, որովհետև նրանից գարու հաշիվն են ուզում»:

Եվ դարձյալ եկան կալը՝ գարի կրելու: Եվ երբ բարձած վերադարձան տուն, քուռակը բարձրացնելով ոտքի սմբակը, մորն ասաց. *«Ով մայր, տես, թե ոտքիս չի՞ փակչել գարու մի հատ, որ ինձանից էլ հաշիվ ուզեն, ինչպես խոզից»: (ՎԱՐԴԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԱՅԳԵԿՑԻ - ԱՂՎԵՍԱԳԻՐՔ):*

Եկեք փորձենք այնպես ապրել, որ այս ալեհեր, իր կյանքը ապրած մարդու նման չհառաչենք մեր անցած, կորած ու ետ չվերադարձող տարիների համար:

Մեզանից յուրաքանչյուրը մի գործ, մի պարտականություն ունի կատարելիք կյանքի տարբեր շրջաններում, որոնց միջից մի անգամ միայն պիտի անցնենք: *«Գործածի՛ր ժամանակդ,-* ասում է մտածողներից մեկը,-

եթե գնահատում ես հավիտենականության արժեքը: Երեկը չես կարող վերադարձնել, վաղվա վրա չես կարող վստահել. այսո՛րն է քոնը, որը, եթե չօգտագործես՝ կկորցնես, և ինչ որ կորչի՝ հավիտյանս կորած է»:

Իրական երջանկությունը ո՛չ նյութն է, ո՛չ հողը և ո՛չ էլ մարմինը, այլ՝ հոգեկան հարստությունը, որը միայն կարող ենք ստանալ Աստծուց՝ մեր սրտանց աղոթքների միջոցով:

Պողոս Առաքյալը Եփեսացիներին ուղղած Իր թղթում ասում է. *«Հեռո՞ւ վանեցեք ձեզնից հին մարդուն իր նախկին կենցաղով… նորոգվեցե՛ք ձեր մտքով և հոգով ու հագե՛ք նոր մարդը, որ ստեղծված է* ըստ Աստծու՝ արդարությամբ և ճշմարիտ սրբությամբ» *(Եփես. 4:22-23):*

Եկեք այսօրվանից մտածենք լավագույն կերպով օգտագործելու անհետացող ժամանակը, մեր օրերը անցկացնենք աստվածահաճո և մարդասիրական գործերով. ընտանեկան հարկերից ներս հայեցի դաստիարակություն տանք մեր նոր սերունդին ու մանավանդ պահենք մեր ազգային-եկեղեցական ավանդություններն ու դիմագիծը: Հիշենք Հիսուսի խոսքը և իրագործենք այն մեր կյանքում, քանի դեռ ուշ չի:

Մեր կյանքի օրինակով մեր երեխաներին ցույց տանք Հավատի և Սիրո ճանապարհը: Այլապես, մեր առջև բացվող նոր տարեշրջանը մի քայլ ևս կհեռացնի մեզ՝ մայրենի լեզվից, մեր հավատից և հավերժական լույսի ու հույսի աղբյուրը հանդիսացող Սուրբ Էջմիածնից և Մայր Հողից:

ՇՆՈՐՀԱՎՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ: Ամեն:

ՀՈԳԵՎՈՐ ՓՈՐՁԱՌՈՒԹՅՈՒՆ

«ԵՂԵՔ ԿԱՏԱՐՅԱԼ, ԻՆՉՊԵՍ ՁԵՐ ԵՐԿՆԱՎՈՐ ՀԱՅՐՆ Է ԿԱՏԱՐՅԱԼ» (ՄԱՏԹ. 5:48):

Երբեմն քրիստոնյաները չափից ավելի են տարվում հոգևոր փորձառություն ձեռք բերելու և ծառայություն մատուցելու համար, սակայն մոռանում են Հիսուսի խրատը. *«Եղեք կատարյալ, ինչպես ձեր երկնավոր Հայրն է կատարյալ»:* Մեր Տերը մեզանից կատարյալ գործեր ու ծառայություն չի պահանջում, այլ կամենում է, որ *մարդը իր հոգևոր էությունը կատարյալ դարձնի,* այսինքն *իր երկրային գործերը. լինեն արդար, մաքուր, նվիրված ու հավատով,* այլ խոսքով՝ մարդը հայելու նման լինի: Դրան հակառակ, չարը՝ սատանան, միշտ փորձում է մարդուն մեղքի մեջ գցել, որպեսզի *նրան ոչ թե կատարելության հասցնի, այլ՝ դատապարտի, անարժան դարձնի ու հուսալքության մատնի:* Հիսուսի համար մարդը ինքը իբրև Աստծու ստեղծագործությունը, մեծ արժեք ունի, քան թե նրա ծրագրավորված գործերն ու նպատակները, քանի որ ինչպես Տերն է ասում. *«Ի՞նչ օգուտ է մարդուն, եթե աշխարհը շահի, բայց իր անձը կորցնի ու տուժի» (Ղուկ. 9:25):*

Այս պատմությունը չարի՝ սատանայի, հերթական փորձությունն է մարդու համար, որը անշուշտ տանում է դեպի կործանում և ոչնչացում: Հիսուս խաչի վրա Իր արյունը թափելով փրկեց մարդուն մեղքից. եթե աղոթքով դիմենք Նրան, Նա միշտ մեզ հետ կլինի և կփրկի· միայն լսենք ու կատարենք Նրա խրատները:

ՀԵԾԱՆԻՎՈՎ ՄԱՐԴԸ

«Վաղ առավոտյան՝ մթնշաղին, մի երիտասարդ կարգի էր բերում իր հեծանիվը: Հիսուս մոտենում է նրան ու ասում.

Այդ ի՞նչ ես անում:

Երիտասարդն առանց ուշադրություն դարձնելու Նրա վրա, պատասխանում է.

Երեկ մի մարզիկի հանդիպեցի, որն ասաց, թե ինքը «ես»-ի վարպետ է ու մասնագետ, բարեհաջող կերպով «ես»-ն է մարզում ու ինձ մի լավ խորհուրդ տվեց, որ առավոտ շուտ հեծանիվով արագ գնամ ու հասնեմ ուխտատեղի, ուր Սբ. Զատկի տոնի առթիվ մեծ միջոցառում է լինելու: Ինչպես ես գլխի չէի ընկել…, բոլորից շուտ կհասնեմ, կօգնեմ, որ այնտեղ ամեն ինչ դասավորեն ու մասնակցեմ այդ հրաշալի միջոցառման: Այս տոնական օրվա ծառայությունն ինձ համար շատ կարևոր է, ինչքան շատ բան կարողանամ անել, այնքան ավելի մեծ հոգևոր փորձառություն ձեռք կբերեմ: Ես չեմ կարող հենց այնպես ապրել, պարզապես ապրելու համար, պետք է հնարավորությանս սահմաններում արագ ու շատ գործեմ: Իսկ հիմա ներեցեք, ժամանակ չունեմ, պետք է գնամ:

Երիտասարդը արագ նստում է հեծանիվը ու սլանում դեպի ուխտատեղի: Քանի որ առավոտ շուտ էր և դեռ չէր լուսացել ու ճանապարհը լավ չէր երևում, շտապելուց ընկնում է մի մեծ ու խոր փոսի մեջ: Քիչ հետո, երբ ուշքի է գալիս, ցավից տնքալով կանգնում է ու նայում վեր. արդեն ամբողջովին լուսացել էր ու տեսնում է իրեն խորհուրդ տվող այն «մարզիկին», որն իրեն էր նայում փոսի եզրից:

Շատ եմ ցավում,- ասում է «մարզիկը», (որը ինքը՝ սատանան էր),- բայց դու մի մեծ փոսի մեջ ես ընկել ու ինքնուրույն չես կարող այդտեղից դուրս գալ, ինչ արած այստեղ էլ կմնաս և ո՛չ ուխտատեղի կհասնես և ո՛չ էլ այլևս դուրս կգաս, իսկ ես չեմ կարող քեզ օգնել, պետք է շտապեմ, դեռ շատ մարդկանց «խորհուրդներ» պիտի տամ»,- ու ծիծաղելով անհետանում է:

Երիտասարդը հասկանում է, որ իր դեմ սատանան թակարդ էր լարել ու ինքը առանց գիտակցելու ընկել էր նրա ձեռքը, բայց եղածը եղել էր, պետք էր մի բան

մտածել, սակայն փոսը շատ խորն էր ու բարձր, ճար չկար, եթե մեկը օգնության չհասներ իրեն:

Այդ տխուր և հուսահատ պահին, երիտասարդը մի պահ աչքը բարձրացնում է վեր ու տեսնում մի ուրիշին, որը ժպիտով նրան հարցնում է.

Այդ ի՞նչ ես անում ու երկարում է պարանը:

Երիտասարդը մտաբերում է առավոտյան լուսաբացին իր հանդիպումը այդ մարդու հետ ու հասկանում է, որ այդ փրկարարը Ինքը՝ Հիսուս Քրիստոսն է և ուրախությամբ, արցունքն աչքերին, պատասխանում է.

Տեր, այդ Դո՛ւ էիր վաղ առավոտյան ինձ հարցնում, թե ի՞նչ եմ անում:

Ներիր ինձ, չճանաչեցի Քեզ… շատ էի զբաղված…»:

(Հովհաննես Մանուկյան, «Առակներ», 2012, Երևան);

«ՆԵՐԻՐ ԻՆՁ, ՉՃԱՆԱՉԵՑԻ ՔԵԶ, …ՇԱՏ ԷԻ ԶԲԱՂՎԱԾ …»:

Մեզանից շատերն էլ մեր առօրյա աշխատանքում, զանազան գործերով զբաղված լինելով, չեն լսում Տիրոջ ձայնը ու դրանով իսկ չեն կարողանում լրիվ և ամբողջական կերպով ճանաչել Նրան, քանի որ չարը մեզ միշտ զբաղված է պահում ու փակում մեր ոչ միայն ֆիզիկական, այլ նաև՝ հոգու աչքերը, ինչպես հեծանիվ քշողինը: Եվ երբ Հիսուս մեզ Իր ճշմարտություններն է փորձում տալ, որպեսզի կյանքում ուրախ ու երջանիկ լի-նենք, այդ ժամանակ փակում ենք մեր ականջները և աչքերը:

Եվ որպեսզի ավելի հստակ լինեն իմ ասածները և ձեզ հասանելի, ուշադիր կարդացեք այս պատմությունը ևս: Կարծում եմ կհավանեք:

«Մի քահանա վախճանվում է ու գնում երկինք; Այնտեղ մեկը հանդիպում է նրան ու հարցնում, թե՝ «Ի՞նչ զբաղմունքի տեր է եղել երկրի վրա»: Քահանան պատասխանում է, թե քառասուն տարի իբրև հոգևոր սպասավոր

ծառայել է Եկեղեցուն: Անծանոթը նրան հարցնում է. «Լավ, դուք Հիսուսին ճանաչո՞ւմ եք»; «Այո՛, իհարկե, Նա Աստծու Որդին է ու մեր Փրկիչը»: «Շատ լավ»,- պատասխանում է անծանոթը,- խնդրում եմ այս կողմը կանգնեք»: Ապա վախճանվում է բողոքական պատվելին ու նա էլ է երկինք բարձրանում: Նույն ձևով նրան է մոտենում անծանոթը և կրկնում իր հարցը: Պատվելին պատասխանում է, որ երկրի վրա հովիվ է եղել ու ավելի քան երեսունհինգ տարի ծառայել իր հոտին: «Լավ, դուք Հիսուսին ճանաչո՞ւմ եք»: «Այո՛, իհարկե, Նա մեր Փրկիչն է ու մեր Տերն է»: «Շատ լավ»,- պատասխանում է անծանոթը,- «Խնդրում եմ դուք էլ այս կողմը կանգնեք»: Նա էլ քահանայի պես մի կողմում կանգնած սպասում է: Երրորդը մահանում է մի տարիքով կին ու գալիս է երկինք: Անծանոթը նրան էլ է մոտենում ու հարցնում նույն ձևով: Տարիքով կինը պատասխանում է, թե երկրի վրա հավատով կամավոր երկար տարիներ երգել է մի եկեղեցու երգչախմբում: «Լավ, իսկ դուք Հիսուսին ճանաչո՞ւմ եք» հարցմանը, տարիքով կինը զարմացած պատասխանում է. «Մեղա քեզ Տեր, մեղա Հիսուս, Քեզ ո՞վ չի ճանաչում»:

Ուրեմն, անծանոթը հենց Ինքը Հիսուս Քրիստոսն էր, որին չէին ճանաչել քահանան և պատվելին, որոնք բազում տարիներ՝ մեկը 40 էր, մյուսը՝ 35, անընդհատ քարոզել ու գործել էին Նրա անունով: Այո՛, մենք կարծում ենք, թե ճանաչում ենք Տիրոջը, բայց, երբ գալիս է ժամանակը, անկախ մեր պաշտոնից ու դիրքից, չենք տեսնում Նրան, ինչո՞ւ, որովհետև պատրաստ չենք և մեր հոգու աչքերը փակ են; Կարծում ենք տեսնում ու ճանաչում ենք, սակայն, ինչպես վերևում տեսանք, դա այդքան էլ այդպես չէ: Տեսնում են նրանք, որոնք բարի, արդար, մաքուր ու հավատով գործեր են կատարում: Նրանք անմիջապես ճանաչում են Հիսուսին, ինչպես տարիքով կինը, որը իր հավատը ու սերը գործի էր վերածել և կամավոր երկար

տարիներ սրտանց ու անկեղծորեն ծառայել էր եկեղեցու երգչախմբում:

Ուրեմն, մի՛ նայեք ձեր բազմազբաղ վիճակին, այլ բարի գործեր կատարեցեք, ձեր հավատն ու սերը գործով ցույց տվեք, որպեսզի կարողանաք ճանաչել ու լսել Տիրոջ քաջալերիչ և հուսադրող ձայնը ու երբ մեկնեք այս աշխարհից և Նա մոտենա ձեզ ու հարցնի՝ *«Իսկ դուք Հիսուսին ճանաչո՞ւմ եք»,* առանց տատանվելու ու համարձակ պատասխանեք. *«Տեր Հիսուս, իսկ քեզ ո՞վ չի ճանաչում»* և կհաջողդի ամենամեծ գնահատականը մեր այն բարի ու արդար գործերի, որոնք կատարել ենք երկրային կյանքում: Ամեն:

ԱՇԽԱՐՀԸ ԴԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Դատաստանի համար եկա այս աշխարհը, որպեսզի, ովքեր չեն տեսնում, տեսնեն, և ովքեր տեսնում են, կուրանան» (Հովհ. 9:39)

Հիսուսի այս խոսքերը կարող են զարմացնել շատերին, որովհետև Նա այլ առիթներով վկայել է. *«Աստված իր Որդուն չուղարկեց աշխարհ, որ դատապարտի աշխարհը, այլ՝ որպեսզի աշխարհը նրանով փրկվի» (Հովհ. 3:17):*

Առաջին ակնարկով մտածում ենք, թե այս խոսքերի մեջ հակասություն կա: Արդյոք Տերը այս խոսքերով ի՞նչ է ուզում ասել մեզ:

Հիսուս ոչ թե աշխարհը դատելու, այլ նրան ողորմելու եկավ: Բարի լուր բերեց: Մարդիկ այդ բարի լուրը լսելով, երկու ձևով այն ընդունեցին: Նրանք, որոնք իրապես հավատով էին և պատրաստ էին Աստծու ճշմա-րիտ խոսքը լսելու, ուրախությամբ ընդունեցին այդ բարի լուրը, իսկ նրանք, որոնք աստվածային ճշմարտությունները մերժողներն ու ավելի աշխարհիկ ցանկությունների ետևից գնացողներն էին, բնական է չընդունեցին ու մերժեցին նույնիսկ լսել այն: Այս երկու ձևով մտածողները ինչպես երկու հազար տարիներ առաջ, այսօր էլ ապրում են կողք-կողքի՝ միասին:

Աստված մարդուն ստեղծեց և օժտեց ամենակարեվոր շնորհով, որը կենդանուն չտվեց. *խելքով, խղճով ու ազատ կամքով*: Մարդը իր ազատ կամքով կարող է այս աշխարհի պայմանների համաձայն Աստծուն մերժել կամ Նրա ողորմությունը ընդունել: Ընտրողն էլ կամ չընտրողն էլ հավասարապես շարունակում են ապրել իրենց կյանքի համաձայն: Աստված Իր ճշմարտությամբ, ինչպես նաև Սուրբ Գրքում գրված խրատներով, ցույց է

տալիս ուղիղ ճանապարհը, սակայն ինքը մարդն է որոշողը գնա՞ այդ ճանապարհով, թե՝ ոչ:

Նրանք, որոնք Սուրբ Պատարագի ընթացքում զոհաբերվող մեր Տիրոջ՝ Հիսուսի, փրկարար զորությանը հավատում են, նրանց մեղքերը ներվում են, նրանք, որոնք սիրելով լույսը, գնում են դեպի նա, հրաժարվելով իրենց սխալներից, ուղիղ կյանքով են ապրում իրենց փրկող այդ լույսի ներքո և Աստծուն ուրախացնում են: Իսկ նրանք, որոնք մերժում են Տիրոջ զոհողությունը իրենց փրկության համար, մշտապես մնալով իրենց կատարած սխալների մեջ, առանց անդրադառնալու, քայլում են խավարի մեջ ու լույսը հեռանում է նրանցից: Նրանք խավարը ավելի են սիրում, քան՝ լույսը:

Ուրեմն, յուրաքանչյուր մարդ ընտրելով իր ճանապարհը, Աստծու կողմից գնահատվում ու արժևորվում է այդ ձևով:

ՀՈԳՈՒ ՄԱՍԻՆ
(ՀԱՅԵԼԻ ՎԱՐՈՒՑ ԲԱՐՈՅԱ-ԽՐԱՏԱԿԱՆ ՊԱՏՈՒՄՆԵՐ)

»*Այնպես պատահեց, որ մի անգամ ոմանք պանդոկում (հյուրանոց) գինի էին խմում և հարբած խոսում էին միմյանց հետ զանազան բաներից: Հետո զրույց բացվեց, թե այս աշխարհից հեռանալուց հետո ի՞նչ է լինելու: Այդ ժամանակ նրանցից մեկն ասաց.*

Քահանաները սնոտի կերպով մեզ ծաղրում են, երբ ասում են, թե հոգիներն այս կյանքից հետո ողջ են մնում:

Այս լսելով՝ ամենքն էլ ծիծաղեցին: Եվ ահա ուժեղ ու մեծահասակ մի մարդ, գալով նրանց մոտ նստեց և հրամայելով գինի բերել, սկսեց ըմպել և հարցրեց, թե միմյանց հետ ի՞նչ են խոսում: Առաջինը պատասխան տվեց.

Մարդկանց հոգիների մասին էինք զրուցում, եթե մեկը կամենար իմ հոգին գնել, նրան էժան կվաճառեի և ինչ որ առնեի, հոժարությամբ ամենքի փոխարեն գինու գինը կվճարեի:

Եվ երբ բոլորը նրա անմիտ խոսքի վրա ծաղրում էին, հյուրն ասաց.

Ես այդպիսի վաճառող եմ փնտրում և հոժարությամբ կգնեմ: Ասա՛, ի՞նչ գնով ես վաճառում այն:

Իսկ նա, բերանը բացելով, պատասխանեց:

Այսքան:

Եվ անմիջապես գինը որոշեցին, և հոգիների գնորդը գումարը տվեց: Եվ երբ ամենքն ուրախությամբ լի բաժակով (գինի) էին խմում, նա, որ իր հոգին էր վաճառել, հոգ չէր անում: Իսկ երբ երեկո եղավ վաճառականն ասաց.

Ժամանակն է, որ յուրաքանչյուր ոք իր տունը գնա, բայց մինչև գնալը, նախ դատաստան արեք: Եթե մեկը ձի գնի, և այն բերանին սանձ ունենա, մի՞թե սանձը նրանը չի լինի, որ ձին գնել է:

Ամենքն էլ միաբերան պատասխան տվեցին.

Այդպես է:

Եվ ահա հոգեվաճառ թշվառականն ահից սկսեց դողալ: Իսկ վաճառականը, նրան առնելով, բոլորի աչքի առաջ վեր բարձրացրեց և հոգով ու մարմնով իր հետ դժոխք տարավ, քանզի մարդու կերպարանքով սատանան էր. քանզի մարդու հոգին էլ ուրիշ, ով կգնի, եթե ոչ նա, ով մշտապես փնտրում է, որպեսզի մարդու հոգին կորստյան մատնի»:

Հիսուս ի ծնե կույրի աչքերը բացեց, սակայն մինչև բուժելը նրան հարցրեց. *«Հավատո՞ւմ ես, որ ես կարող եմ քեզ բուժել»* և *«այո»* դրական պատասխանից հետո նոր բացեց նրա աչքերը: Եթե մենք էլ այդ կույրի հավատալու ցանկությունը, կամքն ու հնազանդությունը ցույց տանք, մեր ընտրությունը մեզ պիտի քայլ առ քայլ առաջնորդի

դեպի հավիտենական լույսը: Սակայն դրա հակառակն էլ կա, եթե մերժենք գնալ դեպի լույսը:

Մեր առջև ընտրության ճանապարհները միշտ բաց են: Փորձենք ի ծնե կույրի պես բուժվել և հավիտենական բարությունը ստանալ: Նա մարմնապես կույր էր, Հիսուսին դիմեց և բացվեցին նրա մարմնի և' հոգու աչքերը: Այսօր էլ աշխարհում շատ շատերը կույր են ոչ միայն ֆիզիկապես, այլ առավելապես հոգով, որը շատ անգամներ անբուժելի է: 5-րդ դարի մեր մեծագույն հայրերից Եզնիկ Կողբացին ասում է. *«Լավ է կոյր աչօք, քան կոյր մտօք»,* այսինքն՝ *«Ավելի լավ է աչքերով կույր լինել, քան թե՝ մտքով»:* Հիսուս Ինքն էր ասում· *«Աչքեր ունեք՝ չե՞ք տեսնում, ականջներ ունեք՝ չե՞ք լսում»*: Այո', աշխարհը այսօր կուրացել ու խլացել է աստվածային ճշմարտությունները լսելու և տեսնելու մեջ: Մարդիկ մոռանալով Աստծուն, Հիսուս, խաչ, եկեղեցի, հավատ, խելակորույս ընկել են նյութականի՝ դրամի և ունեցվածքի հետևից, մի խօսքով այն ինչ որ ժամանակավոր է ու անարժեք: Հարց է ծագում, *«Իսկ մարդը ինչպե՞ս կարող է ազատվել խավարի իշխանությունից«:*

Այն ժամանակ, երբ լսենք Տիրոջ ձայնը. *«Եկե՛ք ինձ մոտ, բոլո՛ր հոգնածներդ ու բեռնավորվածներդ, և ես ձեզ կհանգստացնեմ: Իմ լուծը ձեր վրա վերցրե՛ք և սովորեցե՛ք ինձնից, որ հեզ եմ և սրտով խոնարհ. և ձեզ համար հանգիստ պիտի գտնեք, որովհետև իմ լուծը քաղցր է և իմ բեռը՝ թեթև» (Մատթ. 11:28-30):*

Բացե՛ք ձեր հոգու աչքերը, հավատով նորոգվեք և զորացեք, որպեսզի օրհնվի ձեր կյանքը: Ամեն:

ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՀԱՐՍՏՈՒԹՅՈՒՆԸ

«ԲԺԻՇ՚Կ, ԲԺՇԿԻ՚Ր ԻՆՔԴ ՔԵԶ» (ՂՈՒԿ. 4:23)

Այս խոսքը ասվեց Հիսուսի մասին, երբ նա Տաճար էր գնացել աղոթելու: Նրան տրվեց Եսայի մարգարեի գիրքը, որպեսզի նրանից մի էջ կարդա: Ընթերցման վերջավորության Հիսուս ասաց լսողներին, թե՝ *«Այսօր այս գրքի խոսքը արդեն իրականացել է»:*

Ներկաները զարմացել էին, քանի որ հիշում էին, որ Նա ատաղձագործ Հովսեփի որդին էր, և նա ինչպե՞ս կարող էր Ինքն իր մեջ կատարված տեսնել Եսայի մարգարէի խոսքը: Հիսուս կարդաց նրանց միտքը և ասաց. *«Անշուշտ, ինձ այս առածը կասեք. «Բժի՚շկ, բժշկի՚ր ինքդ քեզ»: Այն ամենը, ինչ արել ես Կապառնայումում, որչափ որ լսեցինք, արա՚ և այստեղ, քո գավառում»: Եվ նա ասաց. «Ճշմարիտ եմ ասում ձեզ, որ մարգարեն ընդունելի չէ իր քաղաքում» (Ղուկ. 4:23-25):*

Նրանք տեսել էին Հիսուսի մանկությունը և գիտեին, որ Նա աղքատ ծնողների զավակ էր ու չէին կարողանում պատկերացնել, թե Նա կարող էր աստվածային շնորհներով օժտված լինել: Ինչ կա. քիչ աղքատ ծնողների զավակներ կան, որոնք հայտնի մարդիկ են դարձել կամ հակառակը՝ հարուստ ծնողների զավակներ, որոնք ոչ պիտանի մարդիկ են եղել ազգի համար:

«Բժի՚շկ, բժշկի՚ր ինքդ քեզ» խոսքը վերաբերում է ամեն մեկիս, քանի որ իբրև մարդիկ բոլորս էլ ունենք ֆիզիկական ցավեր և նեղություններ, որոնց համար գնում ենք բժշկի, որպեսզի նա մեզ ուղղություն տա, թե ինչպե՞ս կարող ենք բուժվել: Դրա կողքին ունենք նաև հոգեկան ցավեր, որոնց համար աղոթքի ճանապարհով կապ պիտի հաստատենք մեր Երկնավոր Հոր հետ, որպեսզի Նա այդ ցավերը մեղմացնի:

Ամեն մարդ առաջին հերթին ինքը պիտի լինի իր բժիշկը: Ինչպե՞ս: Շատ պարզ: Ամեն օր պիտի խնամենք մեր մարմինը և չչարաշահենք այն: Դժբախտաբար մեր օրերում ես շատ անգամ տեսնում եմ, թե ինչպես երիտասարդներն ու նաև տարիքով մարդիկ, զբաղված են ուտելիխմելով՝ չափ ու սահման չճանաչելով: Եվ պատահում է անսպասելին՝ *«հեռացավ կյանքից անժամանակ, կյանքի ծաղկուն տարիքում»:* Ինչո՞ւ, ինչո՞ւ, ահա այս հարցն ենք տալիս այդ ժամանակ, մի պահ սթափվում ենք, սակայն դա մի պահ ու նորից… այլևս չեմ խոսում հոգին խնամելու մասին: Նույնիսկ չգիտեն, թե դա ինչպե՞ս պիտի անեն: Սովորեցնում ես, լսում են մի ականջով, մյուսով դուրս է գալիս: Հոգու խնամքը լինում է միայն աղոթքով ու ծոմապահությամբ: Իսկ ո՞ւր է մեր աղոթքը: Էլ չեմ խոսում պահեցողության մասին:

Մարդու համար երկուսն էլ կարևոր են՝ ֆիզիկական առողջությունը և հոգեկան խաղաղությունը: Մեկը մյուսին պիտի լրացնեն, որպեսզի ամբողջություն լինի և մարդը առողջ մնա:

Այս պատմությունը լույս կսփռի իմ ասածների վրա, ուշադի՛ր կարդացեք;

«Այս դեպքը տեղի է ունեցել Ամերիկայի Հարթվրրտ Քընեթիքեթի մեջ, դերձակ Արամայիս անունով մի հայ մարդու:

Դերձակ Արամայիսը տաքարյուն ու աշխույժ, ընկերական և ազնիվ վարվելակերպ ունեցող մի մարդ էր՝ իրեն հատուկ անձնական համոզմունքներով ու ցանկություններով: Նրան երբեմն այցելության էր գալիս Հոգևոր ճեմարանում սովորող մի երիտասարդ, որը դերձակի հետ խոսակցությունների ընթացքում միշտ վեճի մեջ էր մտնում նրա հետ կյանքի որոշ հարցերում. մանավանդ դրամական խնդիրների շուրջ: Այդ վեճերի ընթացքում

Վարպետ Արամայիսի հաճախ կրկնվող խոսքը լինում էր այս արտահայտությունը. «Ով որ փող շատ ունի երբեք էլ դարդ ու ցավ չունի»: Ապագա երիտասարդ հոգևորականը նրա հետ համաձայն չէր և միշտ շեշտում էր մարդու համար ամենակարևորը՝ առողջությունը և հոգեկան հարստությունը, «որոնք դրամով չես կարող գնել»,-ասում էր նա: Ու այսպես ամեն այցելության վարպետ Արամայիսն ու երիտասարդը վիճում էին այս հարցում ու երբեք էլ համաձայնության չէին գալիս, քանի որ դերձակը երազում էր հարուստ լինելու և շատ դրամ ունենալու մասին, ինչո՞ւ, որովհետև նա առողջ էր ու նրա միակ պակասությունը այդ պահին դրամն էր:

Ժողովուրդը երբեմն այս խոսքը ունի. «Ով ինչի կարիք ունի, այդ է ուզում ու ձգտում ունենալ»:

Սովորական մի աշխատանքային օր, երբ երիտասարդը կրկին այցելում է նրան, դերձակ Արամայիսը ժպիտով դիմավորելուց հետո, նրան ասում է. «Արի, արի, մի շատ ուրախ լուր ունեմ տալու քեզ»: Երիտասարդը կատակով նրա ժպիտին ժպիտով պատասխանելուց հետո, ասում է. «Վարպետ, երևում է բախտդ բերել է ու հարստացե՞լ ես, եթե ոչ, ապա ի՞նչ է քո այսքան ուրախության պատճառը»: Վարպետը մի պահ շունչ առնելով ասում է. «Ո՛չ , ո՛չ, իրապես արդեն հարուստ մարդ լինելուս մասին այսօր եմ իմացել»: Ու պատմում է օրվա ընթացքում իր հետ պատահածը: Ի՞նչ էր այն:

«Հաճախորդներիցս մեկը, որը տկար ու թույլ մի մարդ էր, միջին տարիքի, վերջը իմացա, որ միլիոնատեր էր, այսօր ինձ մոտ եկավ այն ժամանակ, երբ ես կեսօրվա ճաշս էի ուտում տանից ուղարկված ձավարով փլավը, քյովթան և հետն էլ շշով թանը: Դեռ նոր էի սկսել ճաշել, երբ նա ներս մտավ արհեստանոցս: Ճիշտը եթե խոստովանեմ շատ տոված էի և ախորժակով էլ ուտում էի: Երբ նրան տեսա, հիշեցի, որ մարդու հագուստը պիտի արդուկեի, բայց մոռացել էի: Ցավեցի մոռացկոտությանս հա-

մար և փորձեցի ճաշս կիսատ թողնել ու հագուստը արդուկել: Սակայն մարդը չթողեց ու ինձ ասաց, որ առանց շտապելու հանգիստ ճաշս շարունակեմ ուտել ու ինքը նստեց սպասելու: Առ ի քաղաքավարություն նրան հրավիրեցի միանալ ինձ միասին ճաշելու, սակայն նա շնորհակալություն հայտնեց ու հառաչելով ասաց. «Երանի թե կարողանայի, հիմա՛ դու կե՛ր, ես իմ պատմությունը պատմեմ»:

Նա պատմում էր, թե իր պատանեկության ու երիտասարդության տարիներին շատ է երազել միլիոնատեր դառնալ: Եվ ամեն բան արել է, որ հասնի այդ նպատակին: Ոչ մի միջոցի առաջ կանգ չի առել, նույնիսկ անտեսել է իր ընտանիքի բոլոր հոգսերը: Վերջ ի վերջո շատ տարիներ հետո, նա հասել է իր նպատակին՝ դարձել է միլիոնատեր: Նրա ուրախության չափը չի եղել, սակայն, ինչպես ժողովուրդն է ասում. «Երկու երնեկ մի տեղ չի լինում», այդ փշոտ ճանապարհին նա հիվանդանալով ենթարկվում է մի քանի վիրահատությունների ու կորցնում իր թանկագին առողջությունը: Իր խոսքերն էին. «Ջիղերս, երակներս ու արյանս շրջանառությունը անդարմանելիորեն վնասված են: Բժշկիս շարունակական հսկողության տակ եմ ու ապրում եմ, ճոճվող կյանքով, ցավերով լի: Իմ առօրյա սնունդս է միայն ու միայն մի քանի հատ քրեքքր և կամ երկու բաժակ կաթ, սրանից ավելի ոչ մի այլ ուտելիք: Բժիշկս ասել է, որ եթե ես մի օր փորձվեմ այս սովորական սնունդիս սահմանից մի քայլ այն կողմ անցնել, օրինակ՝ մի քիչ մսեղեն կամ նման մի բան ուտել, որը դու ուտում ես, այդ կլինի իմ վերջին օրը»:

Դերձակ Արամայիսը շարունակելով, ասաց, որ իր հաճախորդը հառաչելով կրկնել է այս խոսքերը, որոնք նիզակի պես խոցել են իր սիրտը: Հիվանդի հառաչանքով ասված խոսքերն էին. «Երդվում եմ, որ եթե հնարավոր լիներ քո առողջությունը և ախորժակը գնել, նույնիսկ մի րոպե իսկ չպիտի տատանվեի ունեցածս հարստությունը

ամբողջու-թյամբ քեզ տալու, միայն, որպեսզի կարո-ղանայի գոնե մի քանի տարի առողջ ու բնականոն կյան-քով ապրել: Բայց դրամը չի կարող անկարելին անել, առողջությունը չի կարող գնել: Իսկ նրանք, որոնք «ամե-նակարող դոլար» (Օլմայդի դալլը) խոսքը հրապարակի վրա են գցել, պարզապես նյութապաշտ ապուշներ են, որոնք չգիտեն, թե ի՞նչ են խոսում»,- վերջացրեց հա-ճախորդս և հագուստը վերցնելով գնաց:

Դերձակ Արամայիսը շարունակեց. «Հաճախորդիս գնալուց հետո ամեն բան փոխվեց իմ աչքում, ես ինձ դա-տապարտեցի, որ մինչև այսօր չեմ հասկացել իմ առող-ջության գինը և նույնիսկ անարժեք մի բան եմ համարել այն: Հիմա եմ զգում ու հասկանում, որ ես ինչքան հարուստ եմ եղել»: Նա իր դասը առել էր և հասկացել իր հարստության գինը, որն իր ունեցած առողջությունն էր և շարունակելով ասաց. «Երանի թե առողջություն ունեցող-ները իմաստուն լինեն և լրիվ կերպով հասկանան իրենց ունեցածի արժեքը»:

Այո՛, առողջությունը մարդու համար անգին հա-րստություն է, միայն թե պետք է հասկանալ ու գիտակցել և ժամանակից շուտ չկորցնել այն:

Առողջություն ասելով պետք է հասկանալ, այն իր ամբողջական նշանակությամբ, որը մեկ է ու անբաժա-նելի, այսինքն՝ առողջություն մարմնի, մտքի ու հոգու:

ա. Առողջ է <u>մարդու մարմինը,</u> եթե այն խնամում ենք ու բնականոն կյանքով ապրում մեր կյանքը: Մար-մինը երկաթ չի, որ դիմանա, մի օր պիտի մաշվի, եթե չարաչար կերպով օգտագործենք այն:

բ. Առողջ է <u>մարդու միտքը</u>, եթե բարոյական իմաս-տով ճշմարտության լույսով է լուսավորված:

գ. Առողջ է մարդու հոգին, եթե ճշմարիտ հավատով իր Աստծու հետ շարունակական հաղորդակցության մէջ է գտնվում;

Իսկ հիմա կարող եք ինքներդ ձեզ հարց տալ. *«Արդյո՞ք մարմնով առողջ ու հանգիստ եք»:* Սակայն դա միայն խոսքով չի լինում: Հիսուս ասում է. *«Բժիշկ, բժշկի՛ր ինքդ քեզ»,* այսինքն՝ առաջին հերթին մենք պիտի լինենք մեր մարմնի ու հոգու բժիշկը: Մարմինը պիտի խնամենք սնունդով, իսկ հոգին՝ աղոթքով: Երկու հարստություն կողք կողքի պիտի լրացնեն իրար ու մեզ պիտի պահեն առողջ և ապահով: Ուրեմն, *«Զգույշ եղե՛ք, քննեցե՛ք դուք ձեզ տեսնելու համար, թե ձեր ունեցած այս օրհնությանը արժանի՞ եք»:*

Աղոթենք, որ Աստված Իր ողորմության ու գթության դռները բացի ու բուժի մեզ և ների մեր մեղքերը, որպեսզի սրանից հետո զղջմամբ ու ապաշխարությամբ կարողանանք հետևել Նրան և ապրենք աստվածահաճո կյանքով: Ամեն:

ՏԵ'Ր, ԱՎԵԼԱՑՐՈ'Ի ՄԵՐ ՀԱՎԱՏԸ» *(ՂՈՒԿ. 17:5)*

ԱՆԴԱՄԱԼՈՒՅԾԻ ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆԸ

«ՔԵ'Զ ԵՄ ԱՍՈՒՄ, ՎԵ'Ր ԿԱՑ, Ա'Ռ ՔՈ ՄԱՀԻՃԸ ԵՒ ԳՆԱ' ՔՈ ՏՈՒՆԸ» (ՄԱՐԿ. 2:11)

Այս խօսքը ես վերցրել եմ Մարկոս Ավետարանչի 2-րդ գլխի 1-12 համարներից, ուր պատմվում է Հիսուսի հերթական հրաշքներից մեկի մասին, որը կոչվում է Անդամալույծի բժշկությունը: Նա պատմում է, թե Հիսուս Կափառնայում քաղաքում մի տան մեջ քարոզում էր և զանազան բժշկություններ էր կատարում: Շատ ժողովուրդ էր հավաքված, թե' տան ներսում և թե' դրսում՝ *«շարժվելու տեղ չկար»* և ինչպես այսպիսի ժամանակ ասում են, նման դեպքերում ուղղակի որևէ մեկի համար ներս մտնելը անկարելի էր: Այնտեղ կար մի անդամալույծ, որին չորս հոգով էին բերել, սակայն ներս մտնելու հնարավորություն չլինելու պատճառով, նրանք բարձրանում են տանիքը, բացում առաստաղն ու հիվանդին իջեցնում են ուղիղ Հիսուսի մոտ: Ավետարանի խոսքերն են·

«Եվ Հիսուս, տեսնելով նրանց հավատը, անդամալույծին ասում է· «Որդյա՛կ, քո մեղքերը քեզ ներված են»: Զարմանալիորեն մեր Տերը հիվանդին չհարցրեց, թե նա հավատո՞ւմ է, որ Ինքը կարող է նրան բուժել, ինչպես արեց կույրերի, կաղերի, գոսացածների, բորոտների բժշկության պարագաներում: Ինչո՞ւ, որովհետև տեսավ հիվանդի ու նրան բերողների խոր հավատը: Բայց քանի որ նաև գիտեր, թե նա ինչո՞ւ է անդամալույծ դարձել, նախ ուզեց նրա մեղքերին թողություն տալ, ապա բուժել: Դրա համար ասաց· *«Որդյա՛կ, քո մեղքերը քեզ ներված են»:*

Այնտեղ գտնվող փարիսեցիները, դպիրներն ու օրենսգետները բժշկության հրաշքներ շատ էին տեսել,

բայց մեղքերին թողություն տալու նմանատիպ օրինակի չէին հանդիպել: Ուստի, իրենց մտքում մի տեսակ փոթորիկ է առաջանում ու զարմացած իրենք իրենց հարց են տալիս· *«Այս ի՞նչ է խոսում, սա հայհոյում է, ո՞վ կարող է մեղքերին թողություն տալ, եթե ոչ՝ միայն Աստուած»:* Հիսուս անմիջապես կարդում է նրանց միտքը ու հասկանում, թե ի՞նչ են մտածում ու նրանց աչքերի մեջ նայելով ասում է· *«Ինչո՞ւ ձեր մտքում այդ էք խորհում· ո՞րն է ավելի դյուրին, անդամալույծին ասե՞լ՝ քո մեղքերը ներվա՞ծ են, թե՞ ասել՝ վե՛ր կաց, ա՛ռ մահիճդ և գնա՛ քո տունը: Բայց, որպեսզի իմանաք, որ մարդու Որդին երկրի վրա իշխանություն ունի ներելու մեղքերը,- անդամալույծին ասաց,- քե՛զ եմ ասում, վե՛ր կաց, ա՛ռ քո մահիճը և գնա՛ քո տունը»:* Հիսուսի հրամայելն ու անդամալույծի վեր կենալը մեկ է լինում: Նոր ոտքի կանգնող մանուկի նման, անդամալույծը կամաց-կամաց փորձում է կանգնել և զգալով ուժ իր սրունքներում, բարձրանում է և ուրախ, զվարթ, հոգով մաքրված ու մարմնով բժշկված, դուրս է գալիս դռնից և տուն գնում: Թե՝ ներսում եղող ժողովուրդը և թե՝ դրսում հավաքված բազմությունը զարմանքով ականատես են լինում այս հրաշքին ու սկսում ամենուրեք պատմել այս մասին: Մարկոս Ավետարանիչը եզրափակում է այս խոսքերով· *«Եվ վեր կացավ (խոսքը անդամալույծի մասին է) ու անմիջապես վերցնելով մահիճը՝ բոլորի առաջ դուրս ելավ, այնպես որ ամենքը զարմացան և փառք էին տալիս Աստծուն ու ասում, «Այսպիսի բան երբեք չեն տեսել»:*

Ահա ձեզ Մարկոս Ավետարանչի վկայությունը Հիսուսի հրաշքներից մեկի մասին:

Հավաքական կյանքում, երբ ապրում ենք միասին իբրև նույն Եկեղեցու ու ժողովրդի զավակներ, առավելապես հավատը մնում է ամենակարևորը: Քրիստոնեական Եկեղեցին խարսխված է հավատի հիմնաքարի վրա: Եվ

երբ հավաքվում ենք Եկեղեցում, անպայման կարիք չունենք շոշափելի կերպով դեմ առ դեմ տեսնելու Աստծուն, բավական է միայն, որ հավատ ունենանք: Արդեն հավատալ նշանակում է տեսնել ու զգալ, հասկանալ ու ճանաչել Աստծուն:

Հավատն այնքան ուժեղ է, որ նրան հավատացողները կարող են պատճառ հանդիսանալ, որ փրկվեն ուրիշները: Այդպիսի մի դեպք էր նաև այս պատմությունը, երբ չորս հոգի հիվանդին տարան Հիսուսի մոտ: Մարդիկ, որոնք իրապես խոր հավատ ունեին և նրանց շնորհիվ անդամալույծը Հիսուսի միջոցով ոչ միայն մեղքերից մաքրվեց, այլև բուժվեց: Անդամալույծի հիվանդ մարմնի հետ, հիվանդ էր մանավանդ նրա հոգին: Եվ մի' կարծեք, թե երբ ասում ենք անդամալույծը հավատացյալ չէր, անտեղի մեղադրում ենք նրան: Արդեն իսկ Ավետարանն էլ վկայում է այս մասին· *«Եվ Հիսուս, տեսնելով նրանց հավատը, անդամալույծին ասաց· «Որդյա՛կ, քո մեղքերը քեզ ներված են»:* Անդամալույծին տանողները հավատում էին և նա վայելեց բուժումը: Ավետարանում այսպիսի դեպքերի ականատես ենք լինում և օրինակները շատ են: Հովհաննես Ավետարանիչը 11-րդ գլխի 39 համարում պատմում է մեռած Ղազարոսի մասին, որը չորս օր մեռած էր, երբ Հիսուս այցելեց նրա քույրերին: Քույրերից մեկը՝ Մարթան, Նրան տեսնելով ասաց· *«Տե՛ր, եթե այստեղ եղած լինեիր, իմ եղբայրը մեռած չէր լինի»:* Երբ Հիսուս տեսավ, որ նա լալիս է և նրա հետ եղող հրեաներն էլ լալիս են, սաստիկ խռովեց իր հոգում և ասաց· *«Ո՞ւր դրիք նրան» (Հովհ· 11:40):*

Մարթան Նրան ասաց· «Տե՛ր, հիմա արդեն նեխած կլինի, քանի որ չորս օրվա է»: Հիսուս նրան ասաց· «Քեզ չասացի՞, եթե հավատաս, կտեսնես Աստծու փառքը»· կարծես դրանով նրան ուզում էր հասկացնել, թե դո՛ւ լրացրու մահացածի պակասող հավատը: Եվ ինչպես

գիտենք, քույրերի հավատը այնքան հզոր էր, որ իրենց մահացած եղբորը օգնեցին ետ բերել այն աշխարհից: Նույն բանը մենք էլ կարող են անել, եթե անկեղծորեն հավատանք, վստահ լինենք մեր աղոթքի զորությանը, մի՞թե ավելի օգտված չենք լինի; Եթե մեզանից շատերը անհավատ կամ թերահավատ են, Տերը մարդասեր է և կընդունի նրանց զղջումը, միայն թե դուռը թակենք· *«Հավատում եմ, օգնի՛ր իմ անհավատությանը» (Մարկ· 9:24): Եվ եթե կարծում եք, թե հավատում եք, բայց դեռևս ձեր հավատը կատարյալ չէ, պետք է ասեք, ինչպես դա արեցին առաքյալները· «Տե՛ր, ավելացրու մեր հավատը» (Ղուկ·17:5): Ուրեմն, հավատի մի մասն ունեք, իսկ մյուս՝ ավելի մեծ մասը Նրանից՝ Հիսուսից կստանաք» (Սուրբ Կյուրեղ Երուսաղեմացի «Կոչումն Ընծայության», էջ 81-82):*

«Իբրև մեր սեփական հավատը, որ մենք կարող ենք սովորել ու նույնիսկ արտասանել, կարեվոր է, որ ստանանք բուն արմատից՝ Եկեղեցուց, որը հաստատված ու ամուր հիմքերի վրա է դրված Սուրբ Գրքի ճշմարտություններով: Ուրեմն, ուշադիր եղեք և պահպանեք ավանդությունները ու դրանք խորը գրեցեք ձեր, ձեր զավակների ու թոռների սրտերում» (Սուրբ Կյուրեղ Երուսաղեմացի «Կոչումն Ընծայության», էջ 84) :

Քարոզս ուզում եմ վերջացնել 4-րդ դարի Ընդհանրական Քրիստոնեական Եկեղեցու նշանավոր հայրերից մեկի՝ Սուրբ Կյուրեղ Երուսաղեմացու սքանչելի խրատականով· *«Երկյուղածությամբ պահեք դրանք (խոսքը ավանդությունների ու մեր հավատի մասին է): Չլինի թե թշնամին կարողանա թուլացածներից ոմանց մոլորեցնել: Չլինի թե որևէ հերետիկոս աղավաղի որևէ բան այն ամենից, ինչ այստեղ ավանդում ենք ձեզ: Քանզի հավատը նման է դրամատուն դրված արծաթի, ինչը մենք այժմ կատարեցինք: Աստված մեզնից հաշիվ կպահանջի այդ պահը չօգտագործելու համար: «Պատվիրում եմ թող,-*

ինչպես ասում է առաքյալը,- Աստծու առաջ, Ով կենդանություն է տալիս ամեն ինչի և Հիսուս Քրիստոսի առաջ, Ով վկայեց Պոնտացի Պիղատոսի առաջ, անարատ պահեք այս բարի վկայությունը և հավատը, որ ձեզ ավանդվեց, մինչև մեր Տեր Հիսուս Քրիստոսի հայտնությունը»: Այժմ քեզ հանձնվեց կյանքի գանձը և Տերը, երբ հայտնվի, քեզնից պիտի պահանջի ավանդվածը: Ինչ-որ մի որոշ ժամանակ այն բոլորին կբացահայտի արքաների Արքան և Տերերի Տերը: Անմահության միակ տերը: Նա, Ով բնակվում է անմատչելի լույսի մեջ, Նա, Ում ոչ մի մարդ չի տեսել և տեսնել չի կարող» (*Սուրբ Կյուրեղ Երուսաղեմացի «Կոչումն Ընծայության», էջ 81-82):*

Այդ օրերից անցել են ավելի քան հազար վեց հարյուր տարի, բայց Սուրբ Կյուրեղ Երուսաղեմացու այս խրատականը այսօր էլ չի կորցրել իր ուժը: Մեզ մնում է հետևել այդ խրատներին և ամուր պահել մեր հայրերից մեզ ավանդված հավիտենականության զենքերը՝ *ճշմարիտ հավատը, մեր ավանդություններն ու մեր մայրենի քաղցրիկ լեզուն:* Ամեն:

ՉԱՐՀԱՄԱՐՀԵՆՔ ՄԻՄՅԱՆՑ

«Ոչ ոք նրան թող չարհամարհի, և նրան ճանապարհ դրեք խաղաղությամբ, որ գա ինձ մոտ, քանզի նրան սպասում եմ եղբայրներով հանդերձ… Արթո՛ւն կացեք, հաստատո՛ւն մնացե՛ք հավատի մեջ, քա՛ջ եղեք, զորացե՛ք: Ձեր ամեն ինչը սիրով թող լինի» (Ա. Կորնթ. 16:11, 13-14):

Այսօր մեզանում տարածված մի արատավոր ու ոչ քրիստոնեական երևույթի մասին եմ ցանկանում գրել, որին հնարավոր չէ չանդրադառնալ. ԴԱ ՏԿԱՐՆԵՐԻ, ԹՈՒՅԼԵՐԻ ԵՎ ՀԻՎԱՆԴՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՄԵՐ ԱՐՀԱՄԱՐՀԱՆՔՆ ՈՒ ԾԱՂՐԱԼԻՑ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔՆ Է:

Բոլորս մեզ քրիստոնյա ենք համարում, բայց առիթն ու հնարավորությունը բաց չենք թողնում մեր առավելություններով ու դրական կողմերով հպարտանալու, սակայն գործնականում մեր ապրած կյանքով արդյոք կիրառում և կատարո՞ւմ ենք աստվածահաստատ պատգամներն ու պատվիրանները; Հիսուս ասում է. *«Սիրեցեք միմյանց»* և *«Ոչ ոքի մի արհամարհեք»: «Նոր պատվիրան եմ տալիս ձեզ, որ սիրեք միմյանց, ինչպես ես ձեզ սիրեցի, դուք էլ միմյանց սիրեցեք» (Հովհ.13:34):* Այսօր մեր մեջ նկատվում է արհամարհանք և ծաղրական վերաբերմունք հատկապես մեզանից թույլ, տկար, հաշմանդամ և նույնիսկ ծեր անձանց նկատմամբ, ովքեր առավել մեր ուշադրության ու խնամքի կարիքն ունեն: Իբրև Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու խոնարհ սպասավոր՝ ավելի քան երեսունինը տարիներ եղել եմ իմ ժողովրդի հետ թե Հայրենիքում և թե այստեղ՝ Ամերիկայում: Ինչ որ վկայում եմ ընդհանուրի մասին համար է, բացառությունները հարգելի են:

Վարդան վարդապետ Այգեկցին ասում է. *«Նա, ով նախատում է գաճաճին, տգեղ մարդուն կամ էլ խեղվածին, նրա Արարչին է նախատում»,* քանի որ Աստված մարդուն Իր պատկերով և նմանությամբ ստեղծեց: Որպես ճշմարիտ քրիստոնյաներ մեր պարտքն է անկեղծորեն աղոթել մեզանից թույլ, տկար, ծեր և ֆիզիկական որևէ արատ ունեցող մարդկանց համար, որպեսզի Տերը համբերություն և զորեղ հավատ պարգևի նրանց՝ հաղթահարելու, համբերությամբ կրելու և հասարակության արհամարհական վերաբերմունքը հանդուրժելու համար: Ի վերջո, մտածենք նաև Աստծու արդար զայրույթի մասին, այնպես, որ շատ հնարավոր է, որ մենք հայտնվենք ավելի վատ վիճակում, քան նրանք, որոնց ծաղրում ու արհամարհում ենք:

Գնահատենք այն, ինչ որ Աստված մեզ պարգևել է: Եթե ֆիզիկական որևէ արատ կամ թերություն չունենք, հրաշալի է, կնշանակի ունենք առողջություն և գեղեցկություն, ուրեմն գոհանանք և խնդրենք, որ Աստված օգնի մեզ ունենալու նաև առողջ ու գեղեցիկ հոգի՝ մեր նմանին հարգելու, նրա մեջ Տիրոջ պատկերը և նմանությունը տեսնելու համար: Որքան տկար, ֆիզիկապես թույլ, հաշմանդամ և ծեր մարդիկ կան, որոնք կարոտ են մեր օգնության, մեր քաղցր ժպիտին, ջերմ վերաբերմունքին, սիրույն ու հարգանքին:

«Ինչո՞ւ քո եղբոր աչքի միջի շյուղը տեսնում ես, իսկ քո աչքի միջի գերանը չես նշմարում… Կեղծավոր, նախ քո աչքից գերանը հանիր և ապա լավ կտեսնես՝ քո եղբոր աչքից շյուղը հանելու համար» (Ղուկ. 6:41-42):

Եթե իրապես ճշմարիտ հավատ ունենք, անկարելի է, որ որևէ մեկին կարողանանք ծաղրել ու արհամարհել:

Գուցե նրանք հոգով շատ ավելի լավ ու բարի են, ազնիվ, քան՝ մենք, որ մեզ անթերի ու կատարյալ ենք կարծում: Ուրեմն Քրիստոսով իբրև քույրեր և եղբայրներ չփորձենք առանց այն էլ մեր դժվարին կյանքը ավելի բարդացնել ու մեր բացասական վերաբերմունքի պատճառով նրանց հեռացնել մեզանից, այլ՝ ընդհակառակը, գրկաբաց ընդունենք, քանի որ Աստված սեր է: Սիրենք միմյանց, ինչպես Աստված սիրեց մեզ: Հիշենք, որ Դատաստանի օրը մեր յուրաքանչյուր արարքի համար պատասխան պիտի տանք, իսկ եթե բարի գործ ենք արել, դրա դիմաց հարյուրապատիկ պիտի վարձատրվենք երկնքում: Մտածենք այս մասին և բարի գործերով իմաստավորենք մեր կյանքի յուրաքանչյուր օրը, մեզ բարձր չդասենք մյուսներից, այլ՝ գութ և ողորմություն ունենանք մեկս մյուսի նկատմամբ, որպեսզի ողորմած Աստված գթա և ողորմի մեզ: Բարությամբ, ներողամտությամբ, սիրով և խոնարհությամբ նմանվենք Արարչին:

Պետրոս Առաքյալն ասում է. «Խոնարհվեցեք ուրեմն աստծու հզոր ձեռքի տակ, որպեսզի Նա ձեզ բարձրացնի ժամանակին» (Ա. Պետրոս 5:6): Ամեն:

ԳԵՐԳԵՍԱՑԻ ԴԻՎԱՀԱՐԸ

«Պիղծ ոգի, դո՛ւրս ելիր այդ մարդուց» (Մարկ. 5:1-20)

Այս պատմությունը դուք կարող եք կարդալ Մարկոս Ավետարանչի 5–րդ գլխի 1-20 համարներում, ուր Հիսուս բուժում է Գերգեսացի դիվահարին:

«Եվ Հիսուս եկավ ծովի հանդիպակաց կողմը, գերգեսացիների երկիրը… գերեզմաններից նրա դեմն ելավ մի մարդ, որին բռնել էր մի պիղծ ոգի, որի բնակության տեղն իսկ գերեզմանների մեջ էր: Եվ ոչ ոք նրան շղթաներով անգամ չէր կարող կապել, որովհետև շատ անգամ ոտնակապերով և շղթաներով կապված էր, բայց շղթաները փշրել էր ու ոտնակապերը՝ ջարդել: Ոչ ոք նրան չէր կարողանում զսպել, որովհետև միշտ, գիշեր ու ցերեկ գերեզմաններում և լեռներում, աղաղակում էր և ինքն իրեն քարերով ծեծում: Երբ նա Հիսուսին հեռվից տեսավ, առաջ վազեց ու երկրպագեց նրան. բարձրաձայն աղաղակեց և ասաց. «Ի՞նչ ես ուզում ինձնից, Հիսո՛ւս, բարձրյալ Աստծո՛ւ Որդի: Երդվեցնում եմ քեզ Աստուծով, ինձ մի՛ տանջիր», քանի որ Հիսուս նրան ասում էր. «Պի՛ղծ ոգի, դո՛ւրս ելիր այդ մարդուց»: Այնուհետև դևերը խնդրում են Հիսուսին, որ իրենց դուրս հանելուց հետո այնպես անի, որ իրենք մտնեն անցնող խոզերի մեջ, որոնք երկու հազարից ավելի էին: Այդպես է լինում է. խոզերը դիվոտելով, գժվելով թափվում են ծովը ու կործանվում: Խոզարածները այս մասին սարսափահար պատմում են գերգեսացիներին, որոնք գալով Հիսուսի մոտ տեսնում են դիվահարին բուժված և գեղեցիկ հագնված նստած Նրա մոտ, ավելի են վախենում ու խնդրում են, որ Հիսուս հեռանա իրենց սահմաններից» (Մարկ. 5:1-20):

Երբ քննում ենք այս դիվահարի վիճակը, տեսնում ենք, որ շատ բաներում մենք՝ քրիստոնյաներս, նմանվում ենք նրան: Այս խոսքերիցս շատերը վստահ եմ կդժգոհեն, նույնիսկ կարող են զարմանալ, սակայն հիշենք այս ասացվածքը. *«Ամեն բան քննե՛ք և բարին ամուր բռնեք»,* մենք էլ փորձենք քննել, համեմատություններ անցկացնել այս դիվահարի ու մարմնավոր, այսինքն՝ հոգևոր կյանքից թուլացած, տկարացած քրիստոնյաներիս միջև: Եվ քանի որ մարդասպանությունն ու եղբոր վրա զուր տեղը բարկանալը նույնն են Աստծու մոտ, շնությունն ու ուղղակի ցանկությամբ կնոջը նայելը միևնույն մեղքերն են, ապա շատ բաներ, որոնք տեսնում ենք գերգեսացու մեջ, կարող ենք տեսնել և մեր՝ քրիստոնյաներիս մեջ: Իհարկե, մարդկային տեսանկյունից դրանք անհամեմատելի են, բայց Սուրբ Գիրքն ասում է, *«Աչքի տեսածով մի՛ դատեք»:*

Ուրեմն սկսենք:

ա. Նախ գերգեսացու ապրած տեղը գերեզմանն էր և ամեն անգամ նա դիվոտելով շղթաները պոկում ու փախչում էր: Սուրբ Գիրքն ասում է. *«Թող աշխարհը ձեզ համար խաչը եղած լինի, իսկ դուք էլ՝ աշխարհի»:* Բայց շատ հաճախ մենք մեզ ավելիով տեսնում ենք աշխարհում և կարծես այս պատվիրանը այն շղթան է, որով կապված էր գերգեսացին, որը և կապում է մեզ: Բայց ամեն կերպ պոկում ենք այն և փախչում դեպի աշխարհ, այսինքն՝ գերեզման: Հոգեվոր կյանքում աշխարհը գերեզմանն է, որտեղ թաղված պիտի լինի հին մարդն իր կրքերով հանդերձ: Բայց եթե մեկն ասի, թե մենք աշխարհում չենք և այն չենք սիրում, ապա թող քննի իր անձը, թե օրը քանի՞ ժամ է նստում հեռուստացույցի կամ համակարգիչի (internet)-ի առջև, քանի ժամ՝ թերթեր ու ամսագրեր է կարդում, որքան՝ քաղաքականության շուրջն է զրուցում և ամենակարևորը՝ թե միտքը օրվա մեջ ինչքան ժա-

մանակ է ցնորական պտույտներ գործում աշխարհային՝ մարմնավոր ոլորտներում ու ինչքան աստվածայինի մասին մտածում:

Չէ որ պատվիրանն ասում է. *«Ամբողջ մտքով, հոգով, սրտով և ամբողջ էությամբ սիրիր քո Տեր Աստծուն»:* Եվ եթե անկեղծորեն քննենք ինքներս մեզ ու տեսնենք, որ շատ բաներում իսկապես մենք ավելի աշխարհն ենք սիրում, այսինքն՝ մահն ու գերեզմանը, ապա կսարսափենք, քանի որ *«Աշխարհի հանդեպ սերը թշնամություն է Աստծու դեմ»:* Հիսուս ասաց. *«Ես իսկ եմ Հարություն և Կյանք, ով հավատում է ինձ, թեպետ և մեռնի, կապրի. և ով կենդանի է ու ինձ հավատում է, հավիտյան չի մեռնի» (Հովհ. 11:25-27):*

Ուրեմն չփախչենք կյանքից դեպի մահ, այլ խնդրենք, որ Տիրոջ շնորհը մեզ բժշկի աշխարհսիրությունից: Փորձենք նմանվել Նրան, այլ ոչ թե գիշեր ու ցերեկ գերեզմաններում անցկացնենք դիվահարի պես, քանի որ գրված է՝ *«Ով սիրում է իր անձը, կկորց-նի այն, իսկ ով այս աշխարհում իր անձն ատում է, այն կպահի հավիտենական կյանքի համար» (Հովհ. 12:25):*

բ. Կարդում ենք նաև, որ դիվահարը լեռներում աղաղակում էր: Շատերս էլ կարծես նույն բանն ենք անում սիրով ու ձգտում ենք բարձր տեղերի, առաջին աթոռների՝ փառավորվելով մարդկանցից և քայլելով հպարտության բարձունքներում, այնինչ Սուրբ Գրքում ասվում է. *«Աստված դեմ է հպարտներին»: «Ով որ բարձրացնում է իր անձը, կխոնարհվի, և ով որ խոնարհեցնում է իր անձը, կբարձրացվի» (Ղուկ. 18:14):* Եվ այդ բարձր տեղերում որքան էլ խոսակցությունը հավատի շուրջ լինի, որքան էլ քարոզները գիտական մեծ բովանդակություն ունենան, դրանք կնկատվեն որպես հպարտության լեռից հնչող աղաղակ և ուրիշ ոչինչ:

Շատ անգամ տեսնում ենք, որ քրիստոնյաներիս մեջ, երբ միասին ենք, ավելի շատ խոսում ենք աշխարհի մասին, մեկ էլ տեսար մեզանից մեկն ընկնում է բարկության մոլուցքի մեջ ու սկսում բարձր-բարձր աղաղակել, մյուսը՝ մի զվարճալի բան է պատմում և դրանից բնականորեն առաջանում է անզուսպ ծիծաղ ու հռհռոց և այս բոլորը ոչ այլ ինչ է, եթե ոչ գերգեսացու աղաղակը: Եթե նման բան նկատենք մեր մեջ. հեռվում աղանդավորների մեջ չփնտրենք *«գառան մորթով գայլերի»,* այլ այդ տեսնենք մեր մեջ, քանի որ անարժանաբար Տիրոջ սուրբ անունն ենք վերցրել մեր վրա ու շատերին երևում ենք որպես լույսի որդիներ, բայց իրականում մենք ավելի նման ենք *հպարտության, փառամոլության, ինքնավրդովության և մեծամտության* լեռներից աղաղակող գերգեսացի դիվահարին: Եվ ինչպես ասում է Սուրբ Գրիգոր Նարեկացին. *«Կռապաշտ է նա, որ ծածկված քողով ձևացնում է իրեն բարեպաշտ, բայց կատարում է Արարչի համար անախորժ գործեր»:*

Ուրեմն, եթե սա էլ նկատենք մեր մեջ, անհոգ չլինենք, այլ Եզեկիա թագավորի պես լաց լինենք Տիրոջ առջև, Նրանից ապաշխարության ժամանակ խնդրենք, փորձենք իջնել խոնարհության ձորը, որպեսզի Տերը մեզ բարձրացնի Իր սուրբ լեռը:

գ. Եվ ապա կարդում ենք, որ դիվահարը ինքն իրեն քարերով ծեծում էր: Այստեղ էլ բազում նմանություններ կգտնենք մարմնավոր ընթացքով քայլող քրիստոնյաների և նրա միջև: Փորձենք տեսնել, թե մենք ինչպիսի՞ քարերով ենք միշտ ծեծում մեր հոգին ու մեր անձը: Շատ հաճախ տեսնում ենք քրիստոնյա մեկին՝ բարկության մեջ: Այնքան կարևոր չէ պատճառը, քանի որ բարկությունը մահացու մեղք է, և մենք կարծես վերցնելով բարկության քարը՝ դրանով ինքներս մեզ ենք ծեծում՝ ավերելով մեր հոգևոր կյանքը: Մոռանում ենք

այս խոսքը. *«Բարկացեք, բայց մի՛ մեղանչեք»:* Երբեմն վերցնում ենք նախանձի քարը և դրանով ծեծում՝ ինքներս մեզ: Ում որ նախանձում ենք, դրանից նա չի տուժում, բայց նախանձողի համար գրված է, թե՝ *«Նախանձը ոսկորների փտություն է բերում»:* Ահա թե ինչու, մեր հոգիները անդամալույծ են դառնում հոգևոր փտախտից:

Երբեմն վարպետորեն օգտագործելով ծիծաղկոտության և կատակասիրության քարերը, ջախջախում ենք մեր մեջ այն երանելի զղջման հոգոցներն ու արցունքները, որոնք թե յուղ են մեր լապտերների համար և թե պատճառ՝ մեղքերի թողության: Քանի որ, թե Պետրոսը և թե Եզեկիան ապրեցին արտասուքների պատճառով, նաև ասվում է, թե՝ *«Եթե զղջաս և հոգոց հանես, այնժամ կապրես»:*

Ու այս մատենաշարում կտեսնենք, թե ուրիշ քանի քանի տեսակ քարերով գիշեր ու զոր ծեծում ենք ինքներս մեզ և զարմանում, թե ինչո՞ւ չի գործում Աստծու զորությունը մեր մեջ, ինչո՞ւ չկա սեր, խոնարհություն, հավատ ու հույս: Ուրեմն, դադարենք դիվահարին կրկնօրինակելուց, դեն նետենք այս հոգեսպան քարերը, որպեսզի բժշկություն գտնենք Տիրոջից և սրանից հետո կարողանանք գիտակցել, թե՝ ո՞րն է բարին և ո՞րն է չարը, քանի որ գրված է. «*Վայ նրան, ով չարին բարի կասի և բարուն՝ չար»:* Եվ երբ Հիսուս հարցրեց գերգեսացուն, թե անունն ի՞նչ է, սա պատասխանելով ասաց, թե՝ Լեգեոն, քանի որ շատ էին:

դ. Մեր մեջ էլ, ճիշտ է, ոչ դևերի, բայց կրքերի բազում լեգեոններ կան, *հարստության, շատակերության, ագահության, աշխարհիսիրության, դատարկաբանության, հարստության* և դեռ բազում այլ կրքերի: Սրանցից ազատվելու համար, նախ պիտի գիտակցենք, որ դրանք չար ու մահաբեր բաներ են և մեծ արգելքներ՝ երկնքի արքայության ճանապարհին: Բոլոր սուրբ հայրերի նպա-

տակը մեկն էր՝ հասնել անկիրք երկիրը, այսինքն՝ ըստ Պողոս Առաքյալի՝ *«Հին մարդը կրքերով հանդերձ խաչը հանել»*:

ե. Իսկ ի՞նչ են խոզերը, եթե ոչ առարկաները, որոնց հանդեպ հետաքրքրություն է առաջանում մեր մեջ. դրանք կարող են լինել հագուստ կամ կերակուր, պաշտոն կամ գեղեցիկ կերպարանք, գրքեր կամ ինչ-որ հավաքածու, հեռուստացույց և թե աշխարհային բազում բաներ:

զ. Բայց մենք պարտավոր ենք անտարբեր լինել այս բոլորի հանդեպ. որպեսզի պանդխտության օրերը այս անցավոր կյանքում կարողանանք հասցնել հաղթական ավարտին ու հասնել բուն հայրենիքը՝ «Ի Վերին Երուսաղեմ»: Մեր անելիքը սա է՝ *<u>փնտրենք, որպեսզի գտնենք, ծեծենք, որպեսզի բացվի, և խնդրենք, որպեսզի տրվի:</u>* Իսկ եթե հույսդ դրել ես Աստծու ողորմության վրա և անհոգ ես կրքերիդ հանդեպ, ապա քեզ օրինակ թող լինի գերգեսացիների դասը, որոնք Տիրոջը իրենց երկրից դուրս հանեցին: Ուրեմն մենք մեր գործերով Տիրոջը մեր սրտերից չհանենք: Իսկ եթե Աստված տեսնի մեր, թեկուզ, թույլ և տկար փորձերը, ապա Նա էլ Իր ողորմությամբ ու մարդասիրությամբ կմիջամտի և կօգնի մեզ մաքրվել ու սրբվել մեր կրքերից և ցանկություններից, որոնք մեղք են ծնում, իսկ սա էլ իր հերթին՝ մահ:

Եվ երբ Տիրոջ ողորմությամբ կմաքրվենք և կբժշկվենք, այն ժամանակ կարող ենք հանգիստ նստել Տիրոջ ոտքերի մոտ՝ բժշկված գերգեսացու պես: Ու այն ժամանակ, ինչպես գերգեսացիները տեսնելով բժշկված դիվահարին՝ վախեցան, մենք էլ կդառնանք ահ ու սարսափ դևերի համար, որովհետև նրանք մեր դեմ են դուրս գալիս մեր կրքերի պատճառով, իսկ, երբ ազատվում ենք՝ նրանց զորությունը թուլանում է:

Հանգիստ քնելու և հոգեպես խաղաղվելու համար օգտագործենք այս դեղը.

«Մի բժիշկ հարցնում է ծերունիներից մեկին. «Բոլոր հոգևոր ցավերի դեղերը գիտե՞ս, ո՞վ հայր»: Ծերը պատասխանում է. «Շատ բան գիտեմ, եթե լսես: «Վերցրու ապաշխարության շաքարը, եղբայրսիրության ծաղիկը, աղքատսիրության տերևը, խոնարհության պտուղը և լցրու ողորմության աղամանի մեջ ու աղա այն՝ ծնրադրելով: Այնուհետև քամի՛ր նեղության սրբիչով և արտասվախառն խմի՛ր ամբողջ գիշերվա ընթացքում: Սա է բոլոր ցավերի դեղը, որ ոչ միայն ներքին մարդուն է բժշկում, այլև արտաքինն է բուժում, նորոգում ու մաքրում» (Հարանց վարք, Խրատանի 1 էջ 30):

Իրապես այս բժշկված վիճակում է միայն, որ կարող ենք լսել Տիրոջ ձայնը և նույնիսկ պատճառ դառնալ շատ մարդկանց փրկության: Ինչպես որ Տերը ասաց բժշկված գերգեսացուն, *«Գնա քո տունը հարազատներիդ մոտ և պատմի՛ր նրանց այն ամենը, ինչ Տերը արեց և թե ինչպես խղճաց քեզ» (Մարկ. 5:1-19):* Նա էլ գնաց և սկսեց Դեկապոլիսի մեջ պատմել, ինչ որ Հիսուս իրեն արեց: Բոլորը զարմանում էին:

Ուրեմն, մեր հավատով ու վկայություններով չնմանվենք աղաղակող գերգեսացուն, այլ մեր կյանքի ճշմարիտ փոփոխությամբ քարոզենք Երկնքի Արքայությունը՝ Աստծու փառքի համար: Ամեն:

ՀԻՆ ՈՒ ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ

«Ձքոյս ի քոյոց, քեզ մատուցանեմք»,
«Չէ՞ որ քոնն է ամեն ինչ, և քեզնից ստացածն է,
որ տալիս ենք քեզ» (Ա· Մնաց. 29:14) և
Պատարագամատույց

Գոյապահպանման ու գոյատևման հրամայականն է՝ հին և նոր սերունդի սկզբունքային ներդաշնակությունն ու համաձայնությունը:

Բնական է ակնկալել, որ ուսյալ ու զարգացած երիտասարդները իրենց նյութական և բարոյական ներդրումները կատարեն մեր ազգային եւ եկեղեցական կյանքում: Սա նրանց համար որքան իրավունք, նույնքան էլ պարտավորություն է:

Հայ ժողովուրդը ներկայիս կարիքն ունի մարդկանց, որոնք ավելի շահագրգռված են վսեմ գաղափարներով և արժեքներով, քան՝ գիտությամբ, մարդկանց, որոնք ոչ միայն հետամուտ են իրենց մտային հորիզոնները ընդարձակելու, այլև պատրաստակամությունը ունեն ազնվացնելու ու զարգացնելու իրենց սրտերը. Հավատալու իրենց առաքելությանը, մարդկանց, որոնք իրենց անձը զոհելով, իրենց «ես»-ը մի կողմ թողնելով, վճռականությունը ունենան հասկացողության նոր ճանապարհներ բացելու մեր հայրենիքի ու ժողովրդի կյանքից ներս:

Երիտասարդները պետք է լավ հասկանան ինքնավստահության և ինքնահավանության տարբերությունը. այսինքն՝ ինքնավստահությունը որքան որ օգտակար է, սակայն ինքնահավանությունը՝ հպարտությունը, (գոռոզությունը), նույնքան վնասակար է:

Մեր ժողովուրդը իրավունքը ունի ակնկալելու իր ներկա ուսյալ և ապագա պատասխանատու ու իրավասու սերունդներից, պատրաստ լինելու՝ իրենք իրենց զինելու գիտության և մշակույթի լավագույն զենքերով, բարոյական ու հոգևոր բարձր և վսեմ սկզբունքներով, որպեսզի կարողանան պահել, պահպանել և հետագայում փոխանցել մեր նոր սերունդներին մշակութային ու հոգևոր մեր հարուստ ժառանգությունը;

Անփույթ, անհոգ ու անտարբեր վերաբերմունքը թե՛ քրիստոնեական, թե՛ ազգային ավանդությունների և թե՛ հոգևոր ժառանգության հանդեպ, ուրիշ բան չի, եթե ոչ «բարոյական անձնասպանություն»:

Պետք է հստակորեն հասկանալի դառնա այն իրողությունը, թե նոր սերունդը հակառակ իր բոլոր թերություններին, եթե այսօր ուշադրության էլ չարժանանա կամ անտեսվի, ապա անկասկած ուզենք թե չուզենք ապագան նրանցն է: Եվ սա՛ է իրականությունը: Հին սերունդը անշուշտ կարիքն ունի երիտասարդության աշխուժության, վարակիչ խանդավառության, աշխատանքի անսպառ կորովի և ջերմեռանդ նվիրումի:

Դրան հակառակ նոր սերունդն էլ իր հերթին պետք ունի հին սերունդի փորձառության և իմաստության, առանց մոռանալու, թե՝ *«ծառը իր արմատո՛վ է միայն ծառ, թե չի կարելի լավ ներկայով ապրել և ապագան կերտել, առանց անցյալի գնահատման»,*- ինչ որ հաճախ կրկնում ենք մեր խոսքերում:

ԿՅԱՆՔԻ ԵՐԳԸ - Հետաքրքիր է.

«Հնդկական մի քաղաքի արվարձաններից մեկում սրնգահարը մեղմ հնչյունների ելևեջներով մի խորը փոսի մոտ նվագում է: Ծանր ռոքի սիրահար մի քանի երիտասարդ զինված երաժշտական գործիքներով հավաքվում են նրա շուրջը: Նրանցից մեկը հարցնում է.

Դու գիտե՞ս, թե ի՞նչ է ռոք երաժշտությունը.

Սրնգահարը չի պատասխանում, այլ շարունակելով նվագել՝ զարմացած հայացքով նայում է նրանց:

Երիտասարդն այս անգամ հեգնանքով ասում է.

Ահա ևս մի մարդ, որ հնամենի երաժիշտ է: Մենք հիմա քեզ կներկայացնենք մոդեռն, կյանք պարգևող երգերը և թե ի՞նչ է ծանր ռոքը, ու դու կհասկանաս, որ ժամանակակից, կյանքից ինչքան ետ ես ընկել:

Ռոքի սիրահարները հպարտորեն սկսում են բարձրաձայն նվագել և երգել: Այդ պահին փոսի միջից ֆշշոց է լսվում, և երկու հսկա կոբրա են դուրս գալիս ու առաջանում դեպի այդ երիտասարդները, որոնք սարսափից քարանում և լռում են:

Սրնգահարն ասում է.

Ինչո՞ւ դադարեցրիք ձեր մոդեռն երգերը, միգուցե այս կոբրաները դրանք գնահատեն, հանդարտվեն ու ձեզ իսկապես կյանք պարգևեն ···»:

Սրնգահարը շարունակում է նվագել և օձերը ետ են քաշվում…» (Հովհաննես Մանուկյան, «Առակներ», Երևան 2012, էջ 45):

Ժողովրդի հին ու նոր սերունդները չպետք է մոռանան, թե քաղաքակրթական, մշակութային և հոգևոր արժեքները ոչ թե մի սերունդի, այլ շատ սերունդների հավաքական ջանքերի ձեռակերտն են: Բացառություն չի նաև մեր ժողովրդի պարագային: Ուստի միացյալ ուժերով, հանրային բոլոր գործոնները ի սպաս դնելով, ինչպես նաև գիտությունն ու իմաստությունը գործածելով, պիտի աշխատենք տեր կանգնել մեր ավանդական հայրաժառանգ արժեքներին:

Այս սրբազան, նվիրական գործն ու առաքելությունը նոր սերունդի ու ամեն անհատի թե՝ առանձնաշնորհումն է և թե՝ պարտավորությունը:

Ամեն ասպարեզում, լինեն դրանք հոգևոր, մշակութային, կրթական, գիտական, մարմնամարզական և այլն, հին սերունդին հարգելով ու գնահատանքի արժանացնելով, երիտասարդները կատարած կլինեն Աստվածային պատվերը. *«Պատվիր հորդ ու մորդ, որպեսզի կյանքիդ օրերը երջանիկ և ուրախ լինեն»*: Երիտասարդները մեծերին պատվելով, ապահոված կլինեն իրենց ապագա հարգանքը, քանի որ պատգամը այս է՝ *«Ձքոյս ի քոյոց, քեզ մատուցանեմք»,* այսինքն՝ «*Քոնը՝ քեզ ենք մատուցում»:* Աստծու աչքերն ու ականջները բաց են, նա լսում է ու տեսնում: Աստված օրհնի հայ ժողովրդի հին ու նոր սերունդներին: Ամեն*:*

ՀՈԳՈՒ ԾԱՐԱՎԸ

«ԵԹԵ ՄԵԿԸ ԾԱՐԱՎ Է« ԹՈՂ ԻՆՁ ՄՈՏ ԳԱ ԵՎ ԽՄԻ...» (Հովհ. 7:37-38):

Հովհաննու Ավետարանի 7-րդ գլխի 37–րդ համարում կարդում ենք.

«Մեծ տոնի օրը Հիսուս կանգնած էր և աղաղակում էր՝ ասելով. «Եթե մեկը ծարավ է, թող ինձ մոտ գա և խմի: Ով ինձ հավատում է,- ինչպես Գիրքն է ասում,- նրա ներսից կենդանի ջրերի գետեր պիտի բխեն»: Նա այս ասում էր Հոգու մասին, որին ընդունելու էին իրեն հավատացողները, քանի որ Հոգին դեռևս չկար, որովհետև Հիսուս դեռ փառավորված չէր» (Հովհ. 7:37-38):

Ինչքան սրտառուչ է այս կոչը նրանց համար, որոնք իսկապես հավատացել են իրենց առաքելությանն ու կոչմանը այս կյանքում: Ինչ կա ավելի գեղեցիկ բան քան Քրիստոսով ծարավը հագեցնելը: Ո՞վ արդյոք չի ապրել մարմնական ծարավի դառնությունը և նրան զուգընթաց՝ նաև հոգևոր ծարավի ահավորությունը:

Աստվածորդին, իբրև կյանքի աղբյուր, հավիտենական ջուր խոստացավ սամարացի կնոջ միջոցով բոլոր Իրեն հավատացողներին ասելով. «*Բայց ով որ խմի այն ջրից, որ ես եմ տալու նրան, հավիտյան չպիտի ծարավի: Իսկ այն ջուրը, որ ես նրան տալու եմ, նրա մեջ կլինի բխող ջրի աղբյուր հավիտենական կյանքի համար» (Հովհ.4:14):*

Քրիստոս Ինքը այն ժայռն է, որից միայն հավիտենական ջուր է բխում:

Մեր Տիրոջ խոստացած ջուրը հավատացյալին մաքրելուց ու սրբելուց հետո, հավիտենականության ժա-

ռանգորդ է դարձնում, այլ խոսքով նրան վերածում է Սուրբ Հոգու Տաճարի:

Նոր Կտակարանում հանդիպում ենք երկու ջրամանների: Ջուրը ոչ թե միայն քրիստոնեական աշխարհի, այլ զանազան կրոնների մեջ ընդունված է որպես բյուրեղացման և մաքրության խորհրդանիշ:

ա. Մատթեոսի Ավետարանում Երուսաղեմի կառավարիչ Պիղատոսը, երբ Հիսուս Նազովրեցու դատն էր տեսնում, մի ջրաման վերցնելով լվաց իր ձեռքերը:

Նա տեսնելով, որ հրեաները ուզում են անպայման անմեղ մարդուն խաչ բարձրացնել, որպեսզի խռովություն չլինի, նրանց ներկայությամբ ձեռքերը լվաց ու ասաց. «*Այդ արդարի արյունից անմասն եմ ես, դո՛ւք գիտեք»:* Իսկ ամբողջ ժողովուրդը պատասխանեց. *«Դրա արյունը մեր վրա և մեր որդիների վրա»: Այն ժամանակ Պիղատոսը նրանց համար արձակեց Բարաբբային և Հիսուսին գանակոծել տալով՝ տվեց նրանց ձեռքը, որ խաչվի» (Մատթ. 27:24-25):*

Պիղատոսը ձեռքերը լվանալով հեշտ ճանապարհը գտավ, այն է՝ հրաժարվել որևէ պատասխանատվություն ստանձնելուց: Հակառակ որ նա տեսավ ու հասկացավ Քրիստոսի անմեղությունը, սակայն ինչ-ինչ քաղաքական պատճառներով չկարողացավ նույնիսկ փրկելու փորձ կատարել:

Ներկա դարում էլ կան մարդիկ, որոնք երբեմն դժվարությունների հանդիպելով կամ ընտանեկան խռովություններ ունենալով, հեշտ ճանապարհ են ընտրում ասելով. *«Մեռնեմ, ազատվեմ ամեն ինչից»*: Ճշմարիտ և քաջ քրիստոնյան պայքարող պիտի լինի իր աղոթքով ու հավատով:

Սաղմոսաց գրքում ասվում է. *«Դեպի քեզ կարկառեցի ձեռքերն իմ. հոգիս հողի պես ծարավի է քեզ: Լսի՛ր ինձ փութով, Տե՛ր, քանզի շունչս պակասեց իմ ներսում, մի՛ շրջիր երեսդ ինձնից. որ չնմանվեմ գերեզման իջնողներին» (Սաղ. 14:6-7):*

Ինչքան ճիշտ և հարազատ է սաղմոսերգուի ընդգծած այս համեմատությունը մարդու վերաբերյալ՝ Աստծու ծարավի և հողի՝ անձրևի ծարավի միջև:

Մարդու ծարավը շատ նման է հողի ծարավին: Ինքն էլ հող է արդեն, որովհետև հողից ստեղծվեց: Բայց մարդը ունի մշտական ծարավը իր Արարչի՝ Աստծու նկատմամբ: Ճիշտ է, որ բոլոր ժամանակներում էլ եղել են մարդիկ, որոնք ցանկացել են մերժել Աստծու ծարավը, Նրա անհրաժեշտությունը, նույնիսկ Նրա գոյությունը, հայտարարելով թե մարդը կարիքը չունի Աստծուն այս աշխարհում երջանիկ ու վայելքով լի մի կյանք ունենալու համար:

«Հոգիս հողի պես ծարավի է քեզ: Լսի՛ր ինձ փութով՝, Տե՛ր մի՛ շրջիր երեսդ ինձնից»,- աղաչում է սաղմոսերգուն: Որովհետև, եթե երեսդ դարձնես ինձանից, կնմանվեմ նրանց, որոնք գուբ, այսինքն գերեզման պիտի իջնեն ու հող դառնան: Ընդհակառակը երեսդ դեպի ինձ դարձրու, այն ժամանակ կնմանվեմ արևի բացված կենսահորդ ու կենսախայտ ծաղիկին; Ահա թե ինչքան խորն է մարդու հոգու, զգացումի ու գիտակցության մեջ Աստծու ծարավն ու պահանջը: Աստված միանգամայն արև՝ է, անձրև՝ է, կենսահյո՛ւթ է մարդու համար: Ահա թե ինչո՛ւ մարդը Նրա անհագ ծարավը ունի:

Այսօր 21–րդ դարում ավելի քան երբեք մարդկությունը պետք ունի Կենաց Ջրին, հագեցնելու համար ծարավ հոգիները, որովհետև մարդիկ չարացած և մոլեգնած վիճակ ունեն իրենց անձնական ու ընկերային կյանքում:

Ամբողջ աշխարհը լցված է Պիղատոսներով, որոնք հազար ու մի տեսակ անարդարություններ կատարելով, նրա նման անմեղ ձևանալով իրենց ձեռքերը լվանում են պատասխանատվություն չստանձնելու համար: Չկա մի օր, որ չկարդանք կամ չտեսնենք ահռելի ոճրագործություններ, սպանություններ և զարհուրելի արարքներ: Նույնիսկ հավատացյալ ժողովուրդը շվարած ու շփոթված վիճակ ունի, թե՝ *«Ի՞նչ է լինելու այսքան անարդարության ու չարության վերջը: Ո՞վ պիտի պատասխան տա այսքան դժբախտությունների, ցեղասպանությունների և ոճրագործությունների համար ու չգիտի այլևս ո՞ւմ դիմի»: «Ո՞րն է այս բոլորի բանալին, ո՞վ կարող է հանգստացնել ու խաղաղեցնել աշխարհի մարդկությանը»:*

Պատասխանը մեկ է. մեր Տերը՝ Հիսուս Քրիստոս. *«Ես եմ ճանապարհը, ճշմարտությունը և կյանքը: Ոչ ոք չի գա Հոր մոտ, եթե ոչ՝ ինձանով» (Հովհ 14:6)*: Եկեղեցին է, որ մեր Տիրոջ միջոցով խաղաղության միակ նավահանգիստը կարող է դառնալ փոթորկալից ծովի դիմաց. *«Խաղաղություն եմ թողնում ձեզ, իմ խաղաղությունն եմ տալիս ձեզ…» (Հովհ. 14:27)*: Որքան կարևոր է այս խաղաղությունը ամբողջ աշխարհի համար:

«Հայ ժողովուրդը դարերի ընթացքին եղավ միշտ Աստծու ծարավի ժողովուրդ: Հաճախ մահվան չափ ճնշվեց ու բռնադատվեց իր հավատի համար, հաճախ էլ զլացվեց իրեն իր ուզած ձևով և չափով Աստծու ծարավը հագեցնելու ազատությունը: Բայց ո՛չ մի ուժ չկարողացավ հանգցնել նրա մեջ Աստծու ծարավի կրակը: Տեր, ծաղրի, արհամարհանքի, նախատինքի մշտնջենական առարկա մի՛ թող մեզ և մի՛ թույլ տուր, որ մեր իրավունքը, մեր հայրենական ժառանգությունը, հափշտակիչների սեփականությունը դառնա, մի՛ թույլ տուր, որ մեր ունեցվածքը վերստին ու վերստին մեր ձեռքից հափշտակվի բռնաբար, դավադրաբար, վայրենաբար: Ողորմությանդ և գթու-

թյանդ լույսը ի վերջո ծագեցրո՛ւ մեր վրա, Տեր, չբավարարող շնորհքո՛վդ շրջապատիր մեզ ու Քեզանո՛վ լիացրու, կշտացրու, ինչպես քաղցրատեղերը առատ անձրևով ես կշտացնում և վերակենդանացնում ծարաված, անապատականացած հողերը: Տեր, ծարավի ենք Քեզ, ջուր եղի՛ր մեզ»,- (Մեր հոգևորականներից մեկը խոսել է Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարում՝ Միջինքին 1 Մարտ, 1990թ·ին): …

ՋՈՒՐԸ

«Գանձ որոնող մի մարդ, որ մեծ ադամանդ էր գտել. թափառում էր անապատում և բարձրաձայն ասում.

Վերջապես իրականացավ իմ երազանքը, գտա այս թանկարժեք քարը, սակայն Աստված իմ, ջուր եմ ուզում, խմելու ջուր:

Մի արաբ մոտենում է ու սառնորակ ջրով լի մեծ թաս է պարզում այդ մարդուն և ասում.

Քարավանով այս կողմերով անցնում էինք: Հեռվից լսեցի ձայնդ: Ահա վերցրու խմիր:

Գանձախույզը ջրի մի մասն ագահորեն խմում է, իսկ մյուս մասը թափում արևի ճառագայթներից շիկացած ավազի վրա և ասում.

Աստծուց ջուր էի խնդրել, բայց ոչ այսքան շատ: Ես երազում եմ, որ Նա ինձ ավելի շատ ոսկի, ադամանդ տա:

Արաբը, շվարած այդ տեսարանից, վերցնում է իր դատարկ թասը և հեռանում:

Որոշ ժամանակ անց գանձ որոնող մարդը զգում է, որ նորից սաստիկ ծարավ է և աղերսում է.

Աստվա՜ծ իմ, մեծ սխալ գործեցի, արաբի բերած ջուրը թափեցի… ու Քո օգնությունը իմ նյութական ցանկությունների պատճառով չգնահատեցի: Խնդրում եմ, այս անգամ էլ օգնիր:

Հեռվում նկատում է մի քարավան: Ուրախությամբ շտապում է այդ կողմը, տեսնում զինված մարդիկ և իրեն ջուր բերող արաբին ու ասում.

Եղբա՛յր, խնդրում եմ կրկին խմելու ջուր տուր, այլապես այս անապատում ծարավից կմեռնեմ:

Արաբը պատասխանում է.

Այս կողմերում ջուրն ավելի թանկ է, քան ամեն մի թանկարժեք քար կամ ոսկի: Այս անգամ վճարիր ջրի փոխարեն:

Գանձախույզը գրպանից ստիպված հանում է իր գտած ադամանդը և փոխանակում մեկ բաժակ ջրի հետ» (Հովհաննես Մանուկյան, «Առակներ» Երևան, էջ 88):

Սովորական ջուր խմելով՝ մենք նորից պիտի ծարավենք, սակայն Աստծու տված ջրից խմելով՝ երբեք չպիտի ծարավենք: *«Իսկ ո՞րն է այդ ջուրը»*: Շատ պարզ ու հստակ է: Աստծու բերանից դուրս եկած յուրաքանչյուր խոսքը:

Այսօր, մեր Տերը պատրաստ է և ուզում է Իր կենդանի ջուրը մեզ տալ, միայն թե մենք չար ու անարդար սրտով, մեղքերով ու պղծությամբ, հպարտությամբ և մարդկային բոլոր մոլություններով ուժը ունենանք Տիրոջ առաջ խոստովանվելու և մեղքերի թողություն ու ներում ստանալով, հագեցնելու մեր հոգու ծարավը:…

Գիտության և ճշմարտության իմացումը մարդու կյանքի գլխավոր նպատակակետն է եղել շարունակ: Ուսանողը իր աշակերտական գրասեղանից սկսած գիտության ծարավով է ապրում իր կյանքը, գիտնականը ինչքան որ հմտանում է իր ասպարեզում, դեռևս պահանջը ունի ավելիին: Իր ծարավը հագեցնել փորձող մարդն է, որ կարող է բարձունքներ նվաճել: Վա՛յ այն մարդուն, որ կարծում է թե իր ծարավը հագեցրել է:

Ամեն մեկս իբրև հավատացյալներ, մեր կյանքում հրավիրվում ենք լվացվելու: Երկու ճանապարհ կա, որից միայն մեկը կարող ենք ընտրել. ծառայելու պատասխանատվություն ստանձնել կամ անտարբերության մեջ կորըստյան մատնվել: *«Ով ծարավ հոգիներ, եկեք՝ Կենաց Ջրից խմեցեք»:* Այդ Կենաց Ջուրը Ինքը մեր Տերն է՝ Հիսուս Քրիստոս: Մոտեցեք և ձեր կենդանի կյանքով խմեցեք Նրա հավատի Ջրից ու անմահացեք և ձեր գանձերը հաստատեք Նրա վրա՝ բարի գործեր կատարելով ու արդար և մաքուր կյանք ունենալով: Ամեն:

Ի՞ՆՉ Է ՕՐԵՆՔԸ

«Եվ ուրեմն հեթանոսները, որ օրենք չունեն, բնականորեն են օրենքի գործերը կատարում, նրանք, օրենք չունենալով, իրենք իրենց համար իսկ օրենք են» (Հռոմ. 2:14-15):

«Ի՞նչ է օրենքը, ե՞րբ եւ ո՞ւմ կողմից սկսվեց, արդյոք օրենքի կարիքը կա՞, թե՝ ոչ, մարդկային և աստվածային օրենքների տարբերությունն ի՞նչ են»:

Այս հարցերը իբրև մարդ մենք ակամայից տալիս ենք մեզ և մեր կյանքի ընթացքում փորձում ենք գտնել համապատասխան պատասխանները:

Սկսենք աշխարհի սկզբից: Աստվածաշնչում կարդում ենք, որ Աստված ստեղծեց աշխարհը հինգ օրում և ապա վեցերորդ օրը՝ մարդուն, Իր պատկերի համաձայն: Հակառակ որ Աստված առաջին մարդուն իշխան կարգեց աշխարհի բոլոր բարիքների վրա, սակայն նրան արգելեց օգտվել պարտեզում գտնվող մի ծառից: Պարտեզում հազարավոր պտղատու ծառեր կային, բայց Աստված հատուկ արգելեց մարդուն չուտել այդ մեկ հատիկ ծառից: Ինչո՞ւ: Արդյոք Աստված վստահ չէ՞ր մարդու հավատարմության վրա կամ նրան փորձե՞լ էր ուզում»: Ո'չ, Աստված մարդուն փորձել չէր ուզում, այլ նրա առջև դնում էր հարգել ու կատարել իրեն ստեղծողի կողմից դրված օրենքը: Ծառը մի տեսակ պատրվակ էր, առիթ էր մարդուն հասկացնելու համար, որ ինքը Աստված չէ, որ նրա գործողությունները անսահման չեն, այլ մարդը Աստծուց մի աստիճան ցածր է կանգնած: Հակառակ Նրա այդ մեծագույն վստահության, մարդը խախտեց Աստծու դրած առաջին արգելիչ օրենքը ու պատժվեց դուրս վտարվելով դրախտային կյանքից:

Ծննդոց Գրքում հետաքրքիր մի երկխոսություն կա Աստծու և Ադամի միջև, ուր նա արդարանալով փորձում է իր կատարած մեղքը գցել Եվայի՝ իր կնոջ վրա. *«Տեր Աստված կանչեց Ադամին ու ասաց. «Ո՞ւր ես»: Ադամը պատասխանեց. «Լսեցի քո ձայնն այստեղ դրախտում, ամաչեցի, որովհետև մերկ էի, և թաքնվեցի»: Աստված նրան ասաց. «Ո՞վ հայտնեց քեզ, թե մերկ ես: արդյոք կերա՞ր այն ծառի պտղից, որից պատվիրել էի որ չուտես»: Ադամն ասաց,. «Այս կինը, որ տվեցիր ինձ, նա՛ տվեց ինձ ծառի պտղից, և ես կերա»: Տեր Աստված ասաց կնոջը. «Այդ ի՞նչ ես արել»: Կինն ասաց. «Օձը խաբեց, և ես կերա» (Ծննդոց 3:9-13):* Այս խոսակցությունից պարզ է դառնում, որ Աստված իրոք նրանց արգիլել էր օգտվել այդ ծառի պտղից: Ուրեմն առաջին օրենքը ստեղծվեց Աստծու կողմից: Այսպիսով առաջին մարդու՝ Ադամի ու Եվայի մեղանչելու պատճառով մեղք գործելը շարունակվեց և մի տեսակ բաց տարաձություն առաջացաւ Աստծու ու մարդու միջև: Ադամի որդիներից մեկը՝ Կայենը նախանձից իր եղբորը՝ Աբելին սպանեց:

Մեղքի, հանցանքի հետևանքները անդրադարձել են ոչ միայն անհատ մարդու, այլ նաև ընդհանուր՝ հասարակական կյանքի վրա:

Երանելի Օգոստինոս Հայրապետն ասում է, որ առաջին մարդու՝ Ադամի և Եվայի կողմից Աստծու պատվիրանների խախտումը իր մեջ պարունակում էր բոլոր հանցանքները:

ա. Հպարտություն, որովհետև մարդը ցանկացավ Աստծուց առանձնանալ, այսինքն՝ ինքն իր մեջ երևալ:

բ. Սրբապղծություն, քանի որ նա խախտեց հավատարմությունը Աստծու նկատմամբ:

գ. Սպանություն: Աստծու պատվերը չկատարելով մարդը անմահության փոխարեն մահը ժառանգեց, այսինքն՝ ինքն իրեն մահվան դատապարտեց:

դ. Հոգևոր անառակություն, նույնիսկ կարելի է ասել՝ դավաճանություն, որովհետև օձից խաբվելով և նրա հետ համագործակցելով մարդը կորցրեց իր հոգու մաքրությունն ու ակամա հեռացավ իրեն ստեղծողից:

ե. Գողություն և շահամոլություն: Այսինքն մարդը ուզեց գողանալ Աստծու իրավունքները Նրան հավասարվել ուզելով, հետապնդելով իր շահը և մտածելով իր անձի մասին:

Այսպիսով մեղքը չարի կերպարանքով մտավ մարդու մեջ;

Հարց է առաջանում, թե՝ *«Այս մեղսալից աշխարհում, ինչպե՞ս և ի՞նչ ձևով կարելի է պայքարել չարի դեմ»:*

Դրա պատասխանը արդեն իսկ տալիս է Աստված, մեզ ցույց տալով օրենքի ճանապարհը. այսինքն՝ օրենքը օգտագործենք իբրև զենք չարի դեմ պայքարում:

Մինչև Հիսուսի գալուստը, Աստված մի անգամ ևս օրենքներ տվեց Մովսես մարգարեին Սինա լեռան վրա հրեա ժողովրդի միջոցով ամբողջ մարդկության համար: Այդ օրենքները հատնի են մեզ բոլորիս *«Տասնաբանյա պատվիրաններ»* անունով:

Ինչո՞ւ Աստված այս տասը օրենքները տվեց հրեա ժողովրդին, որ գործադրեն, արդյոք նրանք դրա կարիքը ունե՞ին: Այո', Ադամի և Եվայի նման նրանք էլ էին մեղանչել և սկսել ոսկյա կուռքերին պաշտել, հակառակ որ Աստված նրանց փրկեց գերությունից, Կարմիր ծովով անցկացրեց ազատելով թշնամիների հետապնդումից:

Եթե այսօրվա մտածումով արտահայտվենք, հրեա ժողովուրդը երախտամոռ եղավ իրեն բարիք արած Աստծու նկատմամբ: Աստվածաշունչը վկայում է, թե մինչ Մովսես մարգարեն ստանում էր Աստծու պատվիրանները Սինա լեռան վրա, նրա ժողովուրդը ներքևում ոսկյա արձաններ պատրաստելով սկսել էին նրանց երկրպագել: Ահա ձեզ օրենքի բացակայությունը: Իսկ օրենքը՝ Աստված է:

Ինձ հետ այստեղ մի քանի տարիներ առաջ հետաքրքիր դեպք պատահեց, երբ Հոլիվուդի փողոցներից մեկով թեքվեցի, ոստիկանը ինձ և մի այլ մեքենայի վարորդի կանգնեցրեց: Նրա հետ հարցերը և տուգանքը գրել-վերջացնելուց հետո, նա մոտեցավ ինձ, պահանջեց վարորդական իրավունքս և ապահովագրությունը, մի քանի րոպե ուսումնասիրելուց հետո, վերադարձավ ու ասաց, թե ի՞նչ սխալ եմ թույլ տվել և անակնկալ հարցրեց· *«Դուք հոգևորակա՞ն եք»: Ասացի՝ «Այո»: «Ո՞ր Եկեղեցուն եք ծառայում»: «Հաաստանեայց Առաքելական Եկեղեցուն – ես հայ հոգևորական եմ», պատասխանեցի ու մտածեցի, էս ի՞նչ լավ եղավ հիմա ինձ կների և պատիժ չի տա: «Իբրև հոգևորական Դուք կատարո՞ւմ եք աստվածային օրենքները»,- անակնկալ շարունակելով հարցրեց նա: «Իհարկե»,- զարմացած պատասխանեցի: «Եթե աստվածային օրենքները հարգում եք, որոնք չեք տեսնում, ապա ինչո՞ւ չեք պահում Ամերիկյան օրենքները, որոնք տեսնում եք»:* Ճիշտը եթե ասեմ, ես զարմացած ուշքի չէի գալիս ոստիկանի այս խոսքերից ու պատասխանելու ոչինչ չգտա· լուռ կախեցի գլուխս և ստացա համապատասխան պատիժը: Տեսա՞ք: Ահա այս է օրենքը: Օրենքը բոլորի համար է վերևից ներքև, մեծ և փոքր չկա, պատիժը պիտի լինի հավասարապես: Պետք է հասկանանք ու գիտակցենք, թէ՝ *«Օրենքը մարդու համար է, և ոչ թե մարդը օրենքի համար»:*

Պողոս Առաքյալը Հռոմայեցիներին ուղղած իր նամակում ասում է· *«Եվ ուրեմն հեթանոսները, որ օրենք չունեն, բնականորեն են օրենքի գործերը կատարում, նրանք, օրենք չունենալով, իրենք իրենց համար իսկ օրենք են»* և շարունակելով ասում է· *«Իսկ արդ, դու, որ ուսուցանում ես ընկերոջդ, ինքդ քեզ չես ուսուցանում· քարոզում ես չգողանալ, գողանում ես, ասում ես՝ չշնանալ, շնանում ես· գարշում ես մեհյաններից, տաճարներն ես կողոպտում, օրենքով պարծենում ես՝ օրենքը խախտելով Աստծուն ես անարգում···» (Հռոմ· 2:2-24),* այսինքն՝ մարդկային օրենքները ժամանակավոր են եւ փոփոխական, իսկ աստվածային օրենքները՝ հավիտենական և անփոփոխ: Աստված հենց աշխարհի ստեղծումից մարդուն ցույց տվեց օրենքի ու պատժի

Այստեղ նորից հարց է ծագում· *«Մի՞թե չարն անհաղթահարելի է: Աստված տվե՞լ է մեզ ինչ որ մի զենք նրանից պաշտպանվելու համար»:*

Այո,' Աստված տվել է մեզ մի զենք չարից հեռու մնալու և կամ նրանից պաշտպանվելու համար: Դա մեր խիղճն է, որն աստվածային է:

«Մաքուր խիղճ կարելի է գտնել աղոթքի, իսկ մաքուր աղոթք՝ խղճի միջոցով: Մեկը մյուսի կարիքն ունի բնությամբ: Խիղճը բռնության գիրքն է: Ով նրանում իր կարդացածը գործադրում է, ստանում է Աստծու օգնությունը: Ով չի դիմանում իր խղճի քննությանը, չի դիմանա նաև հանուն Աստծու մարմնավոր չարչարանքին»,- ասում է 5-րդ դարում ապրած Մարկոս ճգնավորը:

Աստված մարդուն կենդանուց տարբերելու համար օժտեց խելքով ու խղճով, որպեսզի նա հնարավորություն ունենա ընտրելու բարին, թե չարը, լավը, թե՝ վատը, այսինքն ազատ կամք տվեց: Խղճով մարդը երբեք ու երբեք չի կարող մարդ սպանել կամ վատություն

ու չարություն անել, ինչ պարագայում էլ որ լինի, որովհետև նրա մեջ Աստծու սերը կա:

Մարդը ինչքան էլ իրեն ուժեղ զգա, առանց Աստծու միջամտության ու Նրա կամքի, ոչինչ չի կարողանա կատարել: Նրանք, որոնք մինչև այսօր փորձել են միայնակ, ինքնուրույն հաղթել չարին ու ազատվել մահվանից, կործանվել են, <u>որովհետև առանց Աստծու՝ չկա փրկություն, առողջություն և չկա ոչ մի հաջողություն:</u>

Պատկերացրեք, որ Ամերիկայի Միացյալ Նահանգներում, ուր ապրում են հարյուրավոր տարբեր ազգի ներկայացուցիչներ, եկած աշխարհի զանազան երկրներից, օրենք չլիներ և մանավանդ այն իր ուժը չունենար, երանի պիտի տայինք այնպիսի երկրների, որտեղ ապրելը դժողքի հավասար է: Վերջերս լսեցի մի ավտովթարի մասին Երևանում: Քույր և եղբայր փողոցը անցնելիս, մի մեքենա չափից ավելի արագությամբ հարվածում է քրոջը և նա վնասվածքներով տեղափոխվում է հիվանդանոց ու մահանում՝ ուշքի չգալով: Պարզվում է, որ վարորդը մի ղեկավարի որդին է, որը մեկ տարի առաջ նմանատիպ մի ավտովթար է ունեցել, վթարի ենթարկելով մեռցրել ուրիշ մի երիտասարդի և անպատիժ մնացել: Իսկ ո՞ւր է օրենքը: Արդյունքը մի նոր սպանություն ու մի նոր զոհ:

Մի դեպք էլ տեղի է ունեցել Լոս Անջելոսում: Տարիքով կին էր: Ես նրան ճանաչում էի: Մայրիկը արգելված տեղով էր անցել փողոցը, արդյունքում մեքենաներից մեկը չտեսնելով հարվածել էր նրան ու նա մահացել էր: Այս պարագային մեղավորը մայրիկն էր, որ արգելված տեղով էր անցել: Օրենքը վարորդին չմեղադրեց և դատարանը մեռնողին մեղավոր հանեց ու վարորդին ազատ արձակեց: Տեսա՞ք, ահա այ'ս է օրենքը:

Պողոս Առաքյալի խոսքը այս պարագային ճիշտ տեղին է· *«Եվ ուրեմն հեթանոսները, որ օրենք չունեն,*

բնականորեն են օրենքի գործերը կատարում, նրանք, օրենք չունենալով, իրենք իրենց համար իսկ օրենք են»:

Ուրեմն հետևենք մարդկային և աստվածային օրենքներին ու խնդրենք Աստծու կամքը մեր բոլոր գործերում, որպեսզի առողջ լինենք և միշտ փառք տանք Ամենակալին· *«Աստված գնահատում է մեր արարքն ըստ մեր նպատակի, որովհետև ասված է, որ Տերը կտա քեզ ըստ քո սրտի»,*- ասում է Մարկոս ճգնավորը: Ամեն:

ՃՇՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԲԱՆԱԼԻՆ

«Ապաշխարեցե՛ք, որովհետև երկնքի արքայությունը մոտեցել է… » (Մատթ. 3:2):

Մատթեոսի ավետարանի 13–րդ գլխի 45-46 համարներում մեր Տերը ուրիշ առակների շարքում պատմում է նաև *Իրական Մարգարիտի* առակը:

Երանության լեռան վրա Հիսուսի առաջին քարոզով իսկ աշխարհի թշվառությունը, սուգը, ծարավն ու որբությունը մոռացած մարդիկ մի այլ ճշմարտություն տեսան: Երկնքի թագավորությունը ժառանգություն էր տրվում երեկվա խեղճ ու աղքատ, երկրի վրա թագավորներից ու աշխարհի իշխաններից միմիայն զրկանք ու արհամարհանք տեսած մարդկանց:

Հովհաննես Մկրտիչն անապատում խոսում ու նախապատրաստում էր մարդկանց սրտերը, որպեսզի ապաշխարությամբ մաքրվեն, սրբվեն և արդար ու բարի գործեր կատարեն. *«Ապաշխարեցե՛ք, որովհետև երկնքի արքայությունը մոտեցել է… Ես ձեզ ջրով եմ մկրտում ապաշխարության համար, բայց ով գալիս է ինձնից հետո, ինձնից ավելի հզոր է, և ես արժանի չեմ հանելու նրա կոշիկները, նա կմկրտի ձեզ Սուրբ Հոգով և հրով» (Մատթ. 3:2,11):* Հիսուսի խոստացածը, սակայն, ավելի իրական ու շոշափելի էր, քանի որ Նրան հավատացողը պիտի ճաշակեր Աստծու Թագավորությունը ժառանգելու քաղցրությունը;

Ամեն ժառանգություն կամ մեծ ու փոքր հարստություն ձեռք է բերվում միայն զոհողությամբ, այսինքն՝ ծանր և երկարատև աշխատանքով: Անշուշտ լինում են դեպքեր, երբ մարդու *«բախտը»* բերում է ու չսպասված տեղից անակնկալ կերպով ժառանգում է նյութական մեծ հարստություն, սակայն դրանք շատ

հազվադեպ են լինում: Իրապես չես կարող հարստանալ, եթե գիշեր-ցերեկ առանց հանգստի չաշխատես: *Ես կարդացել եմ, որ մի մեծահարուստ մարդ իր ամբողջ կյանքն անցկացրել է մի երազով՝ դառնալ միլիոնատեր: Եվ առանց հանգստի աշխատելով՝ իր կյանքի հիսուներորդ տարում հասել է իր նպատակին, սակայն, դժբախտաբար կորցրել է իր ամենաթանկագին բանը՝ առողջությունը: Բժիշկը նրան արգելել է նույնիսկ մեկ կտոր միս ուտել և շատ այլ բաներ: Կարդացել եմ նրա խոսքն ուղղված մի առողջ մարդու. «Ամբողջ հարստությունս կտամ՝ քեզ պես առողջ լինելու համար»: Հիսուս, երբ հավատացյալին խոստանում է Երկնքի Թագավորությունը, չի մոռանում նաև շեշտել զոհողությամբ դրան հասնելու դժվարություններն ու նեղությունները:*

Նա ասում է, որ՝ Աստծու Թագավորությունը նմանվում է մի վաճառականի, որի գործը ապրանք գտնելն ու ծախելն էր, նաև՝ թանկարժեք մարգարիտներ: Եվ այս վաճառականը գտնում է մի թանկարժեք մարգարիտ: Ուշադրությամբ նայելուց, քննելուց հետո համոզվում է, որ այն շատ արժեքավոր է, ուզում է անպայման գնել, այնուհետև վերավաճառել, որպեսզի շատ դրամ աշխատի: Սակայն ցանկությունը քիչ էր. վաճառականն ստուգում է իր գրպանի դրամը, քիչ է գալիս, ապա տուն է գնում, վաճառում կնոջ ամբողջ ոսկեղենը ու դրամի վերածում, այնուհետև վաճառում է այլ զարդեր և իրեր, մի խոսքով, կարողանում է հավաքել անհրաժեշտ գումարը ու մարգարիտը գնել: Ես պատկերացնում եմ, թե նա ինչպիսի՞ ուրախություն պիտի ապրեր՝ իր առջև դնելով այդ արժեքավոր մարգարիտը *(հմմտ. Մատթ. 13:46):*

Առակի պատմությունը այս է.

«Աստծու կամ Երկնքի արքայությունն ընդհանուր մտքով նշանակում է, որ Աստված կատարելապես իշխում է ու ամեն ինչ կատարվում է Նրա կամքի համաձայն»,- ասում է 20–րդ դարի Սուրբ Էջմիածնի միաբանության նշանավոր դեմքերից լուսահոգի Կարապետ Եպս. Տեր Մկրտչյանը և շարունակում է. *«Եթե ավետարանների մեջ շատ տեղերում արքայությունը ներկայացվել է իբրև մի բարիք, մի գանձ, որը պետք է աշխատենք ձեռք բերել, այդ նրա համար է, որ նույնիսկ Աստծու հովանավորության տակ գտնվելը, Նրա կամքի համաձայն շարժվելը նկատվում է իբրև բարձրագույն բարիք» (Կարապետ Եպս. Տեր Մկրտչյան, «Քրիստոնության իսկությունը»):*

Հիսուս սակայն բացատրում է, որ Երկնքի արքայությունը միանգամից չի կարող գալ, դրա համար ժամանակ է պետք: Ինչպես որ մանանեխի հատիկի ամբողջ բույսը պարունակում է իր սկզբնական վիճակում, այդպես էլ քրիստոնյան, որը մանանեխի հատիկի չափ հավատ ունի, Աստծու արքայությունը ժառանգելու ու ստանալու երազն ունի իր սրտում: Եվ նա կարող է դա ստանալ, եթե արժանի է անշուշտ միայն այդ ժամա-նակ:

Հասկանալի է, որ ապրելով այս երկրային կյանքում՝ բոլորս էլ մտածում ենք ինչ-որ ձևով ապահովել մեր ընտանիքների նյութականը, որպեսզի քիչ թե շատ լավ ապրելակերպ ունենանք: Իբրև կյանքի վաճառականներ՝ մեր բոլորիս առջև միշտ էլ դրվում են թանկարժեք ու արժեքավոր մարգարիտներ և մենք մտածում ենք դրանք վաճառելով ավելի օգուտ ունենալու մասին, որպեսզի մեր ընտանիքների ապագա երջանկությունը ապահովենք, այսինքն՝ ավելի պարզ ասած, հանգիստ քնենք ու դրամական մտահոգություն չունենանք:

Բայց հարց է ծագում, արդյոք ա՞յդ է Իրական Մարգարիտը, որը երկար ժամանակ փնտրում ենք: Քրիստոնյա մարդու պատասխանը պիտի լիներ. *«Անշուշտ, ո՛չ»: Ինչո՞ւ:* Ինչպես վաճառականի պարագային ասացինք, նա ամեն ինչ արեց, որպեսզի այդ թանկագին մարգարիտը գնի, այսինքն՝ կարողացավ հավաքել անհրաժեշտ դրամը, նույնը համոզված ենք, պիտի աներ մեզանից ամեն մեկը, եթե դրա անհրաժեշտությունը զգացվեր: Պատկերացրեք, եթե մենք նույնպիսի հավատով, եռանդով ու աշխատասիրությամբ մեր ունեցած հարստությունը տրամադրենք՝ գտնելու Իրական Մարգարիտը՝ Ճշմարտության Բանալին, որ է մեր Փրկիչը՝ Հիսուս Քրիստոս, ապա վստահ եղեք, որ անպայման պիտի ժառանգենք Երկնային Թագավորությունը: Ո՛չ մի գանձ, հարստություն և ժամանակավոր երջանկություն չեն կարող փոխարինել հավիտենական այն ուրախությանը, որը Փրկիչը Ինքն է մեզ տալիս Իր թագավորական իշխանությամբ, Իր հույսով ու մանավանդ՝ մեր նկատմամբ ունեցած Իր անհուն սիրով:

Ուրեմն, լավ պիտի հասկանանք ու գիտակցենք, որ այս երկրային կյանքի թանկարժեք մարգարիտները աղոթքի և հավատի միջոցով մեր կատարած բարի ու արդար գործերն են, որոնցով միայն պիտի կարողանանք Քրիստոսին ունենալ մեր մեջ: Քրիստոսին ունենալ մեր մեջ նշանակում է, ինչպես Ինքն է ասում. *«Խաչն առնել ու գնալ Իր ետևից»,* այսինքն՝ *խնամել հիվանդին, մխիթարել սգավորին, բարձրացնել ընկածին,* մի խոսքով՝ նմանվել *Աշխարհի Լույսին,* մեր Տիրոջը՝ Հիսուս Քրիստոսին: Ամեն:

ՄԱՐԳԱՐԵԻ ՊԱՏԻՎԸ

«ՃՇՄԱՐԻՏ ԵՄ ԱՍՈՒՄ ՁԵԶ, ՈՐ ՄԱՐԳԱՐԵՆ ԸՆԴՈՒՆԵԼԻ ՉԷ ԻՐ ՔԱՂԱՔՈՒՄ» (ՂՈՒԿ. 4:24):

Ղուկաս Ավետարանիչը գեղեցիկ կերպով նկարագրելով Հուդայի անապատում Հիսուսի անցկացրած քառասնօրյա փորձության շրջանը ու Նրա տարած հաղթանակը սատանայի կողմից խոստացված անցողիկ փառքերի ու վայելքների վրա, շարունակում է պատմել, թե Հիսուս զգալով, որ այլևս Իր առաքելության ժամանակը հասել է, սկսում է Իր վարդապետության սերմերը ցանել Հուդայի գավառում: Կարճ ժամանակի ընթացում Նա ունենում է բազմաթիվ հետևորդներ, որոնց միջոցով Նրա հրաշագործությունների համբավը տարածվելով Պաղեստինի բոլոր շրջանները, հասնում է մինչև Նրա ծննդավայրը՝ Գալիլիայի Նազարեթ քաղաքը:

Եվ մի շաբաթ օր, Հիսուս մտնում է Նազարեթ ու Իր սովորության համաձայն գնում Տաճար՝ աղոթելու: Այնտեղ Նրան տրվում է Եսայու մարգարեության գիրքը, որպեսզի մի հատված կարդա և մեկնաբանի ժողովրդին:

«Ժողովականները, ըստ երևույթին սպասում էին տափակ ճառի, ծամծմված մի քարոզի: Հիսուսի իմաստությունը ուժեղ տպավորություն է թողնում և խանգարում նրանց: Նրանք չեն կարողանում ընդունել, որ գյուղի երեխաներից մեկը իրեն Աստծու ընտրյալ է համարում: Նրանք կապ են տեսնում Հիսուսի ասածների ու Իր կատարած հրաշքների միջև, որոնց մասին լսել ու դիմադարձում են Նրան: Եվ Իր ծննդավայրի մարդիկ… տանում են նրան լեռան դարավանդը, որպեսզի գահավեժ անեն: Հիսուս հետագայում կունենա ծանր ու դառն պահեր, դեռ շատ անգամ կմղկտա Աստվածորդու սիրտը՝ մարդկանց ստոր ու դաժան վերաբերմունքից, բայց այդ օրը նա երբեք չի մոռանա: Տարիներ հետո Նա վերադար-

ձավ իր քաղաքը, բայց իր քաղաքը չընդունեց Նրան, ավելին՝ սպանության դավով էր լցված մանկության օրրանը Իր հանդեպ:

Ու նա հեռանում է հայրենի ափերից, նույնիսկ չուզենալով հրաշքներ գործել ու բժշկել մարդկանց, որովհետև հրաշագործության առանցքը երկու կողմերի անխախտ հավատն է հրաշքի հանդեպ: Անհավատ ամբոխի դիմաց Հիսուս մի տեսակ է թևաթափ է զգում Իրեն և հեռանում է Նազարեթից: նա ոչինչ չունի անելու այնտեղ» (Զաքարիա քահանա Սարիբեկյան «Անհաւատ հաւատարմություն» քարոզից):

Վերոհիշյալ տողերը Եսային մարգարեացել էր Մեսիայի համար, հետևաբար, երբ Հիսուս այն հեղինակային շեշտով կարդում է, ասելով, թե արդեն այդ բոլորը իրագործվում են Իր Անձով, Նա շփոթության է մատնում Իրեն լսողներին, որոնք իրար հարց էին տալիս. *«Մի՞թե սա հյուսն Հովսեփի որդին չէ՞»* և, երբ Նազովրեցիները մի հրաշք են խնդրում Հիսուսից, փաստելու համար Իր Մեսիա լինելը, Նա պատասխանում է. *«Ճշմարիտ եմ ասում ձեզ, որ մարգարեն ընդունելի չի իր քաղաքում»: Արդարև ասում եմ ձեզ, որ Եղիայի օրով Իսրայելում բազում այրիներ կային, երբ երկինքը փակվեց երեք տարի ու վեց ամիս, և ամբողջ երկրի վրա մեծ սով եղավ: Սակայն նրանցից ոչ մեկի մոտ Եղիան չուղարկվեց, այլ միայն՝ մի այրի կնոջ սիդոնացիների Սարեփթա քաղաքում: Նաև՝ Իսրայելում Եղիսե մարգարեի օրով բազում բորոտներ կային, և սակայն նրանցից ոչ մեկը չմաքրվեց, այլ միայն՝ Նեեման ասորին»: Երբ այս լսեցին, ժողովարանում բոլորը լցվեցին բարկությամբ և վեր կենալով՝ նրան քաղաքից դուրս հանեցին ու տարան մինչև դարավանդը այն լեռան, որի վրա շինված էր իրենց քաղաքը, որպեսզի նրան գահավեժ անեն: Իսկ նա, անցնելով նրանց միջից, գնաց» (Ղուկ. 4:24-30):*

Քրիստոսի հայտնած այս կենդանի ճշմարտությունը, որն իր տեղական բնույթի համար վրիպել է շատերի աչքերից, իր նախընթացը չունի Հին Կտակարանի ու հունական գրականության մեջ:

Թագավորաց գրքում կարդում ենք, որ Եղիայի մարգարեությանը չէին հավատում նրա հայրենակիցները ու, երբ երեք ու կես տարի սով տիրեց երկրում, շատ այրիներ սովից մեռան իրենց անհավատության պատճառով, մինչդեռ մարգարեն Աստծու հրամանով կերակրում էր հեթանոս մի այրու, որը հավատացել էր իր մարգարեությանը: Նույնպես Եղիսե մարգարեի օրով մեծ թվով բորոտներ էին ապրում Պաղեստինում, այս անգամ էլ մարգարեն ուղարկվում է հավատացող մի հեթանոսի մոտ՝ Նեեման Ասորու, որպեսզի նրան բուժի:

Իսկ *«հեթանոսաց Քրիստոս»* կոչված հանրածանոթ Ապողինոսի կյանքում հանդիպում ենք այսպիսի տողերի. *«Որքան տարօրինակ է այս երևույթը, որ, երբ համայն մարդկության կողմից փառաբանվում եմ որպես Աստված, դժբախտաբար դեռևս ծննդավայրիս բնակիչները շարունակում են ինձ չճանաչել»: Պլուտարքոս Հույն պատմիչն էլ արդարորեն մեր ուշադրությանն է հանձնում, թե՝ «Հազվագյուտ է թիվը այն իմաստուն և մեծ մարդկանց, որոնք գնահատված լինեն իրենց ծննդավայրում»:*

Նազովրեցիները ինչպե՞ս հավատային Հիսուսի մեսիականության, երբ նա ծնվել էր հողեղեն արարածներից, մեծացել նրանց մեջ և որ մինչ այդ հյուսնությամբ էր զբաղվում:

Հետաքրքիր է, ի՞նչ է փոխվել երկու հազար տարի հետո. արդյոք այսօր մարդիկ գնահատվա՞ծ են իրենց ծննդավայրում: Ուրիշ ժողովուրդների պատմությանը շատ ծանոթ չեմ և չեմ կարող որևէ բան ասել նրանց մա-

սին, բայց եթե վերցնենք մեր ժողովրդին, կարող եմ վկայել, որ՝ ո՛չ: Մեր տաղանդավոր հայորդիները ան-հատապես փայլում են աշխարհի ամեն կողմում, թե՝ մարմնամարզության, թե՝ գիտության, թե՝ կրթության, թե՝ արվեստների և թե՝ արհեստների բնագավառում, մի խոսքով ամեն ինչում:

Ինչքան երգահաններ, խմբավարներ, գիտության նվիրված մարդիկ, արվեստագետներ՝ լինեն դրանք երա-ժիշտներ, նկարիչներ, քանդակագործներ, իրենց երկրում կամ ծննդավայրում չգնահատված, չընդունված լինելու գիտակցությունից վիրավորված, թողել ու հեռացել են այլ երկրներ, ուր նրանց գտել, ընդունել և տեղ են տվել; Ես ապրում եմ Ամերիկայի Միացյալ Նահանգներում: Այս երկրի նշանավոր գյուտերը կատարել են մեր հայրե-նակից հայերը: Ինչո՞ւ, նրանք չէի՞ն կարող դա անել մեր Հայրենիքում: Կարող էին, բայց…

Այլ ժողովուրդներ գնահատելով մեր տաղանդ-ներին, հպարտանում են նրանցով, այդ ժամանակ միայն մենք հասկանում ենք, թե ի՞նչ ենք կորցրել ու փորձում ենք վերականգնել նրանց հետ մեր հարաբերությունները, որպեսզի նրանք վերադառնան ու իրենց տաղանդները օգտագործեն մեր երկրի համար: Ավաղ, երբեմն ուշ է լինում: Կոտրված ու վիրավորված սրտերը դժվար են վերականգնվում: Օրինակների շատ են: *«Ճշմարիտ եմ ասում ձեզ, որ մարգարեն ընդունելի չի իր քաղաքում»:* Հիսուսի պատասխանը ճիշտ ու ճիշտ այսօրվա և ինչո՞ւ չէ մեր ժողովրդի տաղանդավոր զավակների համար է:

ԻՇԽԱՆԱՎՈՐ ԵՎ ԻՄԱՍՏՈՒՆ
(Վարդան Վարդապետ Այգեկցի – Աղվեսագիրք)

«Կար մի աշխարհակալ իշխանավոր, և նա ուներ մի խիստ գեղեցիկ տղա: Եվ իշխանավորն ասաց, թե գեղեցիկ աղջիկ կառնեմ, որ կին լինի իմ որդուն և ունե-

նամ գեղեցիկ թոռներ՝ ժառանգ իմ գահի: Եվ գնաց բերեց մի գեղեցիկ հարս և դեռ թոռ չէր ունեցել, երբ որդին մեռավ, և հարսը մնաց: Եվ ինքը կամեցավ հարսին առնել և հարցրեց իմաստուններին, թե «Կա՞ իրավունք» և նրանք ասացին, թե «չկա իրավունք, որ հայրն առնի հարսին»: Եվ չկամեցավ լսել նրանց և գտավ մի այլ իմաստուն, որ նրա սիրելին էր և այդ իմաստունն ասաց իշխանավորին. «Աշխարհում յոթանասուներկու ազգ կա և նրանցից ոչ մեկին չի հասնում այդ, բայց քեզ կհասնի»: Եվ իշխանավորն ասաց, թե «Ինչո՞ւ աշխարհի յոթանասուներկու ազգին չի հասնում այդ, իսկ իրեն կհասնի»: Եվ իմաստունն ասաց. «Վախենում եմ պատճառն ասել, որովհետև կսպանես ինձ»: Եվ նա երդվեց չպատժել նրան, եթե պատճառն ասի: Այն ժամանակ իմաստունն ասաց. «Որովհետև դու ամեն ազգից դուրս ես, և քո վրա չկա իշխանություն, և ինչ կամենաս կարող ես անել»:

Կյանքում էլ այդպես է: Ո՞ր ասպարեզում էլ ուզում ես ծառայիր, կհանդիպես այսպիսիներին, որոնք «Ո՛չ Աստծուց են վախենում և ո՛չ էլ մարդկանցից ամաչում», ի՞նչ ուզում են, անում են, քանի որ իշխանություն ունեն, այս պահին ուժ ու աթոռ ունեն: Իսկ հետո… ոչինչ… մի բուռ հող»:

Հրեաների ակնկալությունը բոլորովին տարբեր էր Մեսիայի հանդեպ. նրանք սպասում էին այնպիսի մեկին, որը երկնքից պիտի իջներ հրեշտակների բանակներով, իրենց պիտի ազատեր օտարների լծից և Երուսաղեմը դարձներ աշխարհի մայրաքաղաքը՝ մյուս բոլոր պետություններին հպատակեցնելով իրենց իշխանության:

Ուստի, ինչպես Ղուկաս ավետարանիչն է ասում, Նազովրեցիները չհավատացին, որ Հիսուս Աստծու Որդի է և Նրան դուրս հանեցին Նազարեթից և ոչ միայն, այլև փորձեցին նրան գահավեժ անել և սպանել: Բացի Նազովրեցիներից Հիսուսի մեսիականությանը չհավատաց

նաև հրեա ժողովրդի մեծամասնությունը, հ հակառակ այն հաստատ իրողության, որ Հիսուս գործադրեց Եսայու մարգարեությունները:

Մեր Տիրոջ ասածի պես նրանք իրենց աչքերը փակեցին, որպեսզի չտեսնեն ճշմարիտ լույսը, իրենց ականջները՝ որպեսզի չլսեն Աստծու ձայնը և շարունակեցին մնալ խավարում իրենց չարագործություններով:

Սակայն, ինչպես հեթանոսները իրենց հավատի համար Աստծուց շնորհ գտան Եղիա և Եղիսե մարգարեների օրով, դարձյալ հեթանոսներն էին, որ ճանաչեցին ճշմարիտ լույսը՝ դուրս գալով իրենց խավար վիճակից և Քրիստոսին դավանեցին իբրև Աստվածորդի ու ճշմարիտ Մեսիա:

Մեր նախահայրերը հավատացին Հիսուսի բերած Ավետարանի բարի լուրին: Քրիստոնյա հայը քսանմեկ դարերից ի վեր, հավատարմորեն իր լույս հավատը պահեց ի գին ամեն զոհողության ու այսօր մենք էլ պարտավոր ենք փոխանցել այն եկող նոր սերունդին:

Բավական դժվար, նույնիսկ անկարելի պիտի լինի մեզ կատարել այդ սրբազան պարտականությունը, եթե պակասում է մեզ գիտակցությունը լիովին կատարելու քրիստոնեական կրոնի մեր վրա դրված պարտականությունները:

Որպեսզի Աստվածորդին Իր երկնային փառքով երկրորդ անգամ աշխարհ գալու ժամանակ չասի մեզ, թե՝ *«Ճշմարիտ եմ ասում ձեզ, որ մարգարեն ընդունելի չի իր քաղաքում»,* այլ ընդհակառակը՝ Նրա սիրտը թող հրճվի, որ ոչ միայն հավատարիմ ենք մնացել Իր քարոզած ճշմարտության և մեր պապենական սուրբ հավատին, այլ նաև՝ ջերմորեն ընդունել ենք Նրան մեր սրտի ու հոգու մէջ: Ամեն:

Աստված ասաց. *«Մարդ ստեղծենք մեր կերպարանքով ու նմանությամբ, նա թող իշխի ծովի ձկների, երկնքի թռչունների, ողջ երկրի անասունների և երկրի վրա սողացող բոլոր սողունների վրա»: «Եվ Աստված մարդուն ստեղծեց իր պատկերով, Աստծու պատկերով ստեղծեց նրան, արու և էգ ստեղծեց նրանց» (Ծննդոց 1:26-27):*

Պարզ է, որ մարդու ծնունդը աստվածային է: Հիշենք Աստծու խոսքը, երբ ամեն օր մի բան էր ստեղծում. *«Աստված տեսավ, որ լավ է: Աստված օրհնեց...»* թող լինեն: Ուրեմն Աստծու ստեղծածները բարի էին, իսկ մարդը վեր էր դրանցից, քանի որ՝ *«Տեր Աստված մարդուն ստեղծեց երկրի հողից, նրա դեմքին կենդանության շունչ փչեց և մարդն եղաւ կենդանի էակ» (Ծննդոց 2:7):* Աստված մարդուն օժտեց խելքով, կամքով, խղճով ու Իր Հոգին փչեց նրա մեջ: Մարդը սրանցով է տարբերվում կենդանիներից:

Նշանակում է՝

ա. Այս աշխարհում մարդ լինելը՝ մեծ շնորհք է·

բ. Իբրև մարդ ապրելը՝ քաջություն պահանջող պայքա'ր է.

գ. Իսկ մարդ մնալը և մարդ մեռնելը՝ հաղթանակ:

Ուստի, բոլորս մարդ ենք այնքան ժամանակ, որքան գիտակից ենք մեր կոչմանը և տերն ենք մեր արժանապատվության:

Աստված մարդու փրկությունը այնքան կարևորեց ու արժևորեց, որ նրա համար չխնայեց նույնիսկ Իր Միածին Որդուն և ամեն ինչ արեց, որ նրան կրկին անգամ բարձրացնի ու բազմեցնի Իր Աջ կողմում:

Գարեգին Կաթողիկոս Հովսեփյանցը այսպես է բնութագրում *«Մարդու կոչումը աշխարհիս վրա».*

«Կյանքը կազմված է փոքր բաներից, բայց առանց այդ փոքր բաների լավ կատարման լավագույն մեծը չի ստեղծվել… Կառապա՞ն եք, կարող եք բարի, ազնիվ ու արդար կառապան լինել: Կոշկակա՞ր եք, կարող եք երեսի քրտինքով վաստակած, մաքուր հաց ուտել և կերցնել ձեր զավակներին:

Ծնո՞ղ եք: Ի՞նչ թանկագին բան է զավակը, խելոք մանչուկը, սիրունիկ աղջիկը: Արտաքուստ ինչքան փոքր բաներ են մայրական պարտավորությունները՝ սնունդ տալ, լողացնել երեխային, մաքրել և լվանալ նրա փաթույթները, հագնելիքը, քնեցնել ժամանակին և այլ բազմաթիվ այսպիսի մանր բաներ: Բայց այս մանր բաներից է կախված մսի այդ գնդից մտածող և զգացող, բանական և բարոյական էակ ստեղծելը» («Դեպի Լույս և Կյանք», «Մարդու կոչումը աշխարհիս վրա», էջ 112): Դժբախտաբար կան անհատներ, որոնք Աստծու տված այս վեհ կոչումը խեղաթյուրում են ու ապրում են կենդանու կյանքով: Բնական է, որ այսպիսիները ոչ միայն որևէ արժեք չեն ներկայացնում իրենց Ստեղծողի՝ Աստծու, այլ նույնիսկ իրենց իսկ նմանների մոտ:

ՄՐՋՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՓԻՂԸ

Սողոմոն թագավորը մի փիղ ուներ: Այնքան հսկա էր, որ ամեն ինչ քարուքանդ էր անում, բայց քանի որ թագավորի սիրած փիղն էր, անպատիժ էր մնում: Նամանավանդ մեծ վնաս էր հասցնում մրջյուններին. պառկում էր և մի պալատ մրջյուն ջնջում, կնճիթով քաշում էր ու երկինք փչում;

Ստիպված մրջյունները գնում են Սողոմոն թագավորի մոտ ու ասում.

Իմաստուն թագավորն ապրած կենա, քո փի-ղը մեր տներն ավերում ու մեր ցեղը ջնջում է, արգելի՛ր.

Ի՞նչ,- գոռում է թագավորը,- մրջյուններն ով-քե՞ր են, որ նրանց համար իմ փղի առաջ արգելք դնեմ:

Երկրորդ, երրորդ անգամ գնում են գանգատվելու, սակայն թագավորը դարձյալ լռում է: Եվ տեր թագավորից հույսները կտրած՝ մրջյունները որոշում են մեծ ժողովի հավաքվել: Գալիս են աշխարհի բոլոր մրջյունները՝ մեծ ու փոքր, առողջ ու տկար, թույլ ու ուժեղ, անգետ ու գիտուն: Գալիս են, խելք խելքի տալիս ու փղին հաղթելու հնարը գտնում: Մրջնավարի լուռ՝ գործի են անցնում ու փղին վայել գերեզման փորում: Ծանր փնչոց ու խուլ ոտնաձայներ են գալիս՝ մրջյունները ձայները կտրում են: Դո՛փ, դո՛փ. Դո՛փ - Փիղը գալիս էր ավերելու: Ու մեկ էլ թըմփ … հսկան փոսն է ընկնում, ոտքերը տնկում ու այդպես էլ մնում:

Օրերը անցնում են, փիղը չկար: Թագավորը ծառաներին ուղարկում է փնտրելու: Այստեղ փիղ, այն-տեղ փիղ, փիղը՝ չկար: Մրջյունների մոտից ծանր ժանտահոտ էր գալիս. Գնում են, տեսնում փիղը սատկել է: Ծառաները այս մասին հայտնում են Սողոմոն իմաստունին:

Մեր թագավորը շատ ապրի, մրջյունները թակարդ են սարքել, փիղն ընկել է մեջը՝ սատկել:

Սողոմոն իմաստունը ողբում է իր փղի մահը, ափսոսում, բայց և մտածում է իրենից հետո եկողների մասին ու ասում.

Թշնամիդ թեկուզ մրջյուն էլ լինի՝ մի արհամարհիր:

Հիանալի և Սողոմոն իմաստունին վայել մտածում:

Նշանավոր ռուս գրող Դոստոևսկին ասում է. *«Մարդ լինել մարդկանց մեջ և միշտ մարդ մնալ բոլոր դժբախտությունների մեջ. չհուսալքվել ու չընկճվել. այս է ահա կյանքը, այս է նրա նպատակը»:*

Ուրախ ենք վկայելու, որ կան իրապես մարդ կոչումը արժևորողներ, որոնք Աստծուն իրենց ծառայությամբ, սիրով ու նվիրումով և արդար ու բարի գործերով, արժանանում են ամենավեհ տիտղոսին. Աստված արժևորում է նրանց: Այո՛ գլխավորը Աստծու գնահատականն ու արժևորումն է, սակայն մարդիկ էլ իրենց բարի խոսքն են ասում, այսպիսի արտահայտությամբ. *«ՄԵԾԱՏԱՌՈՎ ՄԱՐԴ էր»:* Չմոռանանք, որ միա'յն Աստծու անունն է գրվում մեծատառով: Կնշանակի այդ մարդը իր բարի, արդար և քրիստոնեավայել կյանքով վաստակել է այդ պատվավոր՝ *ՄԱՐԴ* կոչվելու իրավունքը: Փորձենք նմանվել. ՄԱՐԴ ԼԻՆԵՆՔ ՈՒ ՄԱՐԴ ՄՆԱՆՔ, նույնիսկ եթե հեռացել ենք այս երկրավոր կյանքից: Ամեն:

ՆԵՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԵՆ

«ԱՇԽԱՐՀՈՒՄ ՆԵՂՈՒԹՅՈՒՆ ՊԻՏԻ ՈՒՆԵՆԱՔ, ՍԱԿԱՅՆ ՔԱՋԱԼԵՐՎԵՑԵ՛Ք, ՈՐՈՎՀԵՏԵՎ ԵՍ ՀԱՂԹԵՑԻ ԱՇԽԱՐՀԻՆ» (ՀՈՎՀ. 16:33),- ԱՍՈՒՄ Է ՄԵՐ ՏԵՐԸ:

Աշխարհում գնալով ավելանում է բժիշկների, բժշկական տեխնիկայի, դեղամիջոցների քանակը, բարձրանում է բուժման մակարդակը, բայց չեն պակասում հիվանդությունները: Ընդհակառակը ավելանում է դրանց քանակը, տեսակը, հին հիվանդությունները փոխում են իրենց տեսքը… Առաջին հայացքից դրա պատճառն անհասկանալի կարող է թվալ, սակայն բավական է հիշել հիվանդության բուն պատճառը, մեղքը, որպեսզի ամեն ինչ իր տեղն ընկնի:

Հետաքրքիրն այն է, որ մեր հոգևոր հայրերը մարդու համար անհրաժեշտ են համարել նեղությունները, հալածանքներն ու հիվանդությունները: Դրանք դեղ են համարել քրիստոնյայի հոգու համար: Մարդու համար անհամեմատ ավելի վատ է, եթե նա ոչ մի փորձություն ու վիշտ չի ճաշակում: Այդպես հնարավոր է մոռանալ Նրա մասին և հեռանալ Երկնքի Արքայություն տանող ճանապարհից: Աստծուն գոհություն և փառք պիտի տաս, երբ Նա քեզ որոշ փորձություն է ուղարկում: Դա նշանակում է, որ Նա քեզ չի մոռացել և Իր շնորհը չի վերցրել քեզնից:

Ահա թե ինչ է պատմում հոգևոր հայրերից մեկը, որն Ալեքսանդրիայում եկեղեցի էր մտել աղոթելու համար: Նա այնտեղ տեսնում է մի սևազգեստ այրի կնոջ, որը Փրկչի պատկերի առաջ աղոթում և լաց էր լինում, անընդհատ կրկնելով. *«Մի՛ լքիր ինձ, Տեր, գթա, ողորմած»:*

Երբ նրան պատճառն են հարցնում, նա պատասխանում է. *«Հայր իմ, չգիտես իմ վիշտը»,*- լաց լինելով ասում է կինը,- *«Ես ապրում եմ Աստծուց մոռացված; Տերը մոռացել է ինձ այցելել և արդեն երեք տարի է, որ ոչ մի վիշտ չեմ տեսել: Ո՛չ ես եմ հիվանդացել, ո՛չ՝ որդիս: Նույնիսկ մի հավ չի կորել իմ տանից: Մտածում եմ երևի իմ մեղքերի համար է Աստված լքել ինձ և աղաչում եմ, որ Նա ողորմի ինձ»:*

Ահա թե աստվածավախ մարդիկ ինչպես են ընդունում երկար ժամանակ անցավ կամ անփորձանք մնալը: Նեղությունները համարում են իրենց նկատմամբ ցուցաբերած առանձնակի ուշադրության արդյունք: Անհնար է, որ քրիստոնյան իր կյանքն Աստծուն նվիրելով զերծ մնա փորձություններից: Սիրաքն ասում է. *«Որդյակ, եթե նվիրվում ես Տիրոջը ծառայելու, քո անձը փորձությունների պատրաստիր: Ողջիր քո սիրտը, համբերիր և շփոթության մի մատնվիր աղետների ժամանակ» (Սիրաք 2:1-2):*

Տիրոջը նվիրված կյանքը լի է փորձություններով, ցավերով, վշտերով ու տառապանքներով: Իսկ մեղքի համար ստացած արդարագույն պատիժն այն է, որ մարդ կորցնում է այն, ինչը չի ցանկացել լավ օգտագործել: Եթե ասենք առողջությունը ճիշտ չի օգտագործվել, այն խաթարվում է, կորցվում: Նույնպես նաև Տիրոջ կողմից տրրվող մյուս պարգևները:

Բնականորեն ոմանք կարող են առարկել, թե՝ *«Ի՞նչ անենք, թողնենք, որ նեղությունը կորստյա՞ն մատնի մեզ«:* Սխալ մտածում է ու թերահավատներին բնորոշ: *«Ոչ թե նեղությունն է այդ անում, այլ՝ մեր ծուլությունը»: «Իսկ ի՞նչ կարելի է անել դրանից խուսափելու համար,* կարող է հարցնել մեկ ուրիշը: Պատասխանը պարզ է. եթե արթուն լինենք ու խնդրենք Աստծուն, որ մեր ուժից վեր մեզ փորձության չենթարկի:

«Գոհունակությամբ համակերպվում եմ տկարություններին, նախատինքներին, վշտերին, հալածանքներին, և նեղություններին՝ Քրիստոսի համար. որովհետև, երբ տկար եմ, այն ժամանակ եմ զորավոր» (Բ. Կորնթ. 12:10),- ասում է Պողոս Առաքյալը Կորնթացիներին ուղղված իր երկրորդ թղթում:

Ֆրանսիացի հայտնի մաթեմատիկոս Բլեզ Պասկալը, որը 24 տարեկանում հիվանդանում է շատ ծանր և աղոթքի ու խորհրդածությունների ժամանակ գրում է. *«Դու ինձ առողջություն շնորհեցիր, որպեսզի ուղղես ինձ, ուրեմն մի թող, որ զայրացնեմ Քեզ իմ անհամբերությամբ»* և ապա շարունակում է. *«Տեր, շնորհիր ինձ ուժ, որ կարողանամ զգոնությամբ վերաբերվել բոլոր իրադարձություններին... Չգիտեմ, թե ի՞նչն է օգտակար ինձ առողջությո՞ւնը, թե՝ հիվանդությունը, հարստությո՞ւնը, թե՝ աղքատությունը: Այդ մասին դատելը վեր է մարդու և հրեշտակների ուժերից, այն ծածկված է Քո նախախնամության գաղտնիքներում, ինչի առջև խոնարհվում եմ չհանդգնելով հասու լինել դրան»:*

Ընդհանրական Քրիստոնեական Եկեղեցու Հայրերից Օգոստինոս Հայրապետն ասում է.

«Քննությունը ցույց է տալիս, որ մարդն ինչպիսի մեղք էլ որ գործի, այն առաջին հերթին ուղղված է ոչ թե Աստծու, այլ սեփական անձի դեմ, «որովհետև նույնիսկ ինչով որ հանցավոր են Քո հանդեպ, դրանով իսկ չարիք են գործում իրենց հոգիներին»:

Երկրի վրա երջանկություն մի' փնտրիր; Երկիրը դրախտ չէ: Ադամի մեղքից և արտաքսումից հետո երկրի վրա դրախտ չկա: Եվ աշխարհում ամեն ոք իր խաչն ունի: Այն յուրաքանչյուր մարդու համար հենց իր ուժերի չափ է, ո'չ ծանր, ո'չ թեթև: Ճիշտ է ամեն ոք ունի իր խաչը, բայց մեկն այն կարող է կրել հոգու փրկության, մյուսը՝ այն

ծառայեցնել իր կործանման համար: Տերը մեզնից յուրաքանչյուրի վրա Իր խաչը դնելով ցանկանում է, որ մենք այն ծառայեցնենք մեր փրկության համար:

Սբ· Գրիգոր Տաթևացին ասում է. *«Մի՛ նախանձիր ուրիշին, համարելով, թե նրա խաչն ավելի թեթև է: Խաչի ծանրությունն ու կշիռը ոչ ոք չի կարող իմանալ բացի նրանից, ով, այն կրում է: Անկասկած է միայն, որ դու ինչպիսի խաչ էլ, որ ընտրելու լինես քեզ համար, ոչ մեկը քեզ հարմար չի լինի, բացի քո խաչից: … Տերն ավելի լավ գիտի, թե մեզնից ամեն մեկին ի՞նչ է պետք, ինչպիսի ծանրություն դնի յուրաքանչյուրիս ուսերին, ինչպիսի պայքար, ինչպիսի փորձություններ տա մեզ…»:*

Անշուշտ հիվանդության ժամանակ պետք է բժշկի դիմել, բայց հարկավոր չէ խուճապի մատնվել, և պետք է հույսը դնել Տիրոջ վրա: Վախը, հուսահատությունը վատ խորհրդատուներ են նման դեպքում: Քանի որ բժշկությունն աստվածահաճո գործ է, հենց իրենք բժիշկներն էլ չեն կարող բուժել առանց Տիրոջ կամքի: Դրա համար էլ՝ *«Կարդալով բժշկական գրքեր, կամ հարցնելով նրանց մասին որևէ մեկին, մի՛ մոռացիր, որ առանց Աստծու ոչ ոք բժշկություն չի ստանում: Արդ, ով իրեն նվիրում է բժշկության արվեստին, պետք է իրեն հանձնի Աստծու անվանը և Աստված կօգնի նրան: Բժշկության արվեստը չի խանգարում մարդուն բարեպաշտ լինել» (Աբբա Դորոթեոս, էջ 294):*

Մեր խորհուրդն է, որ հիվանդությունների ժամանակ բժիշկներին ու դեղերին դիմելուց առաջ աղոթեք Սուրբ Սերապիոն եպիսկոպոսի նման, այսպես.

«Տեր Հիսուս, Դու ես մեր օգնականը, Քո ձեռքերում ենք: Դու գիտես մեր լավն ու վատը՝ օգնիր մեզ: Մի թող մեզ մեր կամքով շարժվենք, մի թող մեզ կորչենք մեր մեղքերի մեջ, այլ գթա Քո ստեղծածին, մի՛ անտեսիր

մեզ մեր մեղքերի պատճառով, որովհետև մեր հույսը Դու ես: Բժշկիր մեր անձը, որովհետև մեղանչեցինք Քո հանդեպ, Քեզանից բացի ուրիշ ապավեն չունենք: Փրկի՛ր մեզ ըստ Քո ողորմության և թող ամաչեն բոլոր նրանք, որոնք Քո անվան համար հարձակվում են մեր վրա ու այդ ձևով ձգտում են մեզ հեռացնել Քեզանից, որովհետև Դու, Տեր, Ամենակարող ես և Քոնն է փառքը հավիտյանս» (Աղոթագիրք, Գանձասար, 1992թ., էջ 36-37): Ամեն:

ՈՒՇԱՑԱԾ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹՅՈՒՆ

«ԱՆՀԱՒԱՏ ՄԻ' ԵՂԻՐ, ԱՅԼ՝ ՀԱՎԱՏԱՑՅԱԼ» (ՀՈՎՀ. 20:27):

Հիսուսի խոսքն է սա, երկու հազար տարի առաջ ուղղված թերահավատ Թովմաս Առաքյալին:

Խորհրդային Միության տարիներին դժբախտաբար շատեր իրենց հավատը փորձեցին ուրանալ՝ պաշտոն ստանձնելու, հաճոյանալու, հրամանները կուրորեն կատարելու, շահ ակնկալելու և այլ առիթներով: Խորհրդային կարգերի նպատակը մեկն էր. մարդկանց մեջ սպանել հոգևորը, հոգին, բարոյականը, ինչո՞ւ չէ նաև մարդկայինը: Աստծու, եկեղեցու և հավատի նկատմամբ սերը փորձեցին սպանել, քանի որ խորհրդային հասարակարգը հիմնված էր Կարլ Մարքսի ուսմունքի վրա, որն ասում էր. *«Կրոնը հաշիշ է, որը թմրեցնում ու անզգայացնում է մարդուն»:* Խորհրդային համակարգը զարգացրեց միտքը, նյութականը, ֆիզիկականը հզորացրեց, սակայն դատարկ պահեց հոգին, հոգևորը, այն մաքուրը, որը մարդուն զերծ էր պահում *խարդախությունից, խաբեբայությունից, կոռոպուտից, ստախոսությունից, սուտ երդվելուց, գողությունից* և այլն:

Կարող եմ վկայել, որ ի պատիվ և ի հարգանս մեր ժողովրդի, այն ի գին ամեն զոհողության, կարողացավ պահել ավանդականը, իր հավատը արտահայտելով ծիսական արարողությունների կատարման մեջ, այսինքն՝ մկրտություն, պսակ, նույնիսկ թաղում կատարելով քահանայով կամ եկեղեցում: Կարևոր չէր, թե մկրտություն, պսակ անողները ինչքան հավատ ունեին: Այդ ժամանակ դա էլ բավական էր վառ պահելու համար մեր Եկեղեցու ու ժողովրդի կենսունա-կությունը:

Այս պատմությունը, որը կոչվում է *«Ուշացած*

խոստովանություն», ցույց է տալիս, թե դրամի համար, մարդը ինչպե՞ս կարող է ոտնակոխ անել իր սրբությունները, որոնք դարեր շարունակ արյան գնով մեզ են փոխանցել մեր նախնիները՝ շատ անգամ իրենց նահատակությամբ:

Այս մասին պատմում է Երևանի հիվանդանոցներից մեկում աշխատող բուժքույրերից մեկը. «*Երբ որպես բուժքույր հերթապահում էի Երևանի հիվանդանոցներից մեկում, մի հիվանդ երիտասարդի բերեցին, որը արտաքնապես առողջ էր երևում, բայց անհասկանալի մի ցավից անընդհատ գոռում էր ու օգնություն խնդրում: Բժիշկները շատ քննեցին, բայց այդպես էլ չկարողացան հասկանալ նրա ցավը, ուստի միայն ցավազրկող դեղեր էին տալիս, որոնք, դարձյալ անհասկանալի պատճառով, չէին օգնում: Ինձ նշանակեցին նրան խնամող: Նստած էի գիշերը նրա անկողնու մոտ ու ինձ տեսնելով ասաց. «Քո՝ւր ջան, ինձ փրկություն չկա, իզուր մի՛ չարչարվեք, Աստված է պատժում ինձ եկեղեցու խաչը գցելուս համար»: Ու այդ դժբախտը պատմեց, որ ինքը երբ «կոմսոմոլ» է ընդունվել, նրան առաջադրանք են տվել, որ Նորքի Սուրբ Մարիամ Աստվածածնի եկեղեցու խաչը գմբեթից գցի: Ու քանի որ մինչ այդ շատերը հրաժարվել էին այդ անելուց, իրեն նաև փող են խոստանում, որ կարողանա ամուսնանալ:*

Ինքն էլ, քանի որ կարիքի մեջ էր. ստիպված համաձայնվում է: Եվ նա շարունակեց. «Երբ խաչը գցեցի, շատերը մտածում էի, թե որ Աստված կա, ինչո՞ւ այս տղան անպատիժ մնաց»: Խոստովանվեց, թե ինքն էլ էր այդպես մտածում, բայց երբ հարսանիքի օրը եկավ, ու պատրաստվում էի գնալ հարսի հետևից, հանկարծ ոտքիս ու ձեռքերիս մատներում անհասկանալի և խիստ ծակոցներ զգացի, որոնք գնալով այնքան սաստկացան, որ ես ստիպված հիվանդանոց գնացի:

Բժիշկները կտրում են նրա ձեռքերը (որոնցով սուրբ Խաչն էր գցել), ամեն ինչ անում են, որպեսզի գոնե նրա կյանքը փրկեն, բայց ապարդյուն: Մի քանի շաբաթ հետո երիտասարդը մահանում է»:

«Անհավատ մի՛ եղիր, այլ՝ հավատացյալ»:

Կյանքում փորձենք շարժվել մեր խղճի թելադրանքով, որովհետև մի օր, երբ հաշիվ տալու լինենք Ամենակալին, պարզ ճակատով ու ներքին հավատով կանգնենք Նրա առաջ: Աստծու աչքերն ու ականջները բաց են և փախուստ չկա, եթե նույնիսկ գիտակցելով սխալ արարք են կատարում: Մեկ է ուր էլ որ գնանք, աշխարհի ո՞ր մասում էլ ապրելու լինենք, արդար դատաստանից փրկություն չկա: Ուրեմն, եկե՛ք հավատանք, սիրենք ու բարին գործենք, այդ ժամանակ իրապես մեր կյանքը ավելի խաղաղ ու հանգիստ կլինի: Ամեն:

ԵՂԻԱ ՄԱՐԳԱՐԵԻ ՏՈՆԸ

«ԼՍԻ'Ր ԻՆՁ, ՏԵ'Ր, ՊԱՏԱՍԽԱՆԻ'Ր ԻՆՁ ՀՐՈՎ...» Եղիա Մարգարե (Գ Թագավորություն 18 գլխի 36:39):

Եղիա մարգարէի տօնն է: Ո՞վ էր նա: Նրա մասին կարող ենք կարդալ Գ Թագավորության 17-րդ գլխից մինչև Դ Թագավորության 3-րդ գլուխը: *«Ի՞նչ է նշանակում մարգարե, նրանք ինչո՞վ էին տարբերվում սովորական մարդկանցից»:* Մարգարե նշանակում է Աստծու կողմից ընտրված արդար մեկը, որը Նրա անունով կարողանում է ճշմարտությունները բացահայտել և նաև ապագայում կատարվելիքները մարգարեանալ, այսինքն՝ կանխագուշակել: Մի քանի մարգարեների անուններ ասեմ, որոնք ծանոթ են ձեզ, ինչպես՝ Երեմիա, Զաքարիա, Եսայի, Եղիսե, Դանիել, Հովնան, Հովել, Մաղաքիա, Եզեկիել և այլն:

Եղիան էլ այդպիսի մի մարգարե էր, սովորական պարզ և արդար մի մարդ՝ մեղքերի ու կրքերի ենթակա: Քանի որ ժամանակի թագավորը սկսել էր մոռանալ կենդանի Աստծուն ու կուռքերին էր պաշտում և սկսում է հալածել իրեն նախատող Եղիա մարգարէին, նա աղոթում է ու երկրի վրա երեք տարի և վեց ամիս անձրև չի գալիս: Ամեն ինչ չորանում է: Եվ երբ թագավորն ու իր կողմնակիցները դարձի են գալիս ու սկսում են երկրրպագել կենդանի Աստծուն, նա դարձյալ աղոթում է ու երկինքից անձրև է տեղում և երկիրը առատ պտուղ է տալիս:

Հետաքրքիր է երկու եզների ողջակիզման պատմությունը: Գ Թագավորության 18-րդ գլխի 20-40 համարներում գրված է այս մասին: Ինչպես վերեվում ասացի, ժամանակի թագավորը հեռացել էր կենդանի Աստծուց և երկրպագում էր այլ չաստվածներին՝ կուռքերին: Եվ, որպեսզի Եղիան կարողանա ապա-ցուցել կենդանի Աստծու

զորությունը, քրմերի հետ մրցության է մտնում: Ասում է ընտրեք երկու եզներ և դրանք փորձենք զոհ մատուցել դուք ձեր չաստվածներին, ես էլ իմ կենդանի Աստծուն, տես-նենք ո՞ւմ զոհը ընդունելի կլինի և կամ ո՞ւմ Աստ-վածը կիջնի ու զոհաբերված եզների մարմինները երկինք կտանի: Եթե կարդաք այն գլուխները, որոնք մատնա-նշեցի, այնտեղ մանրամասն կտեսնեք նկարագրությունը թե քրմերին պաշտողները ինչեր են անում, աղմկում են, ծունկի են գալիս, ձայներ են հանում, որպեսզի իրենց չաստվածները զոհերը տանեն, սակայն նրանք լուռ են: Ասեմ, որ այս մրցակցությանը ներկա էին անհավատ թագավորը, իր մեծամեծները և ամբողջ ժողովուրդը:

Հերթը հասնում է Եղիա մարգարէին, որը հետևյալ աղոթքն է ուղղում իր Աստծուն· *«Աբրահամի, Իսահակի ու Իսրայելի Տե՛ր Աստված, թող այսօր համոզվեն, թե դու ես Իսրայելի Տեր Աստվածը, և ես քո ծառան եմ: Ես արեցի այս գործերը: Լսի՛ր ինձ, Տե՛ր, պատասխանի՛ր ինձ հրով, որ այս ժողովուրդը իմանա, թե դու ես Տեր Աստվածը և դու հետ դարձրիր այս ժողովրդի սիրտը»: «Եվ երկնքից կրակ ընկավ, լափեց ողջակեզն ու փայտերը, կլանեց փոսի հողն ու ջուրը: Երբ ամբողջ ժողովուրդը տեսավ դա, ընկավ երեսնիվայր և ասաց· «Արդարև, Տերն Աստված է, Տերն Աստված է» (Գ Թագավորություն 18 գլխի 36:39):*

«Եթե ձեզնից մեկը շեղվի ճշմարտության ճանա-պարհից, իսկ մեկ ուրիշը հետ բերի, թող իմանա, որ ով մեղավորին իր մոլորության ճանապարհից ետ է բերում, կփրկի նրա հոգին մահվանից և կծածկի մեղքերի մի ամ-բողջ բազմություն» (Հակ· 5:20): Ահա այս պահին, մենք տեսնում ենք, որ Եղիա մարգարեն ետ է վերադարձնում մոլորյալներին դեպի կենդանի Աստծուն:

Կարծում եմ այս պատմությունն էլ ձեզ համար հետաքրքիր կլինի:

«Մի մարդ կար, որը համարձակվեց կոչ ուղղել Աստծուն, ասելով· «Ով Տեր Աստված, հրդեհի՛ր թուփը, ինչպես որ արեցիր Մովսեսի համար և ես պիտի հետևեմ Քեզ: Փլի՛ր պարիսպները, ինչպես որ արեցիր Հեսուի համար և ես պիտի մարտնչեմ: Խաղաղեցրու ծովի ալիքները, ինչպես որ արեցիր Գալիլիայի ծովի վրա և ես պիտի լսեմ Քեզ:

Եվ մարդը երկար, երկար թափառեց մացառուտում, նստեց պարիսպների առջև ու մնաց ալեկոծ ծովի ափին, սպասելով, որ Աստված պատասխանի;

Աստված լսեց մարդու կոչը ու պատասխանեց· հրդեհ ուղարկեց ո՛չ թե մացառուտների թփերը այրելու, այլ՝ մարդկանց սրտերը հրդեհելու, փլեց ո՛չ թե քարե պարիսպները, այլ՝ մեղքի ու անտարբերության պատերը, խաղաղեցրեց ո՛չ թե ծովերը, այլ՝ փոթորկահույզ հոգիները: Եվ սպասեց շատ երկար, որ մարդը պատասխանի:

Եվ որովհետև մարդը փնտրում էր բոցավառվող թփեր և ո՛չ թե սրտեր, նայում էր քարերին և ո՛չ թե կյանքին, դիտում էր ծովեր և ո՛չ թե հոգիներ, եզրակացրեց, թե Աստված անզոր է: Ուստի, վեր բարձրացրեց իր գլուխն ու հուսահատված ասաց· «Ով Աստված, մի՞թե կորցրել ես Քո ուժը»: Աստված հասկացավ, որ մարդը չգիտակցեց Իր կատարածի կարևորությունը և նրան այսպես պատասխանեց, «Իսկ դու, ով մարդ, մի՞թե կորցրել ես քո տեսողությունը»:

Ի՞նչ եք կարծում Ամենակալ, Ամենակարող, Ամենազոր Արարիչը կարո՞ղ էր կորցնել Իր զորությունը: Իհարկե՝ ոչ: Մենք արդեն տեսանք, թե ինչպես Եղիա մարգարեն ցույց տվեց կենդանի Աստծու ուժը: Մարդը իր այս հարցը ուղղելով Աստծուն, չի անդրադառնում, որ Նա հավիտենական է և անմահ, իսկ ինքը՝ իբրև մարդ մահկանացու է և ժամանակավոր: Աստծու պատասխանը ազդու է և ճիշտ տեղին· *«Իսկ դու, ով մարդ, մի՞թե կորցրել ես քո տեսողությունը»:* Նայեցեք Ձեր շուրջը, ինչեր

են տեղի ունենում, ինչպիսի անիրավություններ, ավազակություններ, անարդարություններ, պատերազմներ, ամեն կողմ արյուն է հոսում, նույնիսկ երկրներ կան, որտեղ վեցից յոթ ամսական երեխաներ են ուտում, որոնք ճաշարաններին մատուցվում են թարմ վիճակում, ո՞ւր ենք հասել· ո՞վ է տեսնում Աստծու արդարությունը, ո՞վ է բռնում Նրա մաքուր ու զորավոր ձեռքը: Աշխարհը դժբախտաբար ահավոր նյութականացվել է այն աստիճան, որ մարդիկ ընտրում են ժամանակավորն ու անցողիկը, առանց անդրադառնալու ու գիտակցելու, որ մի օր հրաժեշտ են տալու այս կյանքին, ի՞նչ պիտի անեն իրենց ունեցածը:

«Ով մարդ, ո՞ւր է քո տեսողությունը»: Աստծու խոսքը ֆիզիկական տեսողության մասին չէ, այլ հոգու աչքերի ու նրա տեսողության: Այսօր մարդիկ կուրացրել են իրենց հոգու աչքերը: Նայում են ու չեն տեսնում, լսում են ու չեն հասկանում: Առաքյալն ասում է· ձեր մեղքերը իրար խոստովանեցե'ք և միմյանց համար աղո'թք արեք, որ-պեսզի բժշկվե'ք, քանզի արդարի աղոթքը շատ ազդեցիկ է ու օգնում է: Ապա թե ոչ՝ վայ ձեզ և վայ մեր աշխարհին:

Փորձենք աղոթքով վերականգնել մեր հոգու աչքերի տեսողությունը, որպեսզի Աստծու փրկարար Աջը կարողանա Իր ներգործությունը ունենալ և *«Ով Աստված, մի՞թե կորցրել ես Քո ուժը»* այս հարցի փոխարեն, մենք ամբողջական մեր հույսը դնենք Նրա վրա և վստահ եղեք, որ այդ ժամանակ Աստված մեզ չի պատասխանի, թե՝ *«Իսկ դու, ով մարդ, մի՞թե կորցրել ես քո տեսողությունը»,* այլ կասի, *«Ազնիվ ծառա, քանի որ դու փոքրի մեջ հավատարիմ եղար, իշխիր տասը քաղաքների վրա ու վայելիր Աստծու բոլոր բարիքները և փառք տուր Նրան» (Ղուկ· 19:17):* Ամեն:

ԱՎԵՏԱՐԱՆԻ ՈՍԿԵ ՕՐԵՆՔԸ

«Այն ամենը, ինչ կկամենաք, որ մարդիկ ձեզ անեն, այդպես և դո'ւք արեք նրանց…» (Մատթ.7:12):

Այս խոսքը ես վերցրել եմ Մատթէոս Ավետարանչի 7-րդ գլխի 12 համարից: Ի՞նչ ճանապարհ է ցույց տալիս մեզ մեր Տերը այս գեղեցիկ և ուսանելի պատգամով: Փորձենք կամաց-կամաց քանդել այն կծիկը, որը թաքնված է այս խրատում:

Ինչպես կարդում ենք Մատթեոսի ավետարանի 5-րդ գլխում, մեր Տերը Իր աստվածային ճշմարտությունները քարոզեց ներկաներին Լեռան վրա: Ինը երանիների շարքը, որ Հիսուս սովորեցրեց, շատ ուսանելի էին, հիշենք մի քանիսը. *«Երանի հոգով աղքատներին, որովհետև նրանցն է երկնքի արքայությունը»: «Երանի սգավորներին, որովհետև նրանք պիտի մխիթարվեն» (Մատթ. 5:3-8)* և այլն, հույս և հավատ ներշնչեցին ներկաներին ու կարծես հոգեպես նետահարեցին նրանց սրտերը ու նրանցից շատերը իսկույն որոշեցին հետևել Նազովրեցի Վարդապետի ուսուցումներին, որովհետև Նա այս աշխարհի բազմապիսի տառապանքների և չարչարանքների դիմաց խոս-տանում էր երանավետ մի կյանք Աստծու ներկայության՝ հանդերձյալ կյանքում: Հիսուս տեսնելով այս ծարավ ժողովրդի պատրաստակամությունը, մեծապես քաջալերված՝ ինը երանիներից հետո, նրանց տվեց գործնական պատվերներ, որպեսզի դրանք կարողանան գործադրել իրենց առօրյա կյանքում ու ապա հայտարարեց Ավետարանի ոսկե օրենքը. *«Այն ամենը ինչ կկամենաք որ մարդիկ ձեզ անեն, այդպես և դո՛ւք արեք նրանց, որովհետև այդ իսկ են Օրենքն ու մարգարեները»*:

Բոլոր ժողովուրդների կյանքում բարոյականի ըմբռնման ու գործադրման եղանակը մեծապես ազդել է նրանց պատմության ապագայի կառուցման վրա: Կայ-

սրություններ իրենց զարգացման ու բարգավաճման գագաթնակետին էին հասել, երբ կարողացել էին բարձր պահել իրենց քաղաքացիների և ենթակաների բարոյական կերպարը, այսինքն՝ ավելի պարզ ասած ընտանեկան սրբությունը, արդարությունը, հոգևոր կյանքը և այլն, արժեքներ, որոնք բարձր կարող էին պահել կայսրության ու տվյալ ժողովրդի բարոյականը և հավիտյանս դարձել նրանց ապագա կյանքի ամուր պատվանդանը, ավելին, դա նշանակում էր նրանց ապագա տունը կառուցել ամուր ժայռի վրա: Իսկ եթե դրան հակառակ նույն այդ կայսրության կամ տվյալ ժողովրդի բնակիչները, դատարկվելով վերևում իմ հիշած բարոյական արժեքներից, գիշեր ցերեկ իրենց ժամանակն անցկացնում էին ընկնելով հաճույքների ետևից, զբաղվում էին անառակությամբ, ստախոսությամբ և խաբեբայությամբ, մի խոսքով ապրում էին անհոգ, անտարբեր ու անարդար մի կյանքով, պատմությունը ցույց է տվել, որ դա՛ է եղել նրանց քայքայման ու կործանման պատճառը:

Եկեք թարմացնենք մեր հիշողությունը. ո՞ւր են այսօր իրենց ժամանակաշրջանի ամենահզոր և բարձրագույն մշակույթ ունեցող՝ Բաբելացիների, Պարսիկների, Ասորեստանցիների, Եգիպտացիների, Հռոմայեցիների կայսրությունները: Պատմությունը ցույց տվեց, որ նրանք բոլորն էլ քայքայվեցին ու կործանվեցին, որովհետև բարոյապես մեռան:

Ուրեմն, կարելի է վստահ ասել, որ բարոյականությունը հանդիսանում է ազգերի գոյատևման հիմքը:

Ավետարանից մեջբերված այս ոսկե օրենքն իր մեջ մեծ իմաստ ունի, որովհետև, երբ մարդ միայն իր անձի մասին է մտածում և սպասում, որ բոլորն իրեն գովաբանեն ու փառաբանեն, այդպիսին հիվանդ է:

Դժբախտաբար այսօր աշխարհում աճող երեվույթներից մեկը ինքն իր մասին մտածելու հոգեվիճակն է:

Միշտ ես, ուրիշն ինձ համար կարևոր չէ:

Ահա մի մտածելակերպ, որը պարզ բառով կոչվում է *անձնասիրություն:* Մեր Տերը՝ Հիսուս Քրիստոս, ասում է. *«Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում ձեզ,… ով սիրում է իր անձը, կկորցնի այն, իսկ ով այս աշխարհում իր անձն ատում է, այն կպահի հավիտենական կյանքի համար» (Հովհ. 12:24-25):*

Շատերն այն կարծիքին են, որ բարձր դիրքի վրա գտնվող մարդիկ բոլորն էլ կրթված են լինում: Սխալ մտածում է: Ռուս ակադեմիկոս Դիմիտրի Լիխաչովը, որը բացառիկ գիտելիքներով օժտված գիտնական էր, ռուսական հեռուստատեսությամբ իր ելույթներից մեկում ասում է. *«Ժլատը կարող է ձևանալ առատաձեռն, տգեղը՝ գեղեցիկ և այլն: Բայց ներքին կուլտուրայից զուրկ մարդը երբեք չի կարող ձևանալ կուլտուրական: Դա Աստվածատուր է»:*

Ովքեր, որ հետևել են Հիսուսի այս ոսկե օրենքին՝ անհատներ թե ընկերություններ, բուժվել են հոգեկան և մտային շատ ու շատ հիվանդություններից:

Ապրում ենք գեր զարգացած, խառնաշփոթ մի դարում և դժբախտաբար կան մարդիկ, որոնք, որպեսզի չկատարեն Հիսուսի այս ոսկե օրենքը, առանձնանում են, քաշվում իրենց պատյանի մեջ, ապրում են մեկուսացված մի կյանք, վախենալով ուրիշների ընկերությունից, հեռանում են բարեկամների շրջապատից: Հարց է առաջանում, *«Ինչո՞ւ, ի՞նչն է պատճառը»:* Պատասխանը ավելի քան պարզ է, որովհետև նրանք նախանձում են իրենց նմանին, չեն ուզում մի լավ բան անել և իրենց ստորաց-

ված ու նվաստացած են զգում, երբ տեսնում են նրա հաջողությունները:

Ուստի, մեր Փրկիչը՝ Հիսուս, լավ հասկանալով վերևում իմ հիշած ուսանողի և նրա պես մարդկանց, իրապես գիտական մի լուծում է տալիս այս հարցին, Իր Լեռան Քարոզում դրական խրատների շարքում պատգամելով նաև Իր ոսկե օրենքը. *«Այն ամենը ինչ կկամենաք որ մարդիկ ձեզ անեն, այդպես և դո՛ւք արեք նրանց...»:*

Եթե հոգեբանորեն մոտենանք մարդկության կյանքին, ապա կարող ենք ասել, թե մարդը ընդհանրապես ավելի շատ տրամադրված է գործադրելու *«մի՛ արա»* ժխտական օրենքը, քան թե *«արա»-ի* դրական ձևը, այլ խոսքով շատ ավելի հեշտ է «*մի բան չանել»,* քան թե՝ *«մի բան անել»:* Երեխաների պարագային սա շատ ավելի շեշտված է: Ինչքան ասում ես *«մի՛ արա»,* նա կար-ծես ավելի շատ է նույն բանը անում, քանի որ ինչպես ժողովուրդն է ասում *«արգելված պտուղը ավելի համով է»:*

Այսօր, դժբախտաբար, մեր սպասվածից ավելի է թիվը այն քրիստոնյաների, որոնք Հիսուսի այս ոսկե օրենքը չեն գործածում իրենց կյանքում. Քարոզում են, խրատում, սովորեցնում, ցույց են տալիս դրա ճանապարհը, բայց դժբախտաբար իրենք չեն կատարում: Եթե հիշում եք, Հիսուսի ժամանակ նույնը անում էին նաև փարիսեցիները, որի համար էլ մեր Տերը քննադատեց նրանց կեղծավորությունը, ասելով. *«Վայ ձեզ կեղծավորներիդ, օրենսգետներիդ և փարիսեցիներիդ, որ բաժակի ու պնակի դուրսը մաքրում եք, մինչ ներսից նրանք լի են ձեր գողությամբ և անժուժկալությամբ: Կույր փարիսեցի, նախ մաքրի՛ր բաժակի և պնակի ներսը, որպեսզի դուրսն էլ մաքուր լինի» (Մատթ. 23:25-26):*

Եթե մարդիկ իրապես տրամադրված լինեն հետևվելու մեր Տիրոջ դրական ուսուցումներին, խրատներին և

մանավանդ այս ոսկե օրենքին, նրանց սրտերը կլցվեն Հիսուսի սիրով և այն նրանց կմղի անկեղծ սրտով սիրելու, ներելու և օգնելու իրենց նմաններին: Ահա այդ ժամանակ մարդու սրտում կմեռնի *«ես»-ը* և բոլորս ուրախությամբ ու ցնծությամբ կդիմավորենք մի նոր մարդու, կյանքի հանդեպ լցված նոր ծրագրերով, նոր մտահղացումներով և բարոյական մեծ ուժով ու մաքրությամբ:

Պատկերացնում եք, եթե այսպիսի մեծ ուժով և քրիստոնյայի պարտականության գիտակցությամբ օժտված մարդկանցով լցված լինի աշխարհը՝ ինչ երանություն, կունենանք դրախտային կյանք, նույնիսկ երազել չի կարելի: Բայց դժբախտաբար իրականությունն այլ է: Ճանապարհը բաց է բոլորիս առաջ կատարելու Ավետարանի ոսկե օրենքը: Փորձեք այսօրվանից, ինչո՞ւ չէ հենց այս պահից, ու միացեք ձեզ նման բազմահազար քրիստոնյաներին և երբ մտնեք աշխարհային կյանքի մեջ, հոգսերի ծանրության տակ, հիշեք ու հետևեք Հիսուսի հրաշալի պատգամին և իրագործեք այն, կտեսնեք, թե ինչքան թեթև, հանգիստ ու խաղաղ ձևով պիտի շարունակեք ձեր կյանքը: Ամեն:

ՆԵՐԵԼՈՒ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Ղուկասի Ավետարանի 17-րդ գլխի 4-րդ համարում Հիսուս ասում է. *«Եթե եղբայրդ մեղանչի, սաստի՛ր նրան և եթե զղջա, ների՛ր նրան; Եվ եթե յոթն անգամ մեղանչի քո դեմ և յոթն անգամ դառնա քեզ և ասի՝ զղջում եմ, ների՛ր նրան» (Ղուկ. 17:4):*

Եղբայր ասելով այստեղ չպիտի հասկանանք միայն նույն մորից ծնված զավակներին, այլ բոլոր քրիստոնյաներին, որոնք եղբայր են իրար հետ Հիսուսի միջոցով:

Հիսուսի այս խոսքում կարող ենք գտնել երկու պարտականություններ, առաջինը, այն է, որ մեզանից յուրաքանչյուրին այս կյանքում տրված է *հսկիչ դառնալու պաշտոնը*՝ հանդիմանելու կամ ուղղելու մեր եղբորը կամ ընկերոջը՝ իր կատարած սխալի համար;

Երկրորդը՝ *ներողամտությունն է:* Երբ տեսնում ենք մեր եղբոր կամ ընկերոջ զղջումը կամ սխալը ընդունելու պատրաստակամությունը, պետք է ներենք նրան, որպեսզի նրա մեջ վերահաստատվի Քրիստոսի սերն ու խաղաղությունը:

Ներողամտության ամենապայծառ օրինակը տվեց մեր Տերը՝ Հիսուս, երբ խաչափայտի վրա Իր մահվան վերջին պահին խնդրեց Հորը, որ ների Իրեն չարչարողներին ու խաչողներին. *«Հա՛յր, ների՛ դրանց, որովհետև չգիտեն, թե ինչ են անում« (Ղուկ. 23:34):*

Հիսուս մեզանից պահանջում է կատարել Իր պատգամը և այն դարձնել մեր կյանքի ապրելու ձևը: Պատկերացրեք, եթե մեր հայրերն ու մայրերը իրենց զավակների հանդեպ ներողամիտ և համբերող չլինեին, ի՞նչ պիտի լիներ ընտանիքի վիճակը:

Զղջումն ու ապաշխարությունը ներելու պայմաններն են: Բայց զղջալուց հետո շատ հնարավոր է, որ նորից մեղանչենք: Կրկին մեղանչելուց հետո նոր զղջումը կարո՞ղ է արդյոք առաջին զղջումի պես ընդունելի լինել և ներման արժանանալ: Ահա մի հարց, որը հուզում էր նաև առաքյալներին: Այդ պատճառով Պետրոս առաքյալը, որը ամենահամարձակն էր, մոտենում է Հիսուսին և խնդրում պարզել այս հարցը. «*Տե՛ր, քանի՞ անգամ, եթե եղբայրս իմ դեմ մեղանչի, պետք է ներեմ նրան. մինչև յո՞թն անգամ»:* Հիսուս պատասխանում է. *«Քեզ չեմ ասում, թե մինչև յոթն անգամ, այլ մինչև յոթանասուն անգամ յոթը» (Մատթ. 18:21-22):*

Կյանքը պայքար է, մի՛ հուսահատվեք և մի՛ ընկրճվեք:

Աստված մոռանում է բոլոր հին մեղքերը, եթե մեղավոր մարդը ղզջում է իր արածների համար: Շատ հաճախ մարդիկ հարցը հետևյալ կերպ են ձևակերպում. *«Եթե Աստված ներող է, ինչո՞ւ է պատժում»:* Բնական մարդկային մտածում է, սակայն այդպիսիները պետք է հասկանան, որ ամեն մեղք հատուցում է պահանջում: Եթե երեխան բաժակը կոտրում է, ծնողը սկզբում բարկանում է, սակայն դա մի պահ, հետո գրկում, համբուրում է նրան ու ներում, սակայն ո՞վ է վճարում կոտրած բաժակի համար, անշուշտ, միայն ծնողը: Ներումը իր գինն ունի: Եվ Աստված այդ գինը վճարեց Իր Միածին Որդու՝ խաչի վրա տառապալից մահով:

Ցավոք, իբրև մարդիկ ներման այդ շնորհքը պակասում է մեր մեջ: Փոխանակ մտածենք այդ պակասը լրացնելու մասին, բոլորս մի-մի դատավոր դարձած, այնպիսի ատելությամբ ենք լցված իրար նկատմամբ և այնպիսի դատեր ենք տեսնում, որ նույնիսկ անհավատ մարդկանց նախանձը կշարժեր:

Հետաքրքիր է, թե մենք ինքներս կարող ենք այս հարցին պատասխանել. «Աստծու համար ո՞րն է ամենաթանկագին բանը»: Վստահ եմ, որ ամեն մեկդ էլ ձեր կարծիքը ունեք այս հարցի մասին. ոմանք օրինա-կի համար կարող են ասել՝ Զոհողությունը , ուրիշներ՝ Սերը հավատը, անձնազոհությունը , հայրենասիրությունը կամ եկեղեցասիրությունը և այլն:

Հիմա կարդացե՛ք այս պատմությունը և կտեսնեք, թե՝ «Աստծու համար ո՞րն է ամենաթանկագին բանը» ու հուսով եմ Դուք էլ կունենաք Ձեր կարծիքը այս մասին:

Մի օր Աստված հրեշտակին ուղարկում է աշխարհ բերելու ամենաթանկագին բանը: Հրեշտակը շրջում է ամենուր, ուշադիր հետևում ամեն ինչի ու տեսնում է, որ Արցախյան պատերազմն է և ազատամատիկը, որը կռվում էր հայրենիքը պաշտպանելու և ազատագրելու համար, թշնամու արձակած գնդակից մահացու հարված է ստանում և նրա սրտից արյունը շատրվանի պես դուրս է ցայտում: Տեսնելով ազատամարտիկի այս զոհողությունը իր հայրենիքի համար, հրեշտակը անմի-ջապես վերցնում է այդ առաջին արյունը ու տանում Աստծուն:

- Բերեցի՞ր,- հարցնում է Աստված հրեշտակին:

- Այո՛, աշխարհի ամենաթանկագին բանը այս արյունն է, քանի որ ազատամարտիկը իր կյանքը զոհեց եւ հայրենիքի համար իր արյունը թափեց:

- Ճիշտ ես,- ասում է Աստված,- դա շատ կարևոր է, սակայն ամենաթանկագինը չէ:

Հրեշտակը գնում է և ուշադիր հետևում աշխարհի անցուդարձին: Տեսնում է հիվանդանոցում մի հիվանդ բժշկի, որը տարիներ շարունակ անձնազոհ կերպով բուժել է հարյուրավոր հիվանդների, ջանք չի խնայել, որպեսզի նրանց փրկի, զանազան վարակիչ հիվանդություններով տառապող հիվանդներին էլ նույնիսկ բուժել է,

սակայն դժբախտաբար վերջ ի վերջո այդ վարակիչ հիվանդություններից մեկով նա էլ է վարակվում և այդ պահին մահվան վիճակում է լինում: Հրեշտակը սպասում է ու, երբ բժիշկը իր վերջին շունչն է տալիս, նա վերցնում է այն ու տանում Աստծուն:

Աստված գնահատում է հրեշտակի բերածը, բժշկի անձնազոհությունը, սակայն ասում է, որ դա ամենաթանկագին բանը չէ:

Հրեշտակը իջնելով երկիր տեսնում է մի երիտասարդ ոճրագործի, որը ատրճանակը ձեռքին վազքով մոտենում մի փոքրիկ տանը: Հետաքրքրությունից դրդված հետևում է նրան: Երիտասարդը մոտենում է տանը ու նայում պատուհանից: Տեսնում է մայրը իր երեխայի հետ ծունկի եկած աղոթում է: Այդ պահին հանկարծ նա հիշում է իր անցյալը, իր մանկությունը, երբ իր մայրը ճիշտ այս մոր նման իր հետ ծունկի էր գալիս ու սովորեցնում միասին աղոթել: Ու նրա աչքերից գողման արցունքներ են գալիս: Հրեշտակը անմիջապես վերցնում է այդ արցունքը ու տանում Աստծուն:

Եկա՞ր,- հարցնում է Աստված հրեշտակին, -Բերեցի՞ր:

Այո՛, Տեր Աստված, բերեցի մի ոճրագործ, ավազակ երիտասարդի գողման արցունքը: Ու պատմում է, թե ոճրագործ երիտասարդը ինչպե՞ս գողաց ու ապաշխարեց:

Եվ Աստված ընդունում է աշխարհի ամենաթանկագին բանը՝ մի մեղավորի գողումն ու ապաշխարությունը, քանի որ Նա այնքան բարի է ու լի անսահման սիրով, որ մինչև վերջին րոպեն հնարավորություն է տալիս մեղավոր մարդուն գողալու, ապաշխարելու ու ներում ստանալու, ինչպես եղավ ոճրագործ երիտասարդի պարագային:

Ուրեմն՝ «Աստծու համար ամենաթանկագին բանը աշխարհում մեղավոր մարդու զղջումն ու ապաշխարությունն է»:

Եկեք ներե'նք միմյանց, իսկ այն մարդու պատիժը, որը մեղանչել է մեր դեմ, գոնե մեզ այդպես է թվում, թողնենք Աստծու դատաստանին և հիշենք Նրա խոսքը, թե՝ *«Իմն է վրեժխնդրությունը, և ես կհատուցեմ» (Հռովմ. 12:19):*

Մի' սպասեք խաղաղություն այնտեղ, ուր բացակայում է ներելու ոգին:

Մեղքը մի սև ամպ է, որը ստվերի մեջ է պահում մեր աչքերը և Աստծուն հեռացնում մեր տեսողությունից:

Աստված թողություն տալով մեզ, Իր Թագավորությունն է հաստատում մեր մեջ: Նա ներում է մեզ երկնքից, իսկ մենք, երկրի վրա ապրելով, պարտավոր ենք ներել մեր նմաններին: Ներման չափանիշը սերն է: Աստված սեր լինելով, անհունորեն ներում է:

Ինչո՞ւ չներենք մեր եղբորը, մի՞թե մենք Աստծուց ավելի մեծ ենք: Նա միշտ պատրաստ է մեր մեղքերը ներելու, երբ զղջանք ու ապաշխարենք, ապա ինչքան ավելիով մեղանչական մարդը պիտի կարողանա ներել իր եղբորը» *«Եթե դուք մարդկանց ներեք իրենց հանցանքները, ձեր երկնավոր Հայրն էլ ձեզ կների: Իսկ եթե դուք մարդկանց չներեք իրենց հանցանքները, ձեր Հայրն էլ ձեզ չի ների ձեր հանցանքները» (Մատթ. 6:14-15):*

Հիսուս խաչի վրա Իր Հորը խնդրեց, որ ների Իրեն չարչարողներին, մենք էլ ներենք միմյանց և ասենք. *«Խաղաղություն բոլորին»*: Ամեն:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	էջ
Երկու խոսք	5
Վազգեն Վեհափառ Խոսք գնահատանքի	6
Լույսի Սուրբ Խորանը (Սբ· էջմիածնի մասին)	8
Աստծու մեծությունը	13
Աստծու դրամապանակի՞ց ես գողացել	18
Բարի գործի առաքելությունը	23
Բարիքից չարիք կլինի՞	29
Հայր, ներիր դրանց···	35
Կյանքի իմաստը	38
Հրեա օրենսգետի իմաստությունը	44
Ինչպե՞ս հաղթել չարին	49
Ինչո՞ւ չենք սիրում խրատը	57
Մարդու պատկերը	62
Մտածիր և գործիր	68
Մի տրտնջա, այլ հույս ունեցիր	73
Գեղեցկության գաղտնիքը	77
Մարմինն ու աշխարհը	79

Նոր Տարի – 2013 85
Հոգևոր փորձառություն 91
Աշխարհը դատելու մասին 96
Առողջության հարստությունը 100
Տեր, ավելացրու մեր հավատը 106
Չարհամարհենք միմյանց 111
Գերգեսացի դիվահարը 114
Հին ու նոր սերունդի համաձայնությունը 121
Հոգու ծարավը 125
Ի՞նչ է օրենքը 132
ՃՇՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԲԱՆԱԼԻՆ 139
Մարգարեի պատիվը 143
Մարդու կոչումը 149
Նեղությունները անհրաժե՞շտ են 153
Ուշացած խոստովանություն 158
Եղիա մարգարեի տոնը 161
Ավետարանի ոսկե օրենքը 165
Ներելու կարևորությունը 170
Բովանդակություն 175



ԱՐԺԱՆԱՇՆՈՐՀ ՏԵՐ ՀՈՎՍԵՓ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ՀԱԿՈԲՅԱՆ

Արժանաշնորհ Տեր Հովսեփ Ավագ Քահանա Հակոբյանը ծնվել է Հոկտեմբերի 7-ին, 1950, Էջմիածին քաղաքում, Հայաստան:

1960-62 թվականներին հաճախել է Էջմիածին քաղաքի Սուրբ Աստվածածին եկեղեցին:

1962-ի Սեպտեմբերին ընդունվել է Սուրբ Էջմիածնի Հոգևոր Ճեմարան:

1967-ին ձեռամբ Մայր Տաճարի Լուսարարապետ՝ Գերշ· Տ· Հայկազուն Արքեպս· Աբրահամյանի ձեռնադրվել է Սարկավագ:

1968-ին ավարտել է Հոգևոր Ճեմարանը և նույն տարվա Հունիս ամսին նշանակվել Կաթողիկոսարանի Քարտուղար:

1974-ի Փետրվարի 16-ին ամուսնացել է Մերի Մանվելյանի հետ:

1974-ի Դեկտեմբերի 22-ին Մայր Աթոռում ձեռնադրվում է ամուսնացյալ Քահանա և 1975-ի Մարտին նշանակվում Էջմիածին քաղաքի Սբ· Հռիփսիմե վանքում իբրև ծիսակատար, միաժամանակ շարունակելով Կաթողիկոսարանի Քարտուղարի պաշտոնը:

1977-ին Տեր Հոր ընտանիքը բախտավորվում է արու զավակով, որին ի հիշատակ իր վաղամեռիկ եղբոր՝ անվանակոչում են Խաչատուր:

1978-ի Մայիսին իբրև Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ներկայացուցիչ, Տեր Հայրը մի Վարդապետի հետ մասնակցում է Հյուսիսային Ամերիկայի Արևելյան Թեմի Հոգևորականաց Համագումարին:

Ամերիկայից վերադարձին շարունակում է իր ծառայությունը Մայր Տաճարում և նույն թվականի Սեպտեմբեր ամսից նշանակվում Էջմիածին քաղաքի Սբ· Աստվածածին եկեղեցու պատասխանատու, ապա՝ Վանահայր:

1979-1993 թվականներին ծավալել է թե շինարարական և թե հոգևոր լայն գործունեություն, պատշաճ մակարդակի հասցնելով եկեղեցու առաքելությունը: Այդ թվականներին Երջանկահիշատակ Վազգեն Վեհափառի հանձնարարությամբ ստեղծում է նախապատրաստական դպրոց բաղկացած 9-14 տարեկան փոքրիկներից ու պատանիներից: Դպրոցի նպատակն էր պատրաստել եկեղեցական արարողություններին որոշ չափով գիտակ պատանիներ Հոգևոր Ճեմարանների համար:

Այդ փոքրիկներից և պատանիներից շատերը այսօր արդեն իսկ ձեռնադրյալ հոգևորականներ են կուսակրոն կամ ամուսնացյալ և ծառայում են Հայաստանյայց Առաքելական եկեղեցուն՝ ի Հայաստան և ի Սփյուռս աշխարհի:

1994-ի Դեկտեմբերին Տեր Հայրը ընտանյոք տեղափոխվել է Ամերիկայի Միացյալ Նահանգներ և 1995-ի Հուլիս ամսից մինչև այսօր շարունակում է իր հոգևոր ծառայությունը Հյուսիսային Ամերիկայի Արևմտյան Թեմում՝ զբաղեցնելով զանազան պաշտոններ: